



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 109 2019

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 18.02.2019թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Շավաղը՝ 4,75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազությունում օտարերկրյա փորձագետների հետ քննարկվել են անցումային արդարադատության իրականացմանն առնչվող հարցեր..... 3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է «Միասին ընդդեմ կոռուպցիայի» երիտասարդական միջազգային մրցույթի հայաստանյան մասնակիցներին..... 4

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Դավթյան Քրեական գործերով իրավական օգնության բնագավառում առկա որոշ հիմնախնդիրների շուրջ..... 7
Զարուհի Հարությունյան Կոռուպցիոն վարքագծի նախադեպը՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ 9
Լեոնիդ Նահապետյան Զինվորական հանցագործություն. հասկացությունը, էությունը և տեսակները 13
Հայկ Կեսոյան Անկախ հակակոռուպցիոն (ունիվերսալ) մարմնի ստեղծման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում 17
Արայիկ Ասլանյան Առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը (ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդված) 24

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Ղուկասյան, Անի Թերզյան, Գոհար Մանուկյան ՀՀ-ում կին դատապարտյալների սոցիալ-հոգեբանական որոշ առանձնահատկությունների պարզաբանման հիմնախնդիրները (հետազոտության արդյունքներ) 30

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Թամարա Շաքարյան, Իննա Ներսեսյան Վարչական ակտի հարկադիր կատարման արդի հիմնախնդիրները 36
Аршак Арутюнян, Карен Конджакулян Юридическое лицо и вина: вопросы соотношения практики и теории через призму ответственности..... 43

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անդրանիկ Գևորգյան Ազգային անվտանգության տեսության հիմնական հասկացությունների վերաիմաստավորման առաջարկներ պետականագիտության և հայաստանյան իրողությունների դիրքերից 47

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արմեն Կարեյան, Անուշ Մովսիսյան Խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացման կարգն ու առանձնահատկությունները 53

ՀՌՈՍԵԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ

Աննա Հակոբյան Պրետորական իրավունքի ազդեցությունը հռոմեական մասնավոր իրավունքի զարգացման վրա 59

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 64

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները..... 76

ՀՀ ՎԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱԾ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՅԵՐ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի և «Բաց հասարակության հիմնադրամներ (ԲՀՀ)-Արդարադատության նախաձեռնության» ներկայացուցիչներին:



Հանդիպման ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարի, երկրից դուրս բերված ակտիվների վերադարձման հարցերով, անցումային արդարադատության մեխանիզմների միջազգային փորձին, այդ ոլորտներում քրեական քաղաքականության շրջանակներում հնարավոր համագործակցությանն առնչվող խնդիրներ:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը ներկայացրել է Հայաստանում արձանագրված կոռուպցիայի դեմ պայքարի աննախադեպ արդյունքները՝ դրանում կարևորելով կոռուպցիոն բնույթի չարաշահումների վերաբերյալ իրենց հայտնի տեղեկատվությունը տրամադրելու, հնարավոր հանցագործությունները բացահայտելու հարցում օժանդակելու հանրության աննախադեպ պատրաստակամությունը:

Ըստ Արթուր Դավթյանի՝ ապօրինի հարըստացման, բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի ու եկամուտների հայտարարագրման, ազդարարների ինստիտուտի ներդրման ուղղությամբ Հայաստանում իրականաց-

վել են ինստիտուտից նալ կարևորագույն բարեփոխումներ: Սակայն հակակոռուպցիոն պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար իրավապահ մարմինների հիմնական մարտահրավերներից է դառնում պետությանը պատճառված վնասների լիարժեք բացահայտման, հատկապես՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները բանկային փոխանցումների տարատեսակ սխեմաների գործադրմամբ երկրից հանելու, օֆշորային գուտիներ տեղափոխելու, նախքան ապօրինի հարստացման օրենսդրության ընդունումը պաշտոնատար անձանց ձեռք բերած գույքի և ֆինանսական միջոցների ծագման հանգամանքների բացահայտման և վերադարձման արդյունավետ, որոշ դեպքերում նաև ոչ ստանդարտ մեխանիզմներ գտնելը: Սակայն, ըստ Արթուր Դավթյանի՝ սկզբունքային է, որպեսզի գտնվեն այնպիսի լուծումներ, որոնք այդ ճանապարհին թույլ կտան չտոնահարել մարդու հիմնարար իրավունքները, չխախտել Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային իրավա-



կան պարտավորությունները, իսկ դրանից բխող գործիքակազմի կիրառումը երբևէ իրավաչափության հետ կապված կասկածներ չի հարուցի:

ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է նշված ուղղություններով գործադրված անցումային արդարադատության եղանակների միջ-

ազգային փորձի՝ առավել երկարաժամկետ կտրվածքով արդյունավետության ուսումնասիրությունը:

Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի և «Բաց հասարակության հիմնադրամներ (ԲՀՀ)-Արդարադատության նախաձեռնության» փորձագետները ներկայացրել են առանձին երկրների հաջողված օրինակներ՝ նշելով նաև հնարավոր ռիսկերի մասին: Նրանց կողմից պատրաստակամություն է

հայտնվել անհրաժեշտության դեպքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից նշված առաջնահերթությունների, բարձրացված խնդիրների շրջանակում ցուցաբերել փորձագիտական աջակցություն, ինչպես նաև տրամադրել համապարփակ տեղեկատվություն անցումային արդարադատության իրականացման միջազգային փորձի վերաբերյալ: Վերջինիս շուրջ ձեռք են բերվել պայմանավորվածություններ:

ՀՀ ՂԵՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է «ՄԻԱՄԻՆ ԸՆԴԴԵՄ ԿՈՌՈՒՊՉԻԱՅԻ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՉՈՒՅԹԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԱՊՀ Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի անդամ 6 երկրի շրջանակում անցկացված «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով հակակոռուպցիոն սոցիալական գովազդի երիտասարդական միջազգային մրցույթի՝ Հայաստանի մասնակիցներին և մրցանակակիրներին:

Մրցույթը, որի շրջանակում ԱՊՀ Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի անդամ երկրների 14-ից մինչև 35 տարեկան քաղաքացիներին, երիտասարդական ստեղծագործական խմբերին առաջարկվել էր ներկայացնել հակակոռուպցիոն սոցիալական գովազդի պաստառներ և տեսահոլովակներ, նպատակ ուներ տարածելու և ամրապնդելու կոռուպցիան իբրև երևույթ մերժելու, դրա դեմ անզիջում և միասնական պայքար մղելու գաղափարները:

Մրցույթն Այն անցկացվել է երկու անվանակարգում՝ «Լավագույն պաստառ» և «Լավագույն տեսահոլովակ», որոնց համատեքստում ներկայացված աշխատանքները պետք է արտացոլեին հակակոռուպցիոն պայքարի ժամանակակից մեխանիզմների, այդ պայքարում միջազգային համագործակցության նշանակության, ինչպես նաև ցանկացած ոլորտում կոռուպցիայի՝ իբրև չարիքի վերաբերյալ հեղինակների յուրօրինակ պատկերացումներն ու գաղափարները:

Սահմանված ժամկետներում անդամ երկրներից ստացվել է ընդհանուր առմամբ 1512 տեսահոլովակ և 7821 պաստառ: Հայաստանից մրցույթին մասնակցել է մի քանի բուհի, ուսումնական այլ հաստատությունների 28 ներ-



● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

PROSECUTOR GENERAL'S OFFICE OF THE RA

կայացուցիչ, որոնց կողմից ներկայացվել է 38 աշխատանք՝ 12 տեսահոլովակ և 26 պաստառ:

Առաջին փուլում ազգային ժյուրին յուրաքանչյուր անվանակարգում ընտրել է լավագույն երեքը, որոնցից առաջին մրցանակի արժանացած աշխատանքները ներկայացվել են միջազգային ժյուրիին: Վերջինիս կողմից ընդհանուր մրցույթի արդյունքով Հայաստանում լավագույնը ճանաչված տեսահոլովակի հեղինակ, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի սան Արտյոմ Աղասարյանն արժանացել է 3-րդ պատվավոր մրցանակի:

Երիտասարդների հետ հանդիպմանը ՀՀ գլխավոր դատախազը նրանց շնորհակալություն է հայտնել ակտիվ մասնակցության համար: Նա նշել է, որ մրցույթին ներկայացված տեսահոլովակների և պաստառների քանակը վկայում է ինչպես երիտասարդների կողմից մրցույթի և նրա հիմնական ուղերձների հանդեպ մեծ հետաքրքրության, այնպես էլ նրանց կողմից կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության խորը գիտակցման մասին: Արթուր Դավթյանը հույս է հայտնել, որ այդ գաղափարները նրանց կուղեկցեն ողջ կյանքի ընթացքում, կդառնան կենսակերպ և կօգնեն պետությանը, իրավապահ մարմիններին կոռուպցիան արմատախիլ անելու նրանց դրսևորած հետևողականության, կամքի իրագործման հարցում:

ՀՀ գլխավոր դատախազը նաև շնորհակալություն է հայտնել մրցույթի ազգային ժյուրիում ներգրավված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ծրագրերի ղեկավար Վարուժան Հոկտանյանին և սոցիալական գովազդի ոլորտում մասնագիտացած Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիայի նախագահ Արզուման Հարությունյանին՝ իրենց մասնակցությամբ մրցույթի թափանցիկությունն ու առավել անաչառությունն ապահովելու համար:

Արթուր Դավթյանը մեծապես կարևորել է նաև պատշաճ իրազեկում ապահովելու հարցում ՀՀ գիտության և կրթության նախարարության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի ցուցաբերած աջակցությունը, ինչը մեծապես նպաստել է միջազ-

գային մակարդակով անցկացվող մրցույթին Հայաստանի արժանապատիվ ներկայանալուն:

«Լավագույն տեսահոլովակ» անվանակարգում Հայաստանում առաջին մրցանակի արժանացած Արտյոմ Աղասարյանը նշել է, որ մեծ ոգևորությամբ են ներգրավվել մրցույթին՝ նկա-



տի ունենալով նախաձեռնության նպատակները: Երիտասարդները պատրաստակամություն են հայտնել հետագայում առավել ակտիվ մասնակցել նման միջոցառումներին:

«Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ծրագրերի ղեկավար Վարուժան Հոկտանյանն իր խոսքում նշել է, որ մրցույթին երիտասարդության ներգրավվածությունը չափազանց կարևոր է սոցիալական գովազդի ձևաչափով, այսինքն՝ հանրային լայն շրջանակների համար հասկանալի և ազդեցիկ միջոցներով կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթ ձևավորելու առումով, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր երկրում շարունակում է բարձր մնալ կոռուպցիայի ընկալման համաթիվը:

ՀՀ գլխավոր դատախազը երկու անվանակարգում մրցանակների արժանացած մասնակիցներին պարգևատրել է «ՀՀ դատախազություն» հուշամեդալներով և բոլորին մադալետի հաջողություններ ուսման մեջ, ինչպես նաև քաղաքացիական ակտիվություն և նախաձեռնողականություն հանրային կյանքում:

Ավելի վաղ Արթուր Դավթյանը, ով այս տարի նախագահում էր ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդում, Մոսկվայում մասնակցել է կոռուպցիայի դեմ պայ-

քարի միջազգային օրվա խորհրդի ներքո անցկացվող՝ «Միասին ընդդեմ կոռուպցիայի» թեմայով միջազգային մրցույթի մրցանակակիրների պարգևատրման հանդիսավոր արարողությանը, որտեղ նաև հանդես է եկել ելույթով: «Ազդելով սոցիալական, քաղաքական, տնտեսական անվտանգության վրա՝ կոռուպցիան հանգեցնում է պետական համակարգի դեֆորմացման, խաթարում է պետության հանդեպ քաղաքացիների վստահությունը և խոչընդոտում պետական կառույցների բնականոն գոր-

ծունեությունը»,- իր ելույթում նշել էր Արթուր Դավթյանը՝ հավելելով, որ մրցույթին երիտասարդ մասնակիցների, ուսումնական հաստատությունների, ուսանողական ստեղծագործական խմբերի լայն ներգրավվածությունը վստահություն է ներշնչում, որ ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի անդամ երկրների մատաղ սերունդը կապահովի կոռուպցիայի անզիջում հակազդմանն ուղղված պայքարի շարունակականությունը:



ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԿԱ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գլոբալիզացման պայմաններում միջազգային հանրության առաջ ծագող մարտահրավերների համատեքստում առավել խնդրահարույց են դառնում քրեական գործերով իրավական օգնության բնագավառում գործնականում ծագող մի շարք խնդիրներ՝ տարբեր պետությունների օրենսդրական կարգավորումների հետ կապված:

Հետաքրքրություն ներկայացնող հարցերից է իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցման շրջանակում սեփական քաղաքացիների՝ որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննությունը:

Թեև հարցի կարևորությանը նախկինում անդրադարձել է նաև ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի գիտամեթոդական կենտրոնը, սակայն դրա վերաբերյալ միասնական մոտեցում գոյություն չունի, և նախկինում այդ հարցը խորապես չի ուսումնասիրվել:

Նշված խնդրի կապակցությամբ իրականացված վերլուծությունը վկայում է, որ ԱՊՀ մի շարք անդամ-պետությունների օրենսդրությունը չի խոչընդոտում իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցման շրջանակում սեփական քաղաքացիների՝ որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննությունը:

Այնուամենայնիվ, մի շարք պետություններ, համարելով, որ իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցման շրջանակներում սեփական քաղաքացիների՝ որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննությունը պարունակում է քրեական հետապնդման տարրեր, անհնարին են համարում նմանատիպ հարցումների կատարումը:

Այս դիրքորոշման կողմնակիցների հիմնական փաստարկն այն է, որ անթույլատրելի է իրենց քաղաքացու նկատմամբ քրեական հետապնդման իրավասություն իրականացնելն օ-

տարերկրյա պետության կողմից: Բացի այդ՝ նրանք կարծում են, թե առանց իրենց տարածքում քրեական գործ հարուցելու սեփական քաղաքացուն որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննելը կհանդիսանա սեփական քաղաքացու իրավունքների կոպիտ խախտում, քանի որ նա ենթարկվում է քրեական հետապնդման հայցվող պետության օրենսդրությամբ չնախատեսված կարգով:

Մյուս կողմից՝ հակառակ դիրքորոշման կողմնակիցներն ընդգծում են, որ իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցման շրջանակում սեփական քաղաքացիների՝ որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննելու անթույլատրելիությունը չի համապատասխանում հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության ոգուն և սկզբունքներին:

Կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննություն անցկացնելու՝ պետության պարտավորությունը, քաղաքացիությունից անկախ, բխում է ներպետական օրենսդրության նկատմամբ առավելություններ ունեցող միջազգային մի շարք պայմանագրերի դրույթներից:

Ավելին՝ կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունը ոչ միայն քրեական հետապնդման մարմինների կողմից որոնվող տեղեկատվություն ձեռք բերելու միջոց է, այլ նաև ցուցմունք տալու եղանակով կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանվելու իրավունքն իրականացնելու միջոց:

Համակարծիք լինելով մոտեցմանը, որի համաձայն՝ իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցման շրջանակում որպես կասկածյալ կամ մեղադրյալ սեփական քաղաքացիների հարցաքննությունը, ինչպես նաև վկայի հարցաքննությունը ենթադրյալ հանցագործությանն իր առնչության կապակցությամբ, կարող է դիտարկվել որպես անձանց նկատ-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ, № 109 2019

մամբ քրեական հետապնդման իրականացում և հակասել հայցվող պետության ներպետական օրենսդրության կարգավորումներին, այնուամենայնիվ, հիմնավորված ենք համարում այն պնդումը, որի համաձայն՝ իրեն ներկայացված մեղադրանքի և հարցերի բովանդակությանը ծանոթանալու իրավունքը և դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելը անձի՝ պաշտպանվելու անօտարելի իրավունքի իրականացման իրական հնարավորություն է:

Ընդ որում՝ գործնականում այս հարցը ՀՀ դատախազության կողմից բարձրացնելու և դրա իրավական հիմքերը խորքային ուսումնասիրության ենթարկելու շնորհիվ՝ ԱՊՀ որոշ անդամ-պետությունների իրավասու մարմիններ վերանայել են սեփական քաղաքացիների հարցաքննության անթույլատրելիության վերաբերյալ նախկինում ձևավորված պրակտիկան ու մոտեցումները:

Երկրորդ հարցը վերաբերում է օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ միջնորդություններով ստացված քրեական գործերով հակընդդեմ հարցման իրավունքն ապահովելուն:

Գործնականում այս գործերով ի հայտ են գալիս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ:

Վերոնշյալ գործերով մեղադրյալ են Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տուժողները կամ վկաները, որպես կանոն, գտնվում են հայցող (օտարերկրյա) պետության տարածքում, ինչը գործնականում բարդություններ է ստեղծում մեղադրյալների և

նրանց դեմ ցուցմունք տված տուժողների ու վկաների միջև հակընդդեմ հարցում ապահովելու գործում:

Ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերով նախատեսված է վկաներին կամ տուժողներին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու հնարավորություն:

Սակայն, նույն պայմանագրերում ամրագրված դրույթների համաձայն՝ դատավարության մասնակցի ներկայանալը պետք է ինքնակամ լինի, հետևաբար՝ նրանց բերման ենթարկելու իրավական որևէ հիմք առկա չէ:

Հարցը կարող էր կարգավորվել տեսակոնֆերանսի միջոցով հարցաքննություն անցկացնելու եղանակով, ինչը նախատեսված է «Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությամբ, սակայն ԱՊՀ անդամ ոչ բոլոր պետություններն են միացել տվյալ արձանագրությանը:

Տեսակապի, տեսաձայնագրության և տեխնիկական այլ միջոցների կիրառմամբ դատավարության մասնակիցների հարցաքննություն անցկացնելու հնարավորությունը նախատեսված է նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 2002թ. կոնվենցիայով (այսուհետ՝ Քիշնևի կոնվենցիա):

Ամեն դեպքում՝ ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի նորմերի և կողմերի միջև «բարի կամքի» առկայությունը հնարավորություն կընձեռի ապահովելու տեսակապի միջոցով օտարերկրյա պետություններում գտնվող վկաներին և տուժողներին հարցաքննելու ընթացակարգը:



ԶԱՐՈՒՎՈՒ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման, որակավորման բարձրացման և գիտահետազոտական գործունեության բաժնի պայմանագրային դասախոս

ԿՈՌՈՒՊՅԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԱԽԱԴԵՊՈՒՆՆԵՐԻ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՅԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՐ

Դեռևս հնադարում մարդիկ գիտակցել են կոռուպցիայի վտանգավորությունը և դրա համար սահմանել խիստ պատիժներ:

Ք. ա. 6-րդ դարում ոմն դատավոր Սիսամենս վերցրել է կաշառք դատական գործընթացի կողմերից մեկից և կայացրել է անարդար վճիռ: Պարսից թագավոր Կամբիսն իմացել է կաշառքի մասին, և դատավորին ձերբակալել են ու դաժանորեն պատժել: Թագավորի հրամանով նրանից հանել են իր ամբողջ մաշկը և փակցրել այն բազկաթռոհին, որին նստում էր դատավորը դատավճիռներ կայացնելիս: Մինչդեռ Կամբիսը չբավարարվեց այդքանով: Պատժի երկրորդ մասը նույնպես ահաբեկող էր և ուսուցանող: Կամբիսը դատավոր նշանակեց Սիսամենսի որդուն, ով պետք է նստեր հոր մաշկով պատված բազկաթռոհին և իրականացներ դատավարություն:¹

Բնականաբար, նման պատժից հետո քչերը կհամարձակվեին մոտենալ կաշառքին: Մինչդեռ մեր օրերում հակառակ իրավիճակը կարող է լինել: Հասարակությունը տեսնում է, որ կաշառք վերցնողը, պատժվելու փոխարեն, ձեռք է բերում էլ ավելի բարձր պաշտոններ: Մի դեպքում հասարակությունը տեսնում է այն նախադեպը, որ կոռուպցիոն գործողության համար անձը մաշկահան է լինում, մյուս դեպքում տեսնում է այն նախադեպը, որ անձը «պարզևատրվում է» առավել բարձր պաշտոններով կամ շարունակում է մնալ իր պաշտոնում:

Հետևանքները դառնում են կանխատեսելի:

Ուստի կարծում ենք՝ կոռուպցիոն վարքագծի պատճառ կարող է հանդիսանալ կոռուպցիոն վարքագծի նախադեպը, մասնավորապես՝

- ա) անձի գիտակցականում առկա կոռուպցիոն վարքագծի նախադեպը,
- բ) անձի ենթագիտակցականում առկա կոռուպցիոն վարքագծի նախադեպը,
- գ) անձի կոլեկտիվ անգիտակցականում առկա կոռուպցիոն վարքագծի նախադեպը:

Անձի գիտակցականում առկա կոռուպցիոն նախադեպը կարող է դառնալ կոռուպցիայի պատճառ նմանակման միջոցով:

Օրինակ՝ անձի գիտակցությունը վերլուծության է ենթարկում իր գործընկերոջ կոռուպցիոն փորձը, ում խնդիրները հաջողված լուծում են ստացել կոռուպցիայի շնորհիվ: Նման «դրական» նախադեպը կարող է կոռուպցիոն վարքագծի պատճառ հանդիսանալ:

Հայտնի է, որ անձի ենթագիտակցությանն է պատկանում այնպիսի հասկացություն, ինչպիսին հիշողությունն է: Ստացվում է՝ նման «դրական» նախադեպ կարող է լինել նաև հենց իր՝ անձի, անցած ուղին:

Օրինակ՝ մեկ անգամ դիմելով կոռուպցիայի՝ մարդու մեջ կարող են ձևավորվել խնդիրները հեշտ լուծելու հաջողված փորձ և նախադեպ:

Կարծում ենք նաև, թե մարդու կոլեկտիվ անգիտակցականում առկա կոռուպցիոն նախադեպը կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Նախ՝ հակիրճ ներկայացնենք, թե ինչ է կոլեկտիվ անգիտակցականը:

Եթե անձի անգիտակցականում գտնվում է այն ամենը, ինչ կատարվել է իր հետ ողջ կյանքի ընթացքում, ծննդյան պահից սկսած մինչև մահ, այլ կերպ ասած՝ դա մարդու անձնական կյանքի «արխիվն» է, ապա անգիտակցականում գոյություն ունի իր նախնիների կյան-

¹ Antonio Bernat Vistarini, John T. Cull, Edward John. Vodoklys, ediciones AKAL, 1999, 952p. P. 729. Theatre and Humanism: English Drama in the Sixteenth Century, Kent Cartwright Cambridge University Press, 1999, ISBN 1139425994, 9781139425995, 32 p. P. 104.

քերի փորձի վերաբերյալ նման «արխիվ», որը Կ.Գ. Յունգն անվանել է կոլեկտիվ անգիտակցական:

Կոլեկտիվ անգիտակցականում գտնվում է մարդու նախնիների կյանքի ամփոփումը: Դա առկա է բոլոր մարդկանց մեջ և փոխանցվում է ժառանգաբար: Դա մարդու հոգու ԴՆԹ-ն է, ինչպես որ մարդու մարմինն ունի ԴՆԹ:

Յունգն ասում էր. «Մեր գիտակցությունն ունի պատմություն, ինչպես որ ունի մեր մարմինը»:²

Անհատի մակարդակում կոլեկտիվ անգիտակցականը դրսևորվում է կողմնորոշումներով և տիպիկ վարքագծի օրինաչափություններով, որոնք աննկատ ղեկավարում են անձի կյանքը: Այստեղ կոլեկտիվ անգիտակցականը փոխկապակցված է արխետիպային պատկերների, դրոպապատճառների, բնազդների հետ:³

Կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունը կազմում են արխետիպերը:

Արխետիպն առաջացել է հունական arche՝ սկիզբ և typos՝ պատկեր, բառերից:⁴ Դրանք «ի սկզբանե տիպերն են», կոնկրետ անձի հոգում թողնված «մատնահետքերը», որոնք հնում առավել վառ պատկերներով են արտահայտվել:

Արխետիպերը համամարդկային նախատիպեր են և հանդես են գալիս որպես կոլեկտիվ անգիտակցականի բովանդակություն: Վերջինս փոխանցվում է ժառանգաբար և այն հիմքն է, որի վրա ձևավորվում է մարդու հոգեկանը:

Արդեն ի ծնե ստացված ժառանգությամբ՝ համընդհանուր վարքագծի օրինակները ոչ միայն պարզագույն վարքագծի արձագանքներ են, այլ նաև՝ ընկալում, մտածողություն, երևակայություն: Այն դեպքում, երբ գիտակցությունը չի ընդունում արխետիպերի փորձը, եթե ավանդական փորձի փոխանցումը դառնում է

անհնարին, արխետիպերը կարող են ներխուժել մշակույթի մեջ ամենատարրական և դաժան ձևերով՝ անհատական կամ զանգվածային փսիխոզի, անկարգությունների, պատերազմների և այլի միջոցով:⁵

Արխետիպերն ուղիղ այնքան են, որքան կյանքի տիպիկ իրադրությունները: Այն ժամանակ, երբ հանդիպում է տվյալ արխետիպին համապատասխան իրադրություն, այդ արխետիպն ակտիվանում է և հասնում իրենին՝ ի դեմս գիտակցության և կամքի:⁶

Ուստի մարդը, ծնվելով կոլեկտիվ անգիտակցականով, արդեն իսկ կարող է ունենալ ուրուշակի վերաբերմունք կոռուպցիայի նկատմամբ՝ իր նախնիների փորձից կախված:

Յունգը նշում էր, որ պետք չէ շտապել՝ ասելով, թե ամենից խորհրդավորության բույր է գալիս: Նրա պնդմամբ՝ այստեղ ոչինչ չկա խորհրդավոր, պարզապես դա գիտության նոր ճյուղ է:⁷ Որպեսզի դա մեզ չթվա խորհրդավոր, ներկայացնենք օրինակ արդի կյանքից:

Տասնամյակ առաջ, երբ գտնվում էինք Գերմանիայում, մեզ շատ զարմացրեց այն փաստը, որ քաղաքների երթուղայիններում դժվար կհանդիպեինք երթևեկության հսկիչների: Այն դեպքում, երբ ինչ-որ մեկը ցանկանար չվճարել երթևեկության տոմսի դիմաց, առանց որևէ ջանքեր գործադրելու նա կարող էր դա անել, սակայն դժվար թե գտնվեր մեկը, ով կփորձեր խախտել կարգը: Փորձենք հասկանալ՝ թե որտեղից այդ օրինապահությունը գերմանացիներին: Պատասխաններից մեկը, կարծում ենք, գտնվում է կոլեկտիվ անգիտակցականում. այնտեղ առկա է նախնիների փորձը՝ խստագույնս պահպանելու կարգը, որն առաջացած կարող է լինել այն հանգամանքից, որ ֆաշիստական Գերմանիայում գնդակահարության ձևով պատիժ է սահմանվել երթուղայինում տոմս չվճարելու համար:⁸ Ներկայումս չկա ֆաշիստական

² Долгих А. Миф в аналитической психологии К.Г. Юнга. [Электронный ресурс]: <http://www.psy.crimea.ua/content/view/49/119/>
³ Змановская Е.В. Современный психоанализ: теория и практика. Издательский дом «Питер», 2011. 281 с. С. 66.
⁴ Кондаков И.М. Психология. Иллюстрированный словарь. С-ПБ: Изд-во «Прайм-Еврознак», 2003. 512 с. С. 31.
⁵ Юнг К. Архетип и символ. М., 1991. С. 98. Юнг К.Г. Об архетипах коллективного бессознательного // Вопросы философии. М., 1988. N 1. СС. 133–152.
⁶ Сикевич З., Крокинская О.К., Поссель Ю.А. Социальное бессознательное. Издательский дом «Питер», 2005, 266 с. С. 103.
⁷ Юнг К.Г. Тэвистокские лекции / Исследование процесса индивидуации. Пер. с англ. «Рефлбук», Ваклер», 1998. СС. 45-67. [Электронный ресурс]: http://www.ido.rudn.ru/psychology/psychology_of_person/ch2_2.html
⁸ www.peoples.ru/facts/all/f2561.shtml

Գերմանիան, բայց նախկինում կիրառվող նման խիստ պատժի առկայությունն այնքան է վախեցրել հասարակությանը, որ գաղափարն անցել է կոլեկտիվ անգիտակցական, վերջինս էլ փոխանցվել է սերնդեսերունդ, և ինչի արդյունքներից է նաև ներկայումս գերմանացիների օրինապահությունը:

Եվ հակառակը՝ անօրեն վարքագիծը կարող է դրսևորվել նույն մեխանիզմով. այն ժամանակ, երբ անձի նախնիները դրսևորել են հակաօրինական, մասնավորապես՝ կոռուպցիոն վարքագիծ, որպես կանոն՝ անձի մեջ կամա թե ակամա կարող է ձևավորվել նման վարքագիծ: Այժմ փորձենք դիտարկել, թե, ի տարբերություն գերմանացիների, մեր՝ հայերիս, կոլեկտիվ անգիտակցականում օրինապահության մասով ինչ է ընկած:

Տեսնելով հայերի անցած պատմական ճանապարհը՝ կարող ենք ասել, թե գրեթե միշտ հայ ժողովուրդը գտնվել է օտար տերությունների լծի ներքո՝ մեկ արաբների, մեկ՝ պարթևների, մեկ՝ ռուսների, մեկ՝ թուրքերի, և օտարի լծին, օտարի օրենքներին, կարգ ու կանոնին չենթարկվելը եղել է հայերի համար հերոսություն: Նման մարդիկ համարվել են հերոսներ, նրանք մեծարվել են՝ իրենց այդ վարքագծի համար: Հիշենք, օրինակ, Վարդան Մամիկոնյանին: Գուցե և այդ պատճառով է, որ հայերիս մեջ ոչ օրինապահ՝ կոռուպցիոն վարքագիծն առավել տարածված է և չի համարվում այդքան ամոթալի: Չէ որ մեր կոլեկտիվ անգիտակցականում ընկած է, որ օրենքները խախտելը և չենթարկվելը պետությանը՝ հերոսություն է:

Իհարկե, չմոռանանք նաև այն հանգամանքը, որ մարդը կարող է ինչպես ժառանգել, այնպես էլ չժառանգել ժառանգականության մեջ առկա որոշ հատկանիշներ, ուստի և միանշանակ խոսքը բոլոր հայերին կամ գերմանացիներին չի վերաբերում:

Գիտակցականում, ենթագիտակցականում, անգիտակցականում՝ ի դեմս կոլեկտիվ անգի-

տակցականի, առկա կոռուպցիոն վարքագծի նախադեպը սերտորեն կապված է ավանդույթի՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառի հետ:

Հասարակական հարաբերություններում սովորությանն նորմերն ու ավանդույթները կարևոր դեր ունեն ինչպես ցանկացած հասարակությունում, այնպես էլ յուրաքանչյուր անհատի կյանքում:

Կոռուպցիան, դառնալով ավանդույթ, կդառնա կոռուպցիոն վարքագծի պատճառ, քանի որ կոռուպցիոն վարքագիծը պայմանավորող նորմերն ու ավանդույթները կարող են կոռուպցիան ոչ միայն հանդուրժելի դարձնել, այլև ադապտացնել սոցիալ-մշակութային միջավայրին՝ դարձնելով դրա բաղադրիչներից մեկը, և վերածել հանրույթի հասարակական կյանքի էթնոմշակութային բաղկացուցիչ: Եթե կոռուպցիան ձեռք բերի ավանդույթի բնույթ, ապա այդ հասարակությունում առանց կոնցեպտուալ լրջագույն տրանսֆորմացիաների կոռուպցիայի դեմ պայքար պարզապես հնարավոր չի լինի, քանի որ դառնում է ոչ միայն կառավարման համակարգի, այլև ողջ հասարակական ու էթնոմշակութային համակարգի բնութագրական տարրն ու կենսակերպի բաղկացուցիչը:⁹

Ուստի կոռուպցիան կապված է նաև ազգային մշակույթի տարբեր առանձնահատկությունների հետ, որոնցից մեկն է, օրինակ, նվերներ հանձնելու ավանդույթը:¹⁰

Նախ՝ մշակույթում կաշառքի և շնորհակալ լինելու սահմանները հստակ չեն: Դեռ խորհրդրդային ժամանակաշրջանում ընդունված էր, որ որոշ ծառայությունների դիմաց պետք է շնորհակալություն հայտնել:

Օրինակ՝ կարող էր անվայել համարվել, երբ մարդը բժշկի է այցելում և չի նվիրում կոնֆետի տուփ կամ այլ մի բան: Ընդ որում՝ անձը դա անում է առանց որևէ մեկի ճնշման, միայն, որովհետև այդպես ընդունված է,¹¹ և շատ հա-

⁹ Թադևոսյան Ա. Հետազոտական ծրագրի թեմա՝ կոռուպցիայի բնույթը ՀՀ-ում, դրա հասարակական ընկալումները և ազդեցությունը մարդկային զարգացման վրա, Երևան, 2009, էջ 36-37: [Электронный ресурс]: http://www.crrc.am/hosting/file/_static_content/fellows/corruption/Aghasi_Tadevosyan.pdf
¹⁰ <http://www.ulan-udeeg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 15.
<http://www.ulan-udeeg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 15.
¹¹ <http://www.ulan-ude-eg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 14.
<http://www.ulan-ude-eg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 14.

ճախ դա արվում է, որ հիվանդն առավել վստահ լինի իրեն բուժող բժշկի բարեխիղճ աշխատանքի առումով: Այստեղ արդեն առաջ է գալիս հենց ազգային ավանդույթը՝ բժշկի հետ առնչվելու ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև դրանցից կախված՝ բժշկին վստահելու գործոնը:

Վստահությունն առհասարակ կոռուպցիոն և հակակոռուպցիոն վարքագծում կարևոր դերակատարություն ունի: Մասնավորապես՝ շատ կարևոր է նաև, թե անձը վստահություն ունի կոռուպցիային նկատմամբ, թե ունի անվստահության զգացողություն պետության նկատմամբ:

Այս մասով՝ Սիցիլիայի մաֆիայի դեմ պայքարը քննարկելիս Դիեգո Գամբետան շեշտում է Իտալիայի պետության նկատմամբ վստահության համատարած բացակայության փաստը: Մասնավոր գույքի գործարքների աճ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ պետությունը չունեի նման գործարքները կառավարելու հնարավորություն: Պետությունը չկարողացավ ստեղծել վեճերը լուծելու և մասնավոր գույքի փոխանցումները կառավարելու հուսալի եղանակ: Որպես պետության փոխարինող՝ այդ գործառույթն իր վրա վերցրեց առաջացած մաֆիան:

Գամբետան «վստահություն» բառը գոր-

ծածում է երկու իմաստով: Առաջին՝ նա մատնանշում է պետության գործիմացության և պետության մեջ օրինականության պակասը: Մարդիկ վստահություն չունեն, որ պետությունը վեճերը կլուծի արդար ու արդյունավետ կերպով, և այդ պատճառով այլընտրանք են փնտրում: Այս իմաստով՝ վստահությունն ընդհանուր ոչինչ չունի անձնական սերտ կապերի հետ: Հարաբերությունները կարող են լինել միանգամյա պաշտոնական: Փաստորեն, պետության հանդեպ վստահությունն ավելի մեծ է, երբ պաշտոնյաներն անկողմնակալ և անկողմնապահ են:

Երկրորդ՝ մարդիկ կարող են միմյանց վստահել անձնական սերտ կապերի շնորհիվ, որոնք հիմնված են ազգակցական, գործարար կապերի կամ բարեկամության վրա: Անձը վստահ է, որ իր ընկերն իրեն կօգնի ոչ թե օրենքն արդար կիրառելով, այլ՝ հովանավորություն ապահովելով: Գամբետան ցույց է տալիս, որ եթե վստահությունը չի արդարացվում, ապա երկու դեպքում էլ առաջանում է մասնավոր պաշտպանիչ ծառայության պահանջ, ինչպիսին մաֆիան է:

Լատինամերիկյան ասացվածքն ասում է՝ բարեկամներիս ամեն ինչ, թշնամիներիս՝ ոչինչ, օտարներին՝ օրենքներ:¹²



¹² Սյուզան Ռոուզ-Ակերման, Կաշռվածությունը և պետությունը, պատճառներ, հետևանքներ, բարեփոխում, թարգմանիչներ՝ Ա. Աղաբեկյան, Ա. Գասպարյան, Երևան, Գիտանք, 2004. Էջ 248, 92: Սյուզան Ռոուզ-Ակերման, Կաշռվածությունը և պետությունը, պատճառներ, հետևանքներ, բարեփոխում, թարգմանիչներ՝ Ա. Աղաբեկյան, Ա. Գասպարյան, Երևան, Գիտանք, 2004. Էջ 248, 92:

ԼԵՆՆԻՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Սյունիքի մարզի դատախազության դատախազ,
 ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.
 ՀԱՍՎԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում նշված է. «Չինված ուժերի մարտունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոցը բանակաշինության և զինվորական ծառայության շուրջ հաստատված մթնոլորտի ու մոտեցումների արմատական փոփոխությունն է... Յուրաքանչյուր սպա, ենթասպա և շարքային պետք է առաջնորդվի պետության և ժողովրդի առաջ ունեցած պատմական առաքելության զգացումով»:¹

Կառավարության ծրագրային դրույթը նպատակ ունի նաև իրավախախտումների, առավելապես՝ հանցավորության կանխարգելումը զինված ուժերում:

Չինվորական հանցագործությունների շարքը գետնեղված է ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում, որը կոչվում է «Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ», որը պարունակում է 27 հանցակազմ, որոնք ոտնձգում են միաբնույթ հասարակական հարաբերությունների դեմ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս գլխում նախանշված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են, դրանք քրեական օրենսգրքով պաշտպանվող այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի իրականացման ընթացքում:²

Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների բացահայտումը մարտական կարգապահությունը բարձրացնելու կարևոր նախապայմաններից է: Հետևա-

բար, նախ և առաջ՝ կարևոր է պարզել «զինվորական ծառայություն» եզրույթի հասկացությունը և բովանդակությունը, որն օրենսդրորեն ամրագրված է «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի³ 3-րդ հոդվածում. «1. Չինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է»: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող:

Չինված ուժերում զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վտանգավորության աստիճանն առավել բարձր է, քանի որ դրանք ուղղված են ոչ միայն անմիջական օբյեկտի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի, այլև բանակի մարտունակության և, վերջին հաշվով՝ պետության անվտանգության դեմ:

Ավանդաբար հանցավորությունը, այդ թվում՝ զինվորական հանցավորությունը, դիտվում է որպես հանցագործությունների ամբողջական համակարգ: Միաժամանակ՝ հանցավորության հասկացության և էության բացահայտման շուրջ տարածված են նաև այլ՝ ոչ ավանդական մոտեցումներ. անտրոպոլոգիական (հանցավորությունը մարդու որոշակի հիվանդություն է), թեոլոգիական (հանցավորությունը չարիք է, իսկ հանցավորը՝ այդ չարիքի մարմնավորում), սոցիոլոգիական (հանցագործությունը սոցիալական երևույթ է և հանդես է գալիս որպես շեղված վարքագծի ձև) և այլն:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

¹ Տե՛ս «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Ազգային ժողովի 7 հունիսի 2018 թվականի ԱԺՈ-006-Ն որոշումը//ՀՀՊՏ N 47 (1405) 15.06.2018:
² Մանրամասն տե՛ս՝ Аветисян С. С. Воинские преступления: теория и практика. Ереван, 2001:
³ Տե՛ս ՀՀՊՏ N 73 (1348) 6.12.2017:

Ինչպես նշեցինք՝ հանցավորության առանձին տեսակ է նաև զինվորական հանցավորությունը, որը որոշակի ժամանակահատվածում զինված ուժերում կատարված հանցագործությունների ամբողջական համակարգ է՝ իր որակական և քանակական հատկանիշներով:

Մասնագիտական գրականության մեջ զինվորական հանցավորությունը հաճախ դիտարկվում է որպես «ճյուղային հանցավորության ուրույն տեսակ»:⁴

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը (2015-2017թթ. և 2018թ. առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումը) ցույց է տալիս, որ, չնայած զինվորական հանցավորության որոշակի նվազեցմանը, այդուհանդերձ մտահոգվելու շատ բան կա, և այս ուղղությամբ անհրաժեշտ են համալիր միջոցառումների՝ օրենսդրական փոփոխությունների, բանակում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հաստատում, սոցիալական և նյութատեխնիկական բնույթի հարցադրումների օպերատիվ և լիարժեք լուծումների առաջադրում, հանցավորության կանխարգելմանն ուղղված ժամանակակից կրիմինալոգիական նվաճումների օգտագործում և այլն:

Ըստ գործող ՀՀ քրեական օրենսգրքի՝ 32-րդ գլխում զետեղված հանցակազմերի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ են համարվում այն արարքները, որոնք ուղղված են զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ և կատարվում են զինծառայողների, ինչպես նաև պահեստազորում ընդգրկված այն քաղաքացիների կողմից, ովքեր անցնում են վարժական հավաքներ:⁵

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքը չի առաջարկում զինվորական ծա-

ռայության կարգի դեմ ուղղված հանցագործության սահմանումը, քանի որ դա իրավացիորեն դիտարկվում է որպես հանցագործության ընդհանուր սահմանումի առանձին դրսևորում, հետևաբար՝ այս հանցագործության տեսակին բնորոշ են հանցագործության բոլոր ընդհանուր հատկանիշները: Այդուհանդերձ՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները, ընդհանուրի հետ մեկտեղ, ունեն նաև բնութագրական առանձնահատկություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Ոտնձգության առանձնահատուկ օբյեկտ՝ զինվորական ծառայության սահմանված կարգն է, որը սահմանվում է ՀՀ օրենքներով,⁶ զինվորական կանոնակարգերով, ՀՀ վարչապետի և կառավարության որոշումներով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով և զորամասերի պետերի հրամաններով և այլն:

Զինվորական ծառայության կարգը ներառում է ռազմաիրավական հարաբերությունների բոլոր տեսակները և ծառայության ամբողջ ժամանակահատվածում բոլոր «զինվորական» հանցագործությունների համար ընդհանուր հանդիսացող օբյեկտ է: Ըստ անմիջական օբյեկտի՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված բոլոր հանցակազմերը առանձնանում են խմբերի, որոնք էլ կազմում են այս տեսակի հանցագործությունների ամբողջական համակարգը:⁷

2. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտիվ կողմը դրսևորվում է արարքի (գործողության կամ անգործության) կատարմամբ: Սակայն որոշ հանցակազմերի համար պարտադիր է վնասակար հետևանքների առաջացումը (ՀՀ քր. օր.-ի 369, 370, 371, 372 և այլն): Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել պատճառական կապի առկայությունը կատարված արարքի և առաջացած հետևանքների միջև:

⁴ Տեն Волчок В. Г. Преступность военнослужащих как объект комплексного криминологического исследования. Военно-уголовное право. М., 2005, էջ 8:

⁵ Տեն Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատ.): Երևանի պետական համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ. 2012, էջ 945:

⁶ Տեն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 29 նոյեմբերի 2017 թվականի ՀՕ-195-Ն ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ N 73 (1348) 6.12.2017, «Պաշտպանության մասին» 29 նոյեմբերի 2017 թվականի ՀՕ-196-Ն ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ N 73 (1348) 6.12.2017:

⁷ Մանրամասն տե՛ս՝ Аветисян С. С. Воинские преступления: теория и практика: Монография. Ереван, изд-во «Зангак», 2001:

3. Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտը հատուկ է:

Այսպես՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 356-ի («Հրամանն չկատարելը») 5-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում զորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ընթացքում՝ զինապարտները:

ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ զինվորական հանցագործություններ են համարվում զինծառայողների միայն այն արարքները, որոնք ուղղված են զինվորական ծառայության կարգի դեմ: Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 316, 332-2, 332-3, 347-րդ հոդվածներում պատասխանատվություն է սահմանված հատուկ սուբյեկտների, ինչպես նաև նրանց մերձավոր ազգականների նկատմամբ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար, եթե դա կապված է եղել տվյալ սուբյեկտի ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Հրաման չկատարելու սուբյեկտներ կարող են լինել պետին ծառայությամբ կամ կոչումով ստորադաս զինծառայողները, զինվորական կոչումով կրտսեր զինծառայողները, ովքեր զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման դեպքում չեն կատարում զինվորական կոչումով ավագի պահանջը՝ այդ խախտումները վերացնելու համար:

Որոշ դեպքերում զինվորական Կանոնագրքերը զինվորական ծառայության առանձին հարցերով հրաման տալու միայն գրավոր ձև են սահմանել, հետևաբար՝ այդ կարգի խախտմամբ (բանավոր) հրամանի չկատարումը պետք է դիտվի որպես ստորադասի պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Դատական և իրավակիրառ պրակտիկայում վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյո՞ք զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է այն անձը, ով սխալմամբ է զորակոչվել ծառայության: Սա խիստ վիճահարույց հարց է, և կար-

ծում ենք՝ նման դեպքերում պետք է տվյալ ծառայողին դիտարկել «ոչ պատշաճ սուբյեկտ», քանի որ տվյալ անձը, ըստ էության, զինծառայող չէ (չնայած ձևական առումով զինծառայող է), նա սխալմամբ է զինված ուժերում ծառայող, և եթե իր կատարած արարքը քրեորեն պատժելի է ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածով, ապա նա քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել ընդհանուր հիմունքներով:

4. Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ: Մի շարք հանցակազմերում սուբյեկտիվ կողմում պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը կամ նպատակը (օրինակ՝ դասալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը՝ ՀՀ քր.օր.-ի 362 հոդվածի 1-ին կետ):

ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում նախատեսված ցանկացած զինվորական հանցագործություն ոտնձգում է զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ: Սակայն զինծառայողի կողմից կատարված և զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված ոչ բոլոր հանցագործություններն են դասվում զինվորական հանցագործությունների շարքը:

Օրինակ՝ զենքի, ռազմամթերքի, զինվորական գույքի հափշտակումը և բազմաթիվ այլ վտանգավոր արարքներն ընդհանուր բնույթի հանցագործություններ են: Հետևաբար՝ կարծում են՝ ընդհանուր բնույթի հանցագործությունները կամ դրանց դրսևորման մի մասը ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում որպես զինվորական հանցակազմեր նախատեսելը այնքան էլ հիմնավորված չէ: Նույնը վերաբերում է նաև զինծառայողի նկատմամբ կիրառվող բռնության դեպքերին, եթե դրանք կապված չեն վերջինիս ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Նման արարքն առանձին դեպքերում կարող է որակվել որպես զինվորական հանցագործություն (այդ դեպքերն արձանագրված են Սրապիոն Հովհաննիսյանի վե-

րաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հունիսի 8-ի որոշման մեջ):

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նշել, որ նոր քրեական օրենսգրքի նախագծում պետք է առավել հստակեցնել զինվորական հանցագործությունների համակարգը՝ հաշվի առնելով ՀՀ զինված ուժերում հանցավորության վիճակը, կառուցվածքը, դինամիկան և կանխարգելման արդյունավետ միջոցները:

Վերջում ավելացնենք նաև, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների բացահայտումը և կանխարգելումը զինված ուժերում մարտական կարգապահությունը բարձրացնելու կարևոր նախապայմաններից է: Այս առումով կատարված

յուրաքանչյուր հանցադեպքով պետք է պարզվի հանցավոր արարք կատարած զինծառայողի ինքնությունը, և տրվի նրա գործողություններին համարժեք քրեաիրավական գնահատական, ինչպես նաև բացահայտվեն դրանց կատարմանը նպաստող պայմանները, պատճառները, որպեսզի համալիր միջոցառումներ ձեռնարկվեն դրանք վերացնելու կամ, համենայն դեպս՝ նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Միայն օբյեկտիվ իրականության բացահայտումը կարող է նպաստել զինված ուժերում հնարավոր հանցավոր արարքների կանխարգելմանը:



ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՆԿԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՅԻՈՆ (ՈՒՆԻՎԵՐՍԱԼ) ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի գործող ինստիտուցիոնալ համակարգը ՀՀ-ում: ՀՀ-ում ներկայումս գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ, որտեղ կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ և իրավապահ գործառույթները բաշխված են պետական իշխանության տարբեր մարմինների միջև: Մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ գործառույթներ իրականացնում են իրավապահ մարմինները (քննչական և դատախազական), իսկ կանխարգելիչ գործառույթները՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը և վարչապետի գլխավորությամբ գործող կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը: Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթ իրականացնում են նաև պետական իշխանության մարմինների համակարգում գործող կարգապահական (էթիկայի) հանձնաժողովները:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացումը կապված է դեռևս 2004 թվականի հունիսի 1-ի ՀՀ Նախագահի ՆՀ-100-Ն հրամանագրով ստեղծված՝ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի հետ: Նշված խորհրդի գործունեությունը դադարեց 2015 թվականի մարտի 3-ին, երբ ուժը կորցրած ճանաչվեց «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը: 2015 թվականի փետրվարի 19-ին ընդունվեց ՀՀ կառավարության N 165-Ն որոշումը, որով ձևավորվեց կոռուպցիայի դեմ պայքարի նոր խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ): Վերլուծելով Խորհրդի ձևավորման կարգը, կառուցվածքը և գործառույթները՝ Խորհրդի գործունեության արդյունավետության վերաբերյալ կարող ենք նշել հետևյալը. Խորհրդի կազմում հիմնականում ընդգրկված են պետական իշխանության մարմինների

ներկայացուցիչներ, ինչի հետևանքով կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը պետական իշխանության մյուս մարմիններից չունի ինստիտուցիոնալ և գործառույթային անկախության բավարար երաշխիքներ, ուստի խորհրդում ներկայացված պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներ խորհրդի գործառույթների իրականացման ընթացքում ուղղակիորեն և անուղղակիորեն կաշկանդված են գերատեսչական շահերով: Սակայն, մյուս կողմից, կարծում ենք՝ Խորհուրդը լավ հարթակ է կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ուղղությունները քննարկելու, բարձր հարթակում կոռուպցիայի դեմ պայքարի գործում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ձայնը լսելի դարձնելու համար (Խորհրդի կազմում ընդգրկված են քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունների 6 անդամ): Ուստի ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի յուրաքանչյուր մոդելի դեպքում էլ Խորհրդի գործունեությունը կարող է նպաստել պետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթներ իրականացնում է նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովը նույնպես ունի խնդիրներ՝ իր գործունեության արդյունավետության տեսանկյունից: Իր գործունեության ընթացքում օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններով պայմանավորված՝ Հանձնաժողովն աչքի չի ընկել իր գործունեության արդյունավետությամբ: Դա պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ հանձնաժողովը, հատկապես՝ գործադիր իշխանությունից, չի ունեցել գործառույթային և ինստիտուցիոնալ անկախության բա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

վարար երաշխիքներ, ինչպես նաև բավարար ռեսուրսներ, այդ թվում՝ ինքնուրույն ֆինանսական միջոցներ և աշխատակազմ՝ օրենքով իրեն վերապահված գործառույթների իրականացման համար:

2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծումը ՀՀ-ում: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 54-րդ կետով որպես միջոցառում նախատեսված էր ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի գործող ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրությունների կատարում և անկախ հակակոռուպցիոն մարմին ստեղծելու վերաբերյալ փաթեթի մշակումը:

Տևական քննարկումներից հետո Ազգային ժողովը 2017 թվականի հունիսի 9-ին ընդունեց «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում է ՀՀ-ում ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի նոր մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որը պետք է իրականացնի կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթներ, իսկ իրավապահ գործառույթների իրականացումը մնում էր դատախազական և քննչական մարմինների գործունեության ոլորտում:

Սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դեռևս փաստացի չի ձևավորվել և չի գործում: Չնայած այն հանգամանքին, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համադրված վերլուծությունից բխում է, որ արդեն իսկ պետք է ձևավորված լինեին: Այս համատեքստում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2018 թվականի ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տոնած քաղաքական ուժի՝ «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի նախընտրական ծրագրի կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ներկայացրած ծրագրային դրույթներում ամրագրված է, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ, ունիվերսալ հակակոռուպցիոն մարմին, ապա բավական աղոտ է դառնում Կո-

ռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի փաստացի ձևավորման հնարավորությունը, և մեծանում է կոռուպցիայի դեմ պայքարի անկախ, ունիվերսալ մարմնի ստեղծման հնարավորությունը:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ միջազգային իրավական ակտերը: 1990-ական թվականներից սկսած՝ կոռուպցիայի դեմ պայքարը դարձել է միջազգային հանրության մտահոգության հիմնական խնդիրներից մեկը: Վերջին տասնամյակի ընթացքում ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության, Տնտեսական համագործակցության եվրոպական կազմակերպության կողմից ընդունվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիաներ (hard law) և կոռուպցիայի դեմ պայքարի տարատեսակ առաջարկություններ, բանաձևեր, ուղեցույցներ, հայտարարություններ (soft law), որոնց հիմնական նպատակն է պետություններում ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործող ինստիտուցիոնալ համակարգ:

Միջազգային իրավական ակտերն ամրագրել են կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ հետևյալ հիմնարար դրույթները.

«Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի»¹ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում՝ մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը և համապատասխան դեպքերում այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքների ընդլայնումը և տարածումը»:

«Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն,

¹ Հայաստանը ՄԱԿ-ի՝ «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան» ստորագրել է 2005թ., որը վավերացվել է Ազգային ժողովի կողմից 2006թ. հոկտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել 2006թ. նոյեմբերի 11-ին:

իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ կոռուպցիայի դեմ պայքարի մարմինն կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված: Պետք է տրամադրվեն անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պահանջվել նրանց գործառույթների իրականացման համար»:

«Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 36-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթներն առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցներն իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով»:

«Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի»² 20-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ անձինք կամ կազմակերպությունները մասնագիտանան կաշառակերության դեմ պայքարում: Նրանք պետք է ունենան անհրաժեշտ անկախություն՝ այդ Կողմի իրավական համակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան, որպեսզի հնարավորություն ունենան իրենց գործունեությունն իրականացնելու արդյունա-

վետորեն և առանց որևէ անհիմն ճնշման: Կողմը պետք է ապահովի, որ նման կազմակերպությունների աշխատակազմերն իրենց գործունեության համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Կոռուպցիայի դեմ պայքարի քսան հիմնական սկզբունքների»³ մասին բանաձևի 3-րդ սկզբունքի համաձայն՝

«Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, քննության, քրեական հետապնդման համար պատասխանատու մարմիններն իրենց գործառույթներն իրականացնելիս լինեն անկախ և ինքնուրույն, երաշխավորված լինեն ոչ իրավաչափ ազդեցությունից և ունենան ապացույցների հավաքման, կոռուպցիայի դեմ պայքարում աջակցություն ցուցաբերած անձանց պաշտպանության և քննության գաղտնիության ապահովման արդյունավետ միջոցներ»:

Ընդհանուր առմամբ՝ պետք է նշենք, որ միջազգային իրավական ակտերը կոռուպցիայի դեմ պայքարի որևէ մոդելի նախապատվություն չեն տալիս, և յուրաքանչյուր պետություն ազատ է կոռուպցիայի դեմ պայքարի մոդելի ընտրության հարցում: Սակայն կոռուպցիայի դեմ պայքարի մի շարք միջազգային իրավական ակտեր ամրագրել են որոշակի չափանիշներ, որոնք պետք է բնութագրեն պետությունում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը, մասնավորապես՝ յուրաքանչյուր պետություն պետք է իր իրավական համակարգին համապատասխան ունենա անկախ, մասնագիտացված կոռուպցիայի դեմ պայքարի մարմին, որը պետք է բնութագրեն հետևյալ հատկանիշները՝

- կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացում, որը ենթադրում է, թե կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի հիմնական գործառույթը պետք է լինի հակակոռուպցիոն մասնագիտական գործառույթների իրականացումը,
- պետական իշխանության մարմիններից պետք է ունենա ինստիտուցիոնալ ան-

² Կոնվենցիան ստորագրվել է 1999թ. հունվարի 27-ին Ստրասբուրգում, ՀՀ-ի կողմից վավերացրել է 01.05 2006թ.:

³ Stn Resolution (97) 24, adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 6 November 1997.

կախություն, որը ենթադրում է, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը չպետք է գտնվի պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի կազմում կամ պետական իշխանության որևէ մարմնի ուղղակի կամ անուղղակի ազդեցության տակ,⁴

- գործունեության իրավական հիմքը պետք է լինի օրենսդրական, այսինքն՝ պետք է գործի օրենքի հիման վրա,⁵
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի գործունեությունը պետք է հիմնվի թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների վրա,
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը պետք է գործի մշտական հիմունքներով՝ ամենօրյա աշխատանքային ռեժիմով,
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմինը պետք է ունենա անհրաժեշտ ռեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսներ և աշխատակազմ,
- կոռուպցիայի դեմ պայքարի մարմնի ղեկավարի և աշխատողների ընտրությունը կամ նշանակումը պետք է տեղի ունենան օբյեկտիվ և թափանցիկ ընթացակարգով⁶:

4. Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մոդելները ժամանակակից աշխարհում: Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ներկայումս միասնական մոտեցումներ չկան, տարբեր պետություններն ստեղծել են կոռուպցիայի դեմ պայքարի տարբեր կառուցակարգային մեխանիզմներ: Այդ մեխանիզմների համեմատական ուսումնասիրությամբ առանձնացվում են կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնական մոդելներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոդել:

Կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ

մոդել: Այս մոդելի դեպքում պետությունում գործում է բազմաֆունկցիոնալ հակակոռուպցիոն մարմին, որն իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարի երկու հիմնական գործառնությունները՝ կանխարգելիչ և իրավապահ: Կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդել է գործում հետևյալ պետություններում՝ Հոնգ Կոնգում (Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով), Սինգապուրում (Կոռուպցիոն գործունեության քննության բյուրո), Լիտվայում (Հատուկ քննչական ծառայություն), Լատվիայում (Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրո), Ուելսում (Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողով), Բոթսվանում (Կոռուպցիոն գործերով և տնտեսական հանցագործությունների վարչություն), Ուգանդայում, Ավստրալիայում, Կորեայում, Թաիլանդում, Արգենտինայում, Էկվադորում նույնպես գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելը:

Կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մոդել: Այս մոդելը տեսականորեն կարող է համարվել կոռուպցիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ մոդելը, քանի որ այս մոդելի դեպքում կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ մասնագիտացած մարմին գոյություն չունի, ինչը ենթադրում է պետության վարչական և ֆինանսական միջոցների խնայում: Իրավապահ մոդելի դեպքում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ և քննչական գործառնություններն իրականացվում են տարբեր իրավապահ մարմինների կողմից: Կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մոդելը հատուկ է հետևյալ պետություններին՝ Նորվեգիա (Տնտեսական և շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործությունների հետաքննության և քրեական հետապնդման նորվեգական ազգային վարչություն), Իսպանիա (Կոռուպցիայի հետ կապված տնտեսական հանցագործությունների քննության հատուկ, դատախազական ծառայություն), Խորվաթիա (Կոռուպցիայի կանխարգելման և կազմակերպված հանցավորության վարչու-

⁴ Säu Esser, Albin & Kubiciel Michael (2004), Institutions against Corruption: A Comparative Study of the National Anti-corruption Strategies reflected by GRECO's First Evaluation Round, Study commissioned by Council of Europe, GRECO, Strasbourg.

⁵ Säu Opinion on two draft anti-corruption laws of Ukraine, p. 7 <http://www.legislationline.org/documents/id/19137>

⁶ Säu UNDP (2005), Report of the Regional Forum on Anti-corruption Institutions, Vienna International Center, հասանելի էր՝ <http://europeandcis.undp.org/files/uploads/Lotta/AC%20Forum%20Report.pdf>

թյուն), Ռումինիա (Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային վարչություն), Հունգարիա (Հետաքննությունների ազգային բյուրո), Գերմանիա (Ներքին գործերի դեպարտամենտ) և Մեծ Բրիտանիա (Ոստիկանության կոռուպցիայի դեմ պայքարի ջոկատ):

Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոդել: Այս մոդելը դրսևորվում է երկու ձևով՝ կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման խորհուրդների և կոռուպցիայի դեմ պայքարի նպատակային կանխարգելիչ մարմինների: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման խորհուրդները հիմնականում կազմված են պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այս մարմինները մշտական գործող չեն և աշխատում են հանդիպումների միջոցով: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման խորհուրդների մոդելը ներկայումս գործում է ՀՀ-ում: Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոդելի երկրորդ տեսակը կոռուպցիայի դեմ պայքարի նպատակային կանխարգելիչ մարմիններն են, որոնք գործում են մշտական հիմունքներով և իրականացնում են կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ ու կրթական գործառույթներ, այս մոդելը հատուկ է Ուկրաինային, Սլովենիային, Սերբիային և այլն⁷:

5. Կոռուպցիայի դեմ պայքարի անկախ, ունիվերսալ մարմնի ստեղծման հեռանկարը Հայաստանի Հանրապետությունում: Յուրաքանչյուր պետությունում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում, կոռուպցիայի դեմ պայքարի մոդելի ընտրությունը բարդ գործընթաց է, որը պահանջում է պետությունում կոռուպցիայի դեմ պայքարի գործող ինստիտուցիոնալ համակարգի ամբողջական վերլուծություն: Ընդ որում՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում զարգացած մեխանիզմներ ունեցող պետությունների

փորձի օգտագործումը պետք է համահունչ լինի ՀՀ իրավական համակարգին, իրավական և քաղաքական մշակույթին և սոցիալ-տնտեսական վիճակին:

Ակնհայտ է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելը, որն արդյունավետ կերպով գործում է մի շարք պետություններում, կարող է կիրառելի չլինել այլ պետությունների համար: Կարծում ենք՝ յուրաքանչյուր պետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝ ա) պետության իրավական և քաղաքական համակարգին բնորոշ առանձնահատկությունները, բ) պետությունում առկա կոռուպցիայի մակարդակը, դրա նվազման և ընդլայնման միտումը, գ) պետության սոցիալ-տնտեսական վիճակը⁸:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրները լուծելու նպատակով, հիմք ընդունելով կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ միջազգային իրավական ակտերը, հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իշխանության քաղաքական կամքի և միտվածության առկայությունը, կարող է ստեղծվել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ, ունիվերսալ մարմին, որը պետք է իրապես անկախ լինի պետական իշխանության բոլոր մարմիններից, հատկապես՝ գործադիր իշխանությունից, և իրականացնի կոռուպցիայի կանխարգելում և այդ ոլորտում իրավապահ գործառույթներ:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելի ներդրման դեպքում կարող են հիմք ընդունվել հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

Քայլ 1.

Տարբերակ 1. կարող է լրացում կատարվել Սահմանադրությունում⁹ նախատեսված նոր

⁷ Տե՛ս Specialised anti-corruption institutions review of models anti-corruption network for Eastern Europe and Central Asia, OECD 2008, հասանելի էր՝ <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf>, տես նաև For more information on Serbia, Macedonia and Slovenia see Clean Hands website maintained by the BETA News Agency, Serbia, and dealing with corruption in Serbia and Montenegro and its neighbors հասանելի էր՝ <http://www.beta.co.yu/korupcija/eng/>

⁸ Տե՛ս Camerer, Lala (2001), Prerequisites for effective anti-corruption ombudsman's offices and anti-corruption agencies, 10th International Anti-Corruption Conference, Prague, IACC, Transparency International հասանելի էր՝ <http://www.10iacc.org/download/workshops/cs06.pdf>

⁹ Մի շարք պետություններում հակակոռուպցիոն մարմինն ունի սահմանադրական կարգավիճակ. Հոնգ Կոնգի Սահմանադրության 57-րդ հոդված, Թաիլանդի Թագավորության Սահմանադրության 59-րդ հոդված, Նեպալի Սահմանադրության 21-րդ գլուխ, Քենիայի Սահմանադրության 79-րդ հոդված, Մարոկոյի Սահմանադրության 36-րդ հոդված, Թունիսի Սահմանադրության 6-րդ գլուխ:

գլուխ՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի մարմին» անվանմամբ (Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այդպիսի լիազորություն ունի նաև Ազգային ժողովը), որի հիման վրա կստեղծվի անկախ, ունիվերսալ հակակոռուպցիոն մարմին: Անկախ, ունիվերսալ հակակոռուպցիոն մարմինն սահմանադրական կարգավիճակ տալը կստեղծի առավել բարենպաստ անկախության երաշխիքներ՝ գործադիր իշխանության և պետական իշխանության այլ մարմինների հնարավոր ճնշումներից զերծ իր առջև դրված խնդիրների իրականացման համար:

Տարբերակ 2. Սահմանադրության 122-րդ հոդվածի հիման վրա ստեղծել ինքնավար մարմին՝ ունիվերսալ հակակոռուպցիոն մարմին:

Քայլ 2. Նշված տարբերակներից յուրաքանչյուրի ընտրության դեպքում էլ անհրաժեշտ է ընդունել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ ունիվերսալ հակակոռուպցիոն մարմնի մասին օրենք, որով կսահմանվեն այդ մարմնի կարգավիճակից բխող՝ կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ և իրավապահ գործառույթների և լիազորությունների շրջանակը, մարմնի կարգավիճակից բխող այլ իրավակարգավորումներ:

Քայլ 3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մարմինն իրականացնելու է նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահված գործառույթները, անհրաժեշտ է դադարեցնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեությունը:

Քայլ 4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մարմինն իրականացնելու է նաև քննչական գործառույթներ, առաջարկում ենք դիտարկել հետևյալ տարբերակը՝ ՀՀ քննչական մարմինների իրավասության ներքո գտնվող կոռուպցիոն բնույթի բոլոր հանցագործությունների քննության իրավասությունը վերապահել անկախ հակակոռուպցիոն մարմնին: Այդ համատեքստում քննարկել ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությունը շարունակելու

նպատակահարմարության հարցը, քանի որ այդ ծառայության ծանրաբեռնվածությունը խիստ նվազելու է:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելի ներդրումն ունի դրական և բացասական կողմեր, որոնց համադրված վերլուծությունը կարևոր նշանակություն ունի կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մարմնի ստեղծման գործում:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելի ներդրման դրական կողմեր են՝

- օրենսդրական մակարդակով կսահմանվեն կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները և մեխանիզմները, որոնք կիրականացվեն մեկ միասնական մարմնի կողմից,
- կբարձրանա կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունավետությունը, քանի որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությունը կիրականացվի մեկ մարմնի կողմից, ինչի շնորհիվ այդ ոլորտում իրականացվող աշխատանքներն առավել համակարգված բնույթ կստանան¹⁰,
- անկախ, ունիվերսալ հակակոռուպցիոն մարմինը հասցեական պատասխանատվություն կկրի պետությունում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության համար:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդելի ներդրման բացասական կողմեր են՝

- կավելանան պետության վարչական ծախսերը,
- կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մեկ մարմնի ձեռքում կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր հիմնական գործառույթների կենտրոնացումն, առավել հեշտ կդարձնի այդ մարմնի վրա ազդեցություն գործելու հնարավորությունը,
- անկախության և բավարար ֆինանսական երաշխիքներ չտրամադրելու դեպքում կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մարմինը չի կարողանա արդյու-

¹⁰ Տե՛ս UNDP, 2005, Institutional arrangements to combat corruption, հասանելի էր՝ http://regionalcentrebangkok.undp.or.th/practices/governance/documents/Corruption_Comparative_Study-200512.pdf

նավետ իրականացնել իր գործառույթները և կղառնա կոռուպցիայի դեմ պայքարող «հերթական մարմին», ինչն իր հերթին կհանգեցնի հասարակությունում աստիճանաբար ձևավորվող՝ կոռուպցիայի դեմ պայքարի հանդեպ առկա վստահության նվազեցմանը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարող են առանձնացնել հետևյալ դրույթները՝ ա) աշխարհում գոյություն չունի կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի միասնական մոդել, բ) ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող կոռուպցիայի դեմ պայքարի մոդելներից յուրաքանչյուրն էլ ունի իրեն բնորոշ դրական և և բացասական կողմերը, գ) պետություններում կոռուպցիայի դեմ պայքարի մո-

դելների կիրառման հաջողված և անհաջող փորձերը պայմանավորված են տվյալ պետությանը բնորոշ առանձնահատկություններով, դ) 2018 թվականին ՀՀ-ում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններում հաղթած քաղաքական ուժի կողմից քաղաքական օրակարգ է վերադարձել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ, ունիվերսալ հակակոռուպցիոն մարմին ստեղծելու հարցը, ե) ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ, ունիվերսալ մարմնի ստեղծման գաղափարն ունի դրական և բացասական կողմերը, դրանով հանդերձ՝ կարծում ենք, որ այդ գաղափարի կենսագործումը կարող է առավել արդյունավետ և համակարգված դարձնել կոռուպցիայի դեմ տարվող պայքարը:



ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

**ԱՌԱՆՁՆԱԿԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՀԱՓՇՏԱԿԵԼԸ
(ՀՀ ՔՐ.ՕՐ.-Ի 180-ՐԴ ՀՈԴՎԱԾ)**

Հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը սեփականության կոնկրետ ձևն է՝ պետական, համայնքային, անձնական կամ հասարակական կազմակերպությունների սեփականությունը: Գույքը բռնի կերպով վերցնելու դեպքում, որպես հանցագործության ոչ պարտադիր օբյեկտ, կարող է հանդես գալ նաև անձի առողջությունը:

Ըստ էության՝ քրեական օրենքը չի պարզաբանում «**առանձնակի արժեք ունեցող առարկաներ**» հասկացությունը: Որոշ հեղինակների կարծիքով՝ վերը նշված դրույթը նախատեսելիս քրեական օրենքը մշակողները հիմք են ընդունել.

ա) հափշտակված առարկաների բարձր արժեքը,

բ) հափշտակված գույքի *առանձնակի արժեքը*, որը ոչ միայն բարձրացնում է արարքի հանրային վտանգավորությունը, այլև խոշոր վնաս պատճառում սեփականատիրոջը¹:

Այսինքն՝ տվյալ տեսակի հափշտակության հանրային վտանգավորությունը բնութագրելիս օրենսդիրը հիմք է ընդունել ոչ միայն հափշտակված առարկայի բարձր արժեքը, այլև այդ առարկայի՝ «**առանձնակի արժեքը**»: Բացի դրանից՝ հողվածում նկարագրված արարքն առանձնանում է նաև իր կատարման համապարփակ (բազմաբնույթ) եղանակով, ինչով էլ պայմանավորված է արարքի հիմնական բովանդակությունը:

Ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածում նկարագրված հանցակազմի առանձնահատկություններից՝ որպես հափշտակության առարկա կարող են հանդես գալ միայն այն առարկաները կամ փաստաթղթերը, որոնք

ունեն *պատրմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք*: Օրենքը դրանք բնորոշում է իբրև «**առարկաներ կամ փաստաթղթեր**»: Առարկաներ ասելով՝ հասկացվում են նյութական աշխարհի օբյեկտները, իրերը, իսկ փաստաթղթեր ասելով՝ տեղեկատվության այն նյութական կրիչները, որոնք նախատեսված են տեղեկատվությունը ժամանակի և տարածության մեջ փոխանցելու համար: Որպես այդպիսիք կարող են հանդես գալ հին ձեռագրերը, յուրահատուկ թանգարանային նմուշները, մշակութային ստեղծագործությունները, ինչպես նաև ցանկացած այնպիսի առարկաներ կամ փաստաթղթեր, որոնք, իրենց յուրահատուկ և կարևոր նշանակությամբ, ունեն ոչ միայն էական, այլև *առանձնակի արժեք* գիտության և մշակույթի ոլորտում: Այսինքն՝ առարկայի առանձնակի արժեքն արտահայտվում է դրա բացառիկության և անկրկնելիության մեջ, որը կարող է ունենալ պատմական, գեղարվեստական և մշակութային բնույթ:

Պատմական, գեղարվեստական և մշակութային արժեքների տեսակները տրված են «**Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին**» ՀՀ օրենքում: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *մշակութային ժառանգություն են համարվում* մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող *մշակութային արժեքները և մշակութային նշանակությամբ առարկաները*:

Օրենքի հիշյալ հոդվածում *մշակութային արժեքներ են համարվում* մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող այն առարկաները և ստեղծագործությունները, որոնք, ստեղծման ժամանակից

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

¹ Сѣн Гусев О.Б., Завидов Б.Д., Коротков А.П., Слюсаренко М.И. Преступления против собственности, ЭКЗАМЕН, М., 2001 г., с. 91:

անկախ, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն:

Սույն օրենքի 3-րդ հոդվածում օգտագործված մեկ այլ հիմնական հասկացության համաձայն՝ **մշակութային նշանակությամբ առարկաներ են համարվում** մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող այն առարկաները, ներառյալ՝ համարանիշային (սերիական) արտադրության կամ զանգվածային արտադրության առարկաները, ինչպես նաև ստեղծագործությունները, որոնք, ստեղծման ժամանակից անկախ, մշակութային արժեք չեն ներկայացնում:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է մշակութային արժեքների հետևյալ տեսակների վրա.

1) պատմական, ներառյալ՝ ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերի, հասարակության և պետության զարգացման, գիտության և ճարտարագիտության պատմության, ինչպես նաև նշանավոր մարդկանց (պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների, ազգային հերոսների) կյանքին ու գործունեությանն առնչվող առարկաներ, ընտանեկան մասունքներ.

2) հնագիտական հետազոտություններից և պեղումներից ստացված գտածոներ, ինչպես նաև հողային, շինարարական, հողաբարելավման և այլ աշխատանքների ընթացքում հայտնաբերված պատմահնագիտական առարկաներ.

3) գեղարվեստական արժեքներ, ներառյալ՝

ա) ամբողջովին կամ մասամբ ձեռքով արված պատկերներ և նկարներ՝ ցանկացած միջոցով ու նյութերով կատարված,

բ) ցանկացած նյութից պատրաստված քանդակներ,

գ) ցանկացած նյութից արված գեղարվեստական հորինվածքներ և համակցված կառուցվածքներ (մոնտաժներ),

դ) պաշտամունքային նշանակություն ունեցող գեղարվեստորեն ձևավորված առարկաներ, ներառյալ՝ սրբապատկերներ (իկոնաներ),

ե) փորագրություններ, փորագրանկարի արտատպություններ, վիմատպություններ և դրանց այլ դրոշմվածքաձևեր,

զ) կիրառական արվեստի գործեր, ներառյալ՝ ապակուց, կավից, փայտից, երկաթից, ոսկրից, գործվածքեղենից և այլ նյութերից պատրաստված գեղարվեստական իրեր,

է) ավանդական ժողովրդական արհեստների ստեղծագործություններ.

4) պատմական և գեղարվեստական, ներառյալ՝ գրական հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

5) ձեռագիր և տպագիր գրական, պատմագիտական, պաշտամունքային արժեք ներկայացնող հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

6) առանձին կամ հավաքածու հնագույն գրքեր, փաստաթղթեր.

7) հազվագյուտ ձեռագրեր և փաստաթղթային հուշարձաններ, արխիվներ, ներառյալ՝ ձայնագրման, տեսագրման, լուսանկարչական և կինոարխիվներ.

8) երաժշտական նվագարաններ.

9) առանձին կամ հավաքածու փոստային նամականիշեր, այլ նամականիշային նյութեր.

10) հնագույն առարկաներ՝ գործիքներ, կավագործական իրեր, մակագրություններ, դրամներ, շքանշաններ, մեդալներ, կնիքներ, զենք, ինչպես նաև հավաքածուի համար նախատեսված այլ առարկաներ.

11) բուսական, կենդանական և երկրաբանական հավաքածուներ և նմուշներ, հանքաբանության, անատոմիայի և հնէաբանության համար հետաքրքրություն ներկայացնող առարկաներ.

12) կահույք, գորելեններ, գորգեր, կարպետներ, տարազներ.

13) ազգագրական, մարդաբանական նյութեր և բանահյուսական նյութերի անտիպ ժողովածուներ, հնատիպ հրատարակություններ.

14) ճարտարապետական և կոթողային արվեստի հուշարձանների բաղկացուցիչ մասեր և բեկորներ.

15) այլ առարկաներ, ներառյալ՝ պատմական, գեղարվեստական, գիտական կամ մշակութային այլ նշանակություն ունեցող պատճեններ, որոնք, որպես պատմության և մշակույթի հուշարձաններ, վերցված են պետական պահպանության:

Հարկ է նշել, որ վերը թվարկվածներից ոչ բոլոր օբյեկտներն են, որոնք իրականում կա-

րող են ունենալ առանձնակի արժեք: Ներկայումս գոյություն չունեն այնպիսի հստակ կանոններ կամ չափանիշներ, որոնք, որոշակի իմաստով, այս կամ այն առարկան կարող են դասել *առանձնակի արժեք* ունեցող առարկաների շարքը: Տվյալ պարագայում առարկայի՝ «առանձնակի արժեք» ունենալը, ըստ էության, պետք է հասկանալ՝ որպես *գնահատող հասկանիշ*: Հափշտակված առարկայի կամ փաստաթղթի (հափշտակության եղանակից անկախ)՝ որպես պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեքի, առանձնակի նշանակությունը որոշվում է համապատասխան փորձաքննությամբ, որի ընթացքում պարզվում է ոչ միայն տվյալ առարկայի արժեքը (*դրամային արտահայտությամբ*), այլև պատմության, գիտության, մշակույթի կամ արվեստի բնագավառում իր նշանակությունը²: Այսինքն՝ հափշտակված առարկայի պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունենալը որոշում է դատարանը՝ նկատի ունենալով գործի բոլոր հանգամանքները:

Մշակութային արժեքների փորձաքննությունն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող, մշակութաբանական կամ արվեստաբանական բնույթի հետազոտություն է, որի շնորհիվ տրվում է առարկայի՝ մշակութային արժեք համարվելու կամ չհամարվելու վերաբերյալ փորձագիտական եզրակացություն: «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է՝ «(...) Փորձաքննությունն իրականացնում են լիազորված պետական մարմնի կողմից հավատարմագրված մասնագետները: Մշակութային արժեքների փորձաքննություն անցկացնող մասնագետների հավատարմագրման գործընթացն իրականացվում է Հա-

յաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով»:

Օբյեկտիվ կողմից՝ հանցագործությունը կարող է իրականացվել ինչպես հափշտակությամբ (*ավազակություն, կողոպուտ, գողություն, խարդախություն, յուրացում կամ վաճառում*), այնպես էլ՝ շորթմամբ:

Իրավաբանական գրականության մեջ գերակշռում է այն տեսակետը, որ առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությունը պետք է որակվի միատեսակ՝ *հափշտակության եղանակից անկախ*³: Այսինքն՝ տվյալ դեպքում, հափշտակության եղանակը չի ազդում արարքի որակման վրա⁴:

Օրենքը պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների կամ փաստաթղթերի հափշտակությունը համարում է ծանրացուցիչ հանգամանքներում կատարված, եթե իրականացվել է *ավազակությամբ կամ շորթմամբ*: Այս առումով՝ շարունակվում է վիճահարույց մնալ, հատկապես, առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակության ավարտման պահը, մասնավորապես՝ եթե կատարվել է *ավազակությամբ*: Օրենքի բառացի մեկնաբանման պարագայում կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված հափշտակության ավարտման պահը կախված չէ հափշտակության կոնկրետ որևէ եղանակից: Վիճահարույց իրավիճակն առավել իրատեսական է դառնում այն դեպքում, երբ առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությունը կատարվում է հանցակազմն առանձնակի որակյալ դարձնող հատկանիշների առկայության պայմաններում: Օրի-

² Sfin Комментарий к уголовному кодексу Российской Федерации /постатейный/, 2-е издание, ТОМ 1, Российская академия правосудия, под. ред. докт. юрид. наук, проф., заслуженного юриста РФ А.В. Бриллиантова, М. 2017 г., с. 619-620:

³ Sfin Комментарий к Уголовному кодексу Российской Федерации; под общей редакцией докт. юрид. наук, Председателя Верховного Суда РФ В.М. Лебедева и докт. юрид. наук, профессора Ю.И. Скуратова, издание 4-е, переработанное и дополненное, издательство НОРМА, М., 2002 г., с. 405; Уголовное право России (части общая и особенная), учебник для бакалавров, издание второе, переработанное и дополненное, ответ. ред. докт. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Рарог, М. 2017 г., с. 383; Уголовное право /особенная часть/, учебник для бакалавров, издание третье, переработанное и дополненное, под редакцией докт. юрид. наук, проф. А.И. Чучаева, М. 2018 г., с. 146 և այլն:

⁴ Sfin Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, издание одиннадцатое, переработанное и дополненное, ответ. ред. докт. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Рарог, М. 2017 г., с. 362:

նակ՝ միևնույն փաստական հանգամանքներում իրականացված ավազակության որակյալ տեսակների դեպքում (*ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ավազակությունը, որը կատարվել է՝ առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով, կազմակերպված խմբի կողմից, առողջությանը ծանր վնաս պատճառելով*), քրեական օրենսգրքը սահմանում է ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածի 3-րդ մասով: Տվյալ իրավիճակում կարելի է ուղղակիորեն փաստել, որ գործ ունենք քրեաիրավական նորմերի յուրահատուկ մրցակցության դեպքի հետ: Տարածված տեսակետի համաձայն՝ երբ գոյություն ունի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության խնդիր, ապա նախապատվությունը տրվում է հատուկ նորմին, այսինքն՝ այն նորմին, որը նախատեսված է հիշյալ հանցակազմում: Դրանից էլ հետևում է. համապատասխան դեպքերում միայն տվյալ նորմն է ենթակա կիրառման: Սակայն նշված տեսակետը խիստ քննադատության է արժանացել իրավաբանական գրականության մեջ այն առումով, որ չի բխում օրենքի տրամաբանությունից: Ստացվում է այնպես, որ օրենքն առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությունը դիտարկում է առավել վտանգավոր հանցագործություն, քան այլ առարկաների հափշտակությունը: Բացի դրանից՝ նշված հանցակազմով նախատեսված արարքը հանդես է գալիս որպես հափշտակության առավել որակյալ տեսակ, չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական տեխնիկայի առումով նախատեսված է առանձին հոդվածով⁵: Հավանաբար՝ դա է պատճառը, որ տվյալ դեպքում մենք առընչվում ենք ոչ թե ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության, այլ՝ ծանրացուցիչ հանգամանքներով հատուկ նորմերի մրցակցության հետ, որի դեպքում նախապատվությունը տրվում է առավել ծանրացուցիչ հանգամանքներով հատուկ նորմին: Կա

նաև կարծիք, որ այդպիսի իրավիճակներում պետք է կիրառվի այն նորմը, որն ավելի խիստ պատիժ է նախատեսում: Այս հարցի վերաբերյալ նույնիսկ տեսակետ է արտահայտվել, որ այդպիսի իրավիճակներում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ⁶:

Առկա խնդրի վերաբերյալ հարկ է նշել մեկ այլ հանգամանք ևս. քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածում «հափշտակություն» եզրույթն օգտագործվում է որպես սեփականության դեմ ուղղված որոշակի կատեգորիայի հանցագործությունների ընդհանրացնող հասկացություն, ապա միանշանակ փաստել, թե հանցագործությունն ավարտած է համարվում նշված առարկաներն իրապես վերցնելու պահից, որոշ քրեագետների արտահայտած տեսակետի համաձայն՝ այնքան էլ հիմնավորված չէ: Հանցագործության ավարտման պահը որոշվում է հափշտակության կոնկրետ եղանակով, այսինքն՝ նշված առարկաները վերցնելը գողության, խարդախության, կողոպուտի, յուրացնելու կամ վատնելու միջոցով կհամարվի ավարտված, եթե հանցավորին ոչ միայն հաջողվել է տիրանալ, այլև՝ իր հայեցողությամբ տնօրինել դրանք: Սակայն ավազակային հարձակման դեպքում հանցագործությունը կհամարվի ավարտված՝ գույքը հափշտակելու նպատակով հարձակումը կատարելու պահից, անկախ այն հանգամանքից, թե հանցավորին հաջողվել է տիրանալ առանձնակի արժեք ունեցող առարկաներին կամ փաստաթղթերին, թե ոչ⁷:

Չնայած վերը արտահայտված բոլոր տեսակետներին՝ նշված հարցը դեռևս շարունակում է վիճահարույց մնալ:

Առանձնահատուկ կարևորություն ունեցող հարց է մնում նաև՝ սույն հոդվածով նախատեսված հափշտակության կատարումը, որն իրականացվել է *շորթմամբ*: Օրենքի բառացի մեկնաբանությունից հետևում է, որ սույն հոդվածով նախատեսված՝ առանձնակի արժեք

⁵ Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации (постатейный), 2-е издание, ТОМ 1, Российская академия правосудия, под. ред. докт. юрид. наук, проф., заслуженного юриста РФ А.В. Бриллиантова, М. 2017 г., с. 621:

⁶ Տե՛ս Курс уголовного права, в пяти томах, особенная часть, том 3, под редакцией докт. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и докт. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002 г., с. 461:

⁷ Տե՛ս Уголовное право, особенная часть, учебник для вузов, издательство НОРМА, М., 2001 г., с. 311:

ներկայացնող առարկաների շորթում կարող է որակվել այն դեպքը, եթե դրա կատարումն ամբողջությամբ ներառում է հափշտակություն հասկացությունը⁸: Ըստ էության՝ ստացվում է այնպես, որ նշված առարկաներին կամ փաստաթղթերին շորթումով տիրանալու դեպքում արարքը լրացուցիչ որակման կարիք չունի, չնայած այն հանգամանքին, որ շորթումը հափշտակության եղանակ չէ: Այսինքն՝ դա նաև չի նշանակում, թե շորթումը պետք է դիտարկել որպես հափշտակության եղանակ: Ամեն դեպքում՝ նշված հարցը ևս շարունակում է վիճահարույց մնալ⁹:

Իրավաբանական գրականության մեջ նշված խնդրին վերաբերող հարցն, ակտիվ քննադատության է արժանացել նաև այն իմաստով, որ տվյալ հանցակազմում շորթման հասկացության ընդգրկումը սխալ է: Ենթադրվում է, թե այդ առարկաների շորթումը պետք է որակվի՝ որպես գույքի շորթում (ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված), կամ՝ «շորթումը» հոդվածի վերնագրում պետք է ուղղակի նշվեր: Ինչ վերաբերում է ավագակությանը՝ ստացվում է, որ մեկ հափշտակությամբ կատարվում է մեկ ուրիշ հափշտակություն (սա բխում է հոդվածի երրորդ մասի ձևակերպումից)¹⁰:

Իրականում՝ նշված նորմի հետ կապված քննադատությունն արդարացված է և, օրենսդրական բարեփոխման տեսանկյունից՝ էական խմբագրման կարիք ունի: Բացի այդ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքում սպառիչ կերպով թվարկված են պատմական, գեղարվեստական, մշակութային և այլ արժեքների տեսակները, ուստի որևէ իմաստ չունի, որ ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածում «պատմական և գեղարվեստական արժեքներ» հասկացությունները տարանջատվեն «մշակութային արժեք-

ներ» հասկացությունից, քանի որ բոլորը միասին հանդես են գալիս որպես մեկ հասկացություն՝ **մշակութային արժեքներ**: Ուստի, օրենսդրական առումով՝ ավելի նպատակահարմար կլիներ, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածը ենթարկվեր համապատասխան խմբագրման: Մասնավորապես՝ առաջարկվում է. ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածը խմբագրել և վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. **«Մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր հափշտակելը կամ շորթելը»**:

Հանցագործության օբյեկտիվ կողմն ընդգրկում է գույքը վերցնելուն ուղղված ցանկացած եղանակ, որի պարագայում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված արարքը լրացուցիչ որակել հափշտակության առանձին եղանակների կամ շորթման համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներով, չի պահանջում:

Սուբյեկտիվ կողմից՝ հանցագործությունն արտահայտվում է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական նպատակով:

Իրավաբանական գրականության մեջ արդարացի տեսակետ է արտահայտվել այն մասին, որ առանձնակի արժեք ունեցող պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային առարկաների հափշտակության դեպքում դրանց առանձնակի արժեք ունենալու հանգամանքը պետք է գիտակցվի նաև հանցավորի կողմից: Հակառակ դեպքում, եթե վերջինս դա չի գիտակցում, ապա նրա արարքում համապատասխան հանցակազմի հատկանիշներ չեն պարունակվում¹¹:

Հանցագործության սուբյեկտ են համարվում 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձինք: Եթե հոդվածի դիսպոզիցիայում նշված առարկաների կամ փաստաթղթերի հափշտակությունը կատարվել է 14-ից 16 տարեկան անձանց կողմից, ապա նրանց պատաս-

⁸ Տե՛ս Курс уголовного права, в пяти томах, особенная часть, том 3, под редакцией докт. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и докт. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002 г., с. 461:

⁹ Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации (постатейный), 2-е издание, ТОМ 1, Российская академия правосудия, под. ред. докт. юрид. наук, проф., заслуженного юриста РФ А.В. Бриллиантова, М. 2017 г., с. 621:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, չորրորդ հրատարակություն, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ, Երևան, 2009թ., էջ 414:

¹¹ Տե՛ս Кочой С.М. Ответственность за корыстные преступления против собственности; учебно-практическое пособие, издание 2-е, дополненное и переработанное, М., 2000 г., с. 212:

խանատվությունը վրա է հասնում այնպիսի հանցավոր արարքների համար, ինչպիսիք են *ավազակությունը, կողոպուտը, գողությունը, խարդախությունը, յուրացումը կամ վատնումը և շորթումը*:

Արարքը որակյալ դարձնող հատկանիշների մեջ առանձնահատուկ քննարկման կարիք ունի մեկ հատկանիշ ևս՝ առանձնակի արժեք ունեցող առարկաների կամ փաստաթղթերի հափշտակությունը, եթե անզգուշությամբ առաջացրել է 180-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված առարկաների կամ փաստաթղթերի *ոչնչացում կամ վնասում*:

«Ոչնչացնելը» առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը լրիվ անպիտան վիճակի հասցնելն է, որի դեպքում առարկան ընդհանրապես դադարում է ֆիզիկապես գոյություն ունենալուց, կամ չի կարող օգտագործվել ըստ նշանակության, կամ կարող են, սակայն այդ դեպքում դրանք արդեն կորցնում են իրենց պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեքը:

«Վնասելն» առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերն այնպիսի վնաս հասցնելն է, որը, թերևս, չի բացառում ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունը, չի ոչնչացնում առանձնակի արժեքը, սակայն զգալի չափով նվազեցնում է:

Հանցագործությունը համարվում է ծանրացուցիչ հանգամանքներում կատարված, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը կատարվել է կազմակերպված խմբի կողմից:

Բավականին ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքը ծանրացուցիչ հանգամանքներում առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու համար (180-րդ հոդվածի 3-րդ մաս) սահմանում է ավելի խիստ պատասխանատվություն, քան անձի դեմ ուղղված մի շարք այլ հանցագործությունների համար (օրինակ՝ 112-րդ հոդվածի 2-րդ մաս, 131-րդ հոդվածի 3-րդ մաս և այլն): Ստացվում է այնպես, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքը առանձնակի արժեք ունեցող առարկաների քրեափրավական պաշտպանությունն ավելի բարձր է դասում, քան մարդու կյանքը, առողջությունն ու ազատությունը: Դա չի բխում նաև քրեափրավական նորմերի դասակարգման ընդհանուր տրամաբանությունից: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է. ՀՀ գործող քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված առավելագույն պատիժը, որը նախատեսում է ազատազրկում՝ յոթից տասներկու տարի ժամկետով, մեղմացնել և սահմանել ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ դատական պրակտիկան այդքան էլ հարուստ չէ նշված հանցագործությունների քննության վերաբերյալ գործերով, այնուամենայնիվ, ՀՀ քրեական օրենսգրքում նշված հանցակազմի առկայության փաստը կարող է էական դերակատարություն ունենալ ոչ միայն տվյալ տեսակի հափշտակությունների դեմ մղվող պայքարի արդյունավետության բարձրացման, այլև՝ նմանատիպ հանցագործությունների տարատեսակ դրսևորումները կանխելու և հարուստ դատական պրակտիկա ձևավորելու գործում:



ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ «ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի
գիտական խորհրդատու, ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՆԻ ԹԵՐԶՅԱՆ

ՀՀ «ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների
գիտահետազոտական կենտրոնի սոցիոլոգ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ «ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների
գիտահետազոտական կենտրոնի հոգեբան

**ՀՀ-ՈՒՄ ԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐՉԱԲԱՆՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ)**

Հանցավորությունը՝ որպես հիմնախնդիր, բոլոր ժամանակներում ու տարբեր ժողովուրդների համար հանգուցային է եղել՝ օրինականության հաստատման ճանապարհին: Մշտապես փորձ է արվել գտնել հանցավորություն ծնող պատճառներն ու պայմանները՝ երևույթի դեմ արդյունավետ պայքարելու համար: Մտահոգիչ են հատկապես հանցավորության այն դրսևորումները, որոնցում ներգրավված են եղել կանայք: Այս հանգամանքն առանձնահատուկ կարևորություն է ստանում մեր երկրում՝ հաշվի առնելով կնոջ դերը հայ իրականությունում: Այդ մտահոգությունն արդարացնելու նկատառումից ելնելով՝ իրականացվել է տվյալ ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով հանցանք կատարած կանանց կեցավայրը, ընտանեկան դրությունը, ամուսնական վիճակը, ընտանիքում երեխաների առկայությունը, մասնագիտություն ունենալը, զբաղմունքը և այլն:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնը 2016-2018 թթ. իրականացրել է հետազոտություն՝ «Կանանց հանցավորության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով: Հետազոտությունն իրականացվել է մի քանի ուղղություններով և մեթոդներով, որոնցից մեկն էլ հարցազրույցն է, որն իրականացվել է հարցաթերթիկային հարցման միջոցով: Հետազոտության ընտրանքը կազմել են ՀՀ ԱՆ «Աբով-


յան» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման ձևով պատիժը կրող 65 կին դատապարտյալներ, իսկ որպես ստուգիչ խումբ՝ երբևէ հանցանք չկատարած և քրեական պատասխանատվության չենթարկված 65 կին, հարցաթերթիկային հարցումն իրականացվել է անանուն:

Ըստ մեր ուսումնասիրության՝ հարցման ենթարկված դատապարտված կանանց մեծամասնությունը՝ 89,2%-ը, քաղաքային վայրերում ապրողներն են: Հանցավորության սոցիոլոգիական մեկնաբանություններում դեռևս վաղ ժամանակներից ամրագրել են, որ կանանց կողմից կատարվող հանցագործությունների մեծամասնությունը կատարվում էր քաղաքներում, քանի որ այնտեղ կյանքի պայմաններն այլ էին, և բարձր էր սոցիալական ակտիվությունը:

Հանցագործություն կատարած կանանց մեծամասնության երևանաբնակ (58,5%) լինելու հանգամանքը, անշուշտ, մեծ մասամբ պայմանավորված է մեծ քաղաքի գործոնով, որն իր հնարավորություններով ավելի նպաստավոր վայր է հանցանք կատարելու համար: Նախ՝ փորձենք դիտարկել կին դատապարտյալների բնութագրերը՝ նրանց սոցիալական խմբով, կարգավիճակով և շրջապատի նկատմամբ հարաբերություններով պայմանավորված: Հետազոտության մասնակից հանցանք կատարած կանանց տարիքային բաշխվածությունը հետևյալ տեսքն ունի.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

Տարիքային խմբերի բաշխվածությունը



Ինչպես երևում է ստացված տվյալներից՝ հանցագործության հակված են ավելի շատ՝ 31-40 տարիքային խմբի կանայք, ովքեր կազմում են 33,8%, այնուհետև՝ 50-ից բարձր տարիքի կանայք՝ 27,7%:

Հարցվողների կրթական մակարդակը, ըստ ստացված տվյալների, ցույց է տալիս, որ հարցվողների 27,7%-ն ունի միջնակարգ հանրակրթական, 24,6%-ը՝ միջնակարգ մասնագիտական, մյուս 24,6%-ը՝ բարձրագույն կրթություն, մինչև 8-րդ դասարանի կրթություն ունի հարցվողների 21,5%-ը, իսկ կրթություն չունի 1,5%-ը: Ըստ էության՝ դատապարտված կանանց մեծամասնության բարձրագույն կրթություն չունենալը, ինչը կարող էր ապահովել պատշաճ աշխատանք և նվազագույն վարձատրության առկայությունը, նվազ հնարավորություն են տալիս, որ կարողանան հոգալ իրենց ընտանիքների պահանջմունքները:

Այժմ դիտարկենք հարցվողների ընտանեկան դրությունը: Հարցմանը մասնակից դատապարտյալների 27,7%-ն ամուսնացած է, 40%-ը՝ ամուսնալուծված, 16,9%-ը՝ այրի, իսկ մնացած 15,4%-ը՝ չամուսնացած: Համադրելով պատասխանները՝ տեսնում ենք, որ ամուսնալուծվածների 40% և այրիների 12,3% տարբերությունն էական է (այս գործոնը կարելի է դիտարկել որպես հանցագործությանը նպաստող հանգամանք): Եթե ամուսնացած լինելու դեպքում ամուսնու առկայությունը հիմնականում ապահովում է ընտանիքի բարեկեցությունը, ապա ամուսնուն կորցնելու հանգամանքը կարող է կնոջը մղել անօրինական գործողությունների ընտանեկան հոգսը թեթևացնելու համար: Այստեղ կարող ենք ենթադրել, թե կանայք դիմել են հանցագործության՝ իրենց կենցաղային նվա-

զագույն պայմաններն ապահովելու, իրենց երեխաների հացի խնդիրը լուծելու համար, քանի որ նրանք միայնակ են, առանց կողակցի: Ըստ մեր հետազոտության տվյալների՝ երեխաներ ունեն ամուսնալուծված կանանց 80,8%-ը, այրի կանանց՝ 91%-ը: Եթե հաշվի առնենք նաև չամուսնացած կանանց 30%-ը, ովքեր նույնպես երեխաներ ունեն, ապա առանց ամուսինների կանանց բացարձակ մեծամասնությունը միայնակ է ապահովում երեխաների կենցաղը: Միայնակ մայր լինելը մեր հասարակությունում շատ ավելի բարդ է, քան ավելի զարգացած և առաջադեմ հասարակություններում: Ամուսնալուծվելիս, ինչպես ցույց են տալիս դեպքերը, կանանց իրենց նախկին ամուսինների կողմից հիմնականում էական նյութական օգնություն չի ցուցաբերվում: Այս հանգամանքն էլ հանգեցնում է, որ նրանք հայտնվում են ծանր սոցիալական պայմաններում և դիմում են ծայրահեղ քայլերի:

Հետազոտության շրջանակներում բարձրացվել են այն հարցերը, որոնք շատ կարևոր և յուրահատուկ դեր ունեն կին դատապարտյալների համար. ընտանեկան հարաբերությունները, երեխաների առկայությունն ընտանիքում, արդյոք շփվում են դատապարտյալ մայրերն իրենց երեխաների հետ, և ո՞րն խնամակալության ներքո են նրանք այժմ մնացել:

Դատապարտյալների 27,7%-ն ունի մեկ երեխա, 33,8%-ը՝ երկու երեխա, 13,8%-ը՝ երեք երեխա, իսկ 24,6%-ը երեխաներ չունեն: Թեև դատապարտյալ կանանց մեծամասնությունն ունի երեխաներ, ընդ որում, ինչպես վերը նշվեց՝ չունի նաև ամուսին, սակայն ստացվում է, որ երեխաներ ունենալու հանգամանքը, նրանց ապագայի մասին մտահոգությունը

շատ դեպքերում զերծ չի պահել դատապարտյալ կանանց հանցանք կատարելուց: Այուս կողմից էլ՝ կին դատապարտյալների մեծամասնության՝ երեխա ունենալու հանգամանքը, ամուսին չունենալը կարող են վկայել նրանց նյութական վատ վիճակի մասին, և հենց այդ գործոնն էլ կարող է որոշակի հանցածին նշանակություն ունենալ:

Այժմ փորձենք պարզել, թե դատապարտյալ կանանց երեխաներն ո՞ւմ խնամակալության ներքո են մնացել: Ըստ հարցման տվյալների՝ դատապարտյալ ամուսնացած կանանց 26,7%-ի երեխաներին մեծացնում են ամուսինները, 20%-ի երեխաները ծնողների խնամքի տակ են, 6,7%-ը՝ ազգականների, իսկ 46,7%-ի երեխաները չափահաս են և առանձին են ապրում: Ամուսնալուծված կանանց 19%-ի դեպքում է, որ երեխաներն ամուսնու խնամքի տակ են, 38,1%-ի երեխաները ծնողների խնամքի տակ են, 4,8%-ը՝ ազգականների, 9,5%-ը՝ մանկատան կամ հասարակական կազմակերպության, իսկ 23,8%-ի երեխաները չափահաս են և առանձին են ապրում: Ինչ վերաբերում է այրիներին՝ նրանց թեև քիչ քանակին, այնուամենայնիվ, նրանց 40%-ի երեխաները ծնողների, ազգականների և մանկատան կամ հասարակական կազմակերպության խնամքի տակ են, իսկ մնացած 60%-ի երեխաները չափահաս են և առանձին են ապրում: Ներկայացված տվյալներից երևում է, որ բոլոր դեպքերում երեխաներն ապրում են ոչ լիարժեք ընտանիքներում (նույնիսկ ամուսնացածների դեպքում՝ նրանց ընդամենը 26,7%-ի երեխաներն են հայրական խնամքի տակ):

Ստացված արդյունքները կարող են հանգեցնել այն հետևության, որ երեխաներ ունեցող դատապարտյալ կանանց մեծամասնությունն ամուսնալուծված կամ այրի կանայք են, քանի որ ընդամենը 16,3%-ի դեպքում է, որ երեխաները մնացել են հայրական խնամքի ներքո:


Հարցազրույցի միջոցով կարողացանք նաև պարզել, որ այն կանայք, ովքեր ունեն երեխաներ, հաճախակի շփվում են նրանց հետ, և նրանց բոլոր երազանքները, նպատակները, ցանկությունները կապված են հենց իրենց երեխաների հետ: Ընդ որում՝ երեխաների հետ հաճախ շփվում են երեխա ունեցող կանանց

80%-ը, 10%-ն էլ հազվադեպ է շփվում, և միայն 10% կանայք են, որ երեխաների հետ շփում չեն ունենում: Մեր հետազոտության արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ անգամ այն կանայք, ովքեր հանցագործություն են կատարել, մոր դերում մնում են անթերի և հանուն իրենց երեխաների պատրաստ են նորից վերադառնալ հասարակություն և դառնալ հասարակության լիարժեք անդամ: Կարելի է ենթադրել, թե երեխաների հետ հաճախակի շփումը և կապի պահպանումը կին դատապարտյալների վերափոխման և պատժի կրումից հետո հետագա հանցավոր վարքագծից զերծ մնալու առումով կարող է էական դրական ազդեցություն ունենալ:

Ինչ վերաբերում է իրենց ամուսինների հետ հարաբերություններին՝ հարցման մասնակիցների 62,5%-ը նշել է, որ նախքան դատապարտվելն ունեցել են մտերիմ հարաբերություններ, իսկ 37,5%-ը նշել է, որ իր և ամուսնու հարաբերությունները կոնֆլիկտային են եղել: Ճիշտ է՝ մեր ստացած տվյալներով՝ կոնֆլիկտային հարաբերությունները մեծամասնություն չեն կազմում, սակայն 37,5%-ը նույնպես քիչ չէ և չէր կարող չանդրադառնալ կնոջ հոգեկան ներաշխարհի խաթարմանը: Այս առումով՝ չենք կարող չնշել, որ կանայք հաճախ են ընտանիքում կամ շրջապատում ենթարկվում որոշակի բռնության և վատ վերաբերմունքի, ինչը կարող է նպաստել նրանց ագրեսիվ վարքագծի ձևավորմանը: Շատ հաճախ, ընտանիքում ամուսնու կողմից ենթարկվելով ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, ծեծի, արժանանալով վատ կամ նվաստացնող վերաբերմունքի, ի վերջո՝ դա կարող է հանգեցնել կնոջ կողմից բռնություն գործադրելու կամ հանցանք կատարելու: Դրա հետ կապված էլ՝ հաճախ կանանց կողմից ոտնձգության կարող են ենթարկվել ամուսինները: Այս առումով՝ այն փաստը, որ կին դատապարտյալների 37,5%-ի դեպքում ամուսնու հետ հարաբերությունները եղել են կոնֆլիկտային, կարող է վկայել վերը նշվածի մասին:

Կին դատապարտյալների և իրենց ամուսինների հիմնական կոնֆլիկտների պատճառները կարող ենք տեսնել **Գծապարկեր 2-ում**.

Դատապարտյալի և նրա ամուսնու փոխհարաբերությունները



Գծապատկեր 2-ում, որպես կոնֆլիկտի պատճառ, կարող ենք տեսնել ամուսինների հակվածությունը խմիչքի նկատմամբ, ընտանիքի ֆինանսական խնդիրները, ամուսնու կողմից բռնությունը և մի շարք այլ պատճառներ, որոնք կարող են կնոջ համար նպաստող գործոն հանդիսանալ՝ հակաիրավական քայլի դիմելու:

Կին դատապարտյալների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից՝ կարևոր է ուսումնասիրել այն ընտանեկան կազմը, որտեղ ծնվել և մեծացել է կինը, ինչն էական նշանակություն կարող է ունենալ հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմի բացատրման տեսանկյունից:

Անձի ձևավորման, կենսագործունեության, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական զարգացման գործընթացում կարևոր գործառույթ է իրականացնում ընտանիքը: Ընտանիքը՝ որպես սոցիալ-հոգեբանական խումբ, ապահովում է անձի առաջնային սոցիալիզացիան, որի շնորհիվ անձը յուրացնում է սոցիալական դերեր, վարքագծային նորմեր և կանոններ, որոնք կարևոր նախապայման են հասարակական գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար: Այս միջավայրում են ձևավորվում նաև անձի արժեքային կողմնորոշումներն ու նախասիրությունները, սովորույթները, որոնք էլ նպաստում են անձի կողմից դրսևորվող վարքագծային մոդելի ձևավորմանը:

Բացի այդ՝ կարևորելով օբյեկտիվ և սուբյեկտիվ փոխներգործության մեխանիզմը՝ հնարավորություն կունենանք տարանջատելու կանանց սոցիալական ընդհանրության հոգեբանական ուղղվածության էությունը, հասարակության հնարավորություններն անհատի զարգացման և ինքնազարգացման գործում, ինչպես նաև նրանց վրա դաստիարակության ազդեցության սահմաններն ու անհատի ձևավորման իրական գործընթացը:¹ Այսպես՝ ուսումնասիրության առարկան է դառնում այն միկրոմիջավայրը՝ ընտանիքը, որտեղ կարող են ձևավորվել էական նշանակություն ունեցող հանցածին հակումները: Ուստի կանանց հանցավորությանը նպաստող գործոնների բացահայտման տեսանկյունից՝ կարևոր նախապայման են ընտանեկան կարգավիճակի հետ կապված գրեթե բոլոր հանգամանքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Այդ նպատակով էլ հետազոտության իրականացման ընթացքում անդրադարձ է կատարվել կին դատապարտյալների ծնողական ընտանիքի կազմին, ծնողների՝ միմյանց և երեխաների հետ փոխհարաբերություններին, դաստիարակության և այլ հարցերին, որոնք էական նշանակություն կարող են ունենալ անձի սոցիալիզացիայի, այդ թվում՝ հանցածին և ոչ հանցածին գործոնների ձևավորման գործում:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

¹ Колюцкий В.Н. Возрастная психология: Развитие человека от рождения до поздней зрелости: (Полный жизненный цикл развития человека): Учеб. пособие для студентов высших спец. учебных заведений.– М., 2001г; с. 185.

Աղյուսակ 1

Ընտանիքում երեխաների քանակը

Քանակ	Դատապարտվածներ	(%)	Չդատապարտվածներ	(%)
1 երեխա	6	9,2	1	1,5
2 երեխա	9	13,8	25	38,5
3 երեխա	19	29,2	26	40
4 և ավելի երեխա	31	47,8	13	20
Ընդհ.	65	100	65	100

Մեր իրականացրած հետազոտության արդյունքները փաստում են, որ հետազոտության մասնակից երկու խմբում առկա է նշված կատեգորիաների որոշակի տարբերություն: Բացի այդ՝ կին դատապարտյալների շրջանում առավել հաճախ հանդիպում են չորս և ավելի երեխայի առկայությամբ ընտանիքները (47,8%):

Քրեաբանական մի շարք ուսումնասիրություններ փաստում են, որ չորս և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներում նկատելի է կանանց կողմից հանցավոր արարք կատարելու բարձր հավանականություն: Հավանաբար՝ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտանիքի բազմանդամությունը բացասական ազդեցություն կարող է ունենալ ընտանիքի կենսամակարդակի վրա, որպես արդյունք՝ առանձնացրել ենք հանցավորությունը պայմանավորող գործոններից՝ աղքատությունը: Մինչդեռ, բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով՝ աղքատությունն առանձին չենք կարող դիտարկել որպես հանցանքի կատարման հիմք, այլ, որպես կանոն՝ վերջինս համակցվում է այնպիսի գործոնների հետ, ինչպիսին են ընտանիքում աշխատանքի բացակայությունն ու դրա հետևանքով առաջացած մի շարք խնդիրներ, այդ թվում՝ ընտանիքի հետ ջերմ-հուզական հարաբերությունների և ծնող-երեխա փոխհարաբերությունների խաթարումը, ծնողների միջև առկա կոնֆլիկտային հարաբերությունները, որոնք, ըստ էության՝ նպաստում են ընտանիքում երեխայի սոցիալիզացիայի ձևավորմանը:²

Աղյուսակ 2

Ընտանիքում ծնողների կարգավիճակը

	Դատապարտվածներ (%)	Չդատապարտվածներ (%)
Ծնողներն ամուսնավորված են եղել	7,1	11,1
Հայրս մեկնել է արտագնա աշխատանքի	71,4	88,9
Մայրս մեկնել է արտագնա աշխատանքի	7,2	0
Հայրս մահացած է	14,3	0
Մայրս մահացած է	0	0
Ընդհ.	100	100

Քրեաբանական տեսանկյունից էական նշանակություն կարող է ունենալ նաև ընտանիքում ծնողների կարգավիճակը, որը կարող ենք դիտարկել որպես երեխաների կողմից հակաօրինական վարքագիծ ձևավորելու պատճառներից մեկը: Հետազոտության արդյունքները փաստում են, որ կին դատապարտյալների ընտանիքների 71,4%-ի դեպքում հայրը մեկնել է արտագնա աշխատանքի, իսկ 7,2%-ի դեպքում՝ մայրը, որտեղից կարող ենք վկայել կին դատապարտյալների ընտանիքում ծնողների գործազրկության փաստի մասին: Հատկապես սուր կերպով է ընկալվում բազմանդամ ընտանիքներում գործազրկության փաստը, որը կարող է հանգեցնել ծնողների միջև առկա լարված հարաբերությունների ձևավորմանը, անլիարժեքության բարդույթի, ընկճվածության, օտարվածության զգացման, «ֆրուստրացիայի», ագրեսիվության և այլն: Ակնհայտ է, որ նման վիճակում գտնվող ծնողը չի կարող իրականացնել իր առաքելությունը:

Բացի այդ՝ ինչպես ծնողների ամուսնալուծությունները, որոնք կին դատապարտյալների ծնողների դեպքում կազմել են 7,1%, այդ թվում՝ ծնողների արտագնա աշխատանքի մեկնումը, որին անդրադարձ կատարվել է, նույնպես կարող են հանգեցնել ընտանիքում ջերմ-հուզական մթնոլորտի դեգրադացմանը, որտեղ որպես տուժող անձ հանդես է գալիս հենց երեխան: Նկատենք, որ հետազոտության արդյունքները փաստեցին, որ հարցվողների մեծա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

² Змановская Е.В., Девиантология (Психология отклоняющегося поведения): М., «Академия», 2006 г; с. 42

մասնությունն ապրում է ոչ լիարժեք ընտանիքներում, ուստի հարկ ենք համարում նշելու ընտանիքում երեխայի հետ հուզական ջերմ հարաբերություններ ունենալու կարևորության, ինչպես նաև հուզական աջակցության ու հարմարավետության ապահովումը, որոնք հնարավորություն կտան նվազեցնելու նրանց կողմից հանցավոր արարք կատարելու հավանականությունը:

Հետազոտության մասնակից խմբերի դաստիարակությամբ զբաղվող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները հաստատում են վերոգրյալը:

Աղյուսակ 3

Ընտանիքում դաստիարակությամբ զբաղվողների վիճակագրական տվյալները

	Դատապարտվածներ (%)	Չդատապարտվածներ (%)
Մայր	48,2	54,2
Հայր	31,3	36,4
Տատիկ	14,3	5,9
Պապիկ	4,5	3,5
Այլ ազգականներ	1,7	0
Ընդհ.	100	100

Ընտանիքի կարևորագույն գործառույթներից առանձնացրել ենք դաստիարակչական գործառույթը և այդ ֆունկցիան իրականացնող անձանց: Ակնառու է դաստիարակչական և սոցիալ-տնտեսական գործառույթների միջև էական կապը, քանի որ դաստիարակությունն

սկսվում է հենց նյութական ապահովվածությունից և ծնողների կողմից դրսևորվող խնամքից: Նկատենք, որ հետազոտության արդյունքները փաստում են հետազոտվող մասնակիցներից՝ կին դատապարտյալների (48,2%) դաստիարակությամբ զբաղվողների շրջանում մեծ դերակատարում ունեցող մոր դերի գերակայության մասին: Մի շարք քրեաբանական ուսումնասիրություններ փաստում են, որ հոր դերի բացակայությունը երեխայի հոգեկան զարգացման վրա կարող է էական ազդեցություն ունենալ: Քանի որ, առանց հոր ներկայության և նրա հետ շփման, մոր ազդեցությունը երեխայի ինքնազարգացման վրա էլ ավելի է մեծանում, այդ պարագայում երեխան չի ունենում վարքի ընդօրինակման այլ ձև: Նա զրկվում է հոր կողմից դրսևորվող վարքագծի հետ նույնականանալուց, քանի որ առավել մեծ է հոր դերը երեխային հասարակություն ներգրավելու մեջ: Իսկ միայնակ մայրը՝ մի շարք այլ խնդիրներով ծանրաբեռնված, ժամանակ չի ունենում զբաղվելու երեխայի խնամքով՝ հանգեցնելով մոր և երեխայի միջև օտարացման, որի պարագայում էլ, ըստ էության, կարող ենք խոսել արդեն անձի վարքագծային մոդելում հանցածին հակումների ձևավորման առկայության մասին:³

Ամփոփելով՝ նշենք, որ ընտանիքում ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների հանդեպ, հաճախակի բնույթ ունեցող կոնֆլիկտները, անհանդուրժողականությունն ընտանիքի անդամների միջև և այլն հանգեցնում են անլիարժեք ընտանիքների ձևավորմանը, որն էլ հիմք է անձի կողմից հակասոցիալական վարքագծի դրսևորմանը:



³ Кудрявцев, В.Н. Криминология: Учебник / В.Н. Кудрявцев, В.Е. Эминов.– 3-е изд., перераб. идоп.– М.: Юристъ, 2004 г.; с. 734.

ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱՆ

ԵԽ և ԵՄ Երևանյան գրասենյակի ազգային փորձագետ,
ՀՀ կառավարման ակադեմիայի և
Արդարադատության ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
արդարադատության առաջին դասի խորհրդական

ԻՆՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ**

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացման ու պաշտպանության համատեքստում պատշաճ վարչարարությունը ձեռք է բերել աննախադեպ մեծ նշանակություն՝ որպես հիմնարար իրավունք ամրագրվելով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում՝ դրանով իսկ նախանշվելով այդ իրավունքի համակողմանի իրացման համար անհրաժեշտ իրավական հիմքերի շրջանակը: Պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի արդի պահանջներին ներդաշնակ ու համահունչ իրավակարգավորումների սահմանման համատեքստում որպես վարչական վարույթի հատուկ տեսակ կարևոր նշանակություն ունի նաև վարչական ակտերի հարկադիր կատարումը:

Հարկ է ընդգծել, որ վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը, լինելով վարչական վարույթի հատուկ տեսակ, չի ընդգրկվել վարչական վարույթի փուլերի մեջ, քանի որ վերջինիս պարտադիր փուլ չէ: Վարչական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտությունը ծագում է այն դեպքում, երբ վարչական ակտի հասեցատերը կամովին չի կատարում իր վրա վարչական ակտով դրված որոշակի պարտականությունները: Այսինքն՝ կարելի է նշել, որ վարչական իրավունքի տեսությանը հայտնի է վարչական ակտի կատարման երկու ձև, դրանք են՝ անձի կողմից վարչական ակտի կամավոր կատարումը և վարչական ակտի հարկադիր կատարումը:

Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի առանձնահատկությունների և իրավական հիմքերի ավելի ամբողջական ուսումնասիրության տեսանկյունից, կարծում ենք՝ անհրաժեշտ է դիտարկել նշված վարույթի շրջանակներում օգտագործվող որոշ եզրույթ-

ների դոկտրինալ և օրենսդրական սահմանումները:

Հասարակության կառավարումը, հասարակական կյանքի կարգապահության և օրինականության ապահովումն իրականացվում են մարդկանց վարքագծի և գիտակցության վրա ներգործության միջոցով: Այդպիսի ներգործության միջոցներ են հասարակական և պետական գործունեության այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են համոզումը և հարկադրանքը, որոնք, որպես կանոն, հանդես են գալիս զուգակցված և, որպես պետական կառավարման միջոցներ՝ հասարակական երևույթներ են, քանի որ բովանդակային առումով արտացոլվում են միայն մարդկանց միջև կոնկրետ հարաբերությունների առաջացման շրջանակներում: Հասարակությունում գործում են հարկադրանքի բազմազան տեսակներ՝ իրավական, բարոյական, նյութական և այլն: Պետական կառավարման խնդիրների կարգավորման տեսանկյունից արժեքավոր են հարկադրանքի այն տեսակները, որոնք իրավակարգի պահպանման մեթոդ են, կարգավորված են օրենքով և ուղղված են օրենսդրությամբ ամրագրված իրավական նորմերի պահպանմանը; Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի դեպքում հարկադրանքը հանդես է գալիս որպես միայն իրավական ակտերով սահմանված հարկադրանք, քանի որ հակառակ պարագայում անխուսափելիորեն կունենա հակաիրավական բնույթ:

Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ իրավաբան գիտնականներից շատերը տարանջատել են այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են պետական և իրավաբանական հարկադրանքը:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

Ն. Մակարեյկոյի համաձայն՝ պետական հարկադրանքը սոցիալական հարկադրանքի այն տեսակն է, որը հոգեբանական, ֆիզիկական, նյութական ու այլ տեսակի ներգործության միջոցների համակցություն է և իրականացվում է օրենքով սահմանված կարգով լիազոր սուբյեկտի կողմից հասարակական կարգի և անվտանգության պահպանման նպատակով:¹ Իրավաբանական հարկադրանքը բնութագրվում է որպես հարկադրանքի իրավական ձև, որը սահմանվում է իրավունքի նորմերով և կիրառվում է այդ նորմերի դրույթների համապատասխան:²

Մի շարք գիտական աշխատություններում գերակշռում է գաղափարն այն մասին, որ պետական և իրավաբանական հարկադրանքները պետք է դիտարկվեն որպես մեկ միասնական եզրույթ, այն է՝ «պետահրավական հարկադրանք»: Կարծում ենք՝ այս մոտեցումն ունի հստակ սահմանված օբյեկտիվ հիմնավորումներ, քանի որ պետական հարկադրանքի և իրավաբանական հարկադրանքի հատկանիշները և բովանդակությունը միմյանց հետ համընկնում են: Պետական հարկադրանքը կարող է գոյություն ունենալ միայն իրավական ամրագրում ստանալու միջոցով, պետք է լինի օրինական և չհակասի մարդու իրավունքների ինստիտուտի հիմնարար գաղափարներին, այդ իսկ պատճառով պետական և իրավաբանական հարկադրանքներ հասկացությունները պետք է դիտարկվեն որպես միմյանց հետ փոխկապակցված և միմյանց լրացնող:

Ինչ վերաբերում է վարչական հարկադրանքին՝ նախ անհրաժեշտ է նշել, որ դա իրավական հարկադրանքի տարատեսակ է, այդ իսկ պատճառով դրան բնորոշ են վերջինիս առանձնահատկությունները:

Ն.Վ. Մակարեյկոն համարում էր, թե վարչական հարկադրանքը պետական կառավարում իրականացնելու մեթոդ է, որը հիմնվում է վարչահրավական նորմերի վրա, իրականաց-

վում է լիազոր մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից հատուկ վարույթային կարգով, ֆիզիկական, հոգեկան և այլ տեսակի ներգործության միջոցներով և ուղղված է հասարակական կարգի և անվտանգության պահպանմանը:³ Իսկ Յու. Մ. Կոզլովը պնդում էր, որ վարչական հարկադրանքը, որպես կանոն, կիսադատական (քվազիդատական) բնույթի հարկադրանքն է, որն իրականացվում է գործադիր մարմինների կողմից (պաշտոնատար անձանց կողմից) անմիջականորեն իրենց ամենօրյա մշտական գործունեության ընթացքում:⁴

Վարչական հարկադրանքի առանձնահատուկ հատկանիշներն են.

- 1) սահմանվում է վարչահրավական նորմերով և հիմնվում է դրանց վրա,
- 2) կիրառվում է օրենքով սահմանված լիազոր վարչական մարմնի կողմից,
- 3) կիրառվում է ինչպես ֆիզիկական, այդպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ,
- 4) կիրառվում է հասարակական հարաբերությունների այնպիսի ոլորտներում, որոնք կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով, վերջիններս մասամբ կարգավորում են նաև կարգապահական պատասխանատվությանն առնչվող հարաբերությունները (օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով զինծառայողները վարչական իրավախախտումների համար, բացառությամբ որոշ տեսակների, կրում են կարգապահական պատասխանատվություն),
- 5) իրականացվում է ֆիզիկական, հոգեբանական և այլ տեսակի ներգործության միջոցներով,
- 6) առաջացնում է անձի համար ոչ բարենպաստ հետևանքներ և իրավունքների սահմանափակումներ,
- 7) կիրառման հիմքում, որպես կանոն, ընկած է վարչական իրավախախտման կատարումը կամ այդպիսի իրավախախտում կատար-

¹ Николай Макарейко, Административное право, онлайн-книга <https://www.e-reading.club/book.php?book=97336> (09.07.2018)

² Теория государства и права: Учебник для вузов / Под ред. проф. В.М. Корельского и проф. В.Д. Перевалова.– 2-е изд., изм и доп.– М.: Издательство НОРМА, 2000.– С. 450-451.

³ Н.В. Макарейко, Административное право, учебное пособие для прикладного бакалавриата // 8-ое издание перераб. и доп., Москва, Юрайт, 2014 г., 212 с., с. 134.

⁴ Козлов Ю.М., Административное право, учебник: М., Юристъ, 1999г., 320 с., с. 85.

րելու վտանգը, ինչպես նաև վարչական վարույթի բնականոն ընթացքի ապահովումը,

8) կիրառվում է, որպես կանոն, արտադատական կարգով:

Վերը թվարկված հատկանիշներով էլ բնորոշվում են վարչական հարկադրանքի իրավաբանական բովանդակությունը և էությունը:

Վարչական հարկադրանքը նույնպես կիրառվում է վարչական ակտի ընդունմամբ, իսկ կիրառման սահմանները հստակ ուրվագծված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում:

Այսպիսով՝ վարչական ակտերի հարկադիր կատարումն իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից վարչական ակտի պահանջները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած անձի նկատմամբ անձնական կամ գույքային բնույթի ներգործության միջոցներով վարչական ակտի կատարումն է:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից նպատակահարմար է առանձնացնել նաև «վարչական ակտ» եզրույթի բնորոշումը:

«Վարչական ակտ» հասկացությունը դիտարկելիս, եթե անդրադառնանք ռուսական իրավական մտքին, ապա կտեսնենք, որ, վարչական ակտ հասկացությանը զուգահեռ՝ որպես դրա հոմանիշ օգտագործվում են գործադիր իշխանության մարմնի իրավական ակտ (правовой акт исполнительной власти), կառավարման իրավական ակտ (правовой акт управления), պետական ադմինիստրացիայի ակտ (акт государственной администрации) և այլ եզրույթներ: Այսպիսով՝ մեկ հասկացությանը վերաբերող նման եզրույթների բազմազանությունը մատնանշում է այն հանգամանքը, որ «վարչական ակտ» հասկացությունն անմիջականորեն դիտարկվում է որպես գործադիր իշխանության հետ կապակցված իրավաբանական մի հասկացություն:

Իրավաբանական բառարաններում վարչական ակտը հիմնականում բնորոշվել է որ-

պես պետական կառավարում իրականացնող մարմնի ակտ, որը ի, տարբերություն նորմատիվ ակտի, սահմանում, փոփոխում և վերացնում է կոնկրետ իրավահարաբերություններ, այլ ոչ թե՝ ընդհանուր կանոններ, և որի իրավաբանական ուժը կախված է այն հանգամանքից, թե՞ որ մարմնի կողմից է ընդունել:⁵

Ըստ ռուս գիտնական-իրավաբանների՝ վարչական ակտն այն իրավական ակտն է, որը կարգավորում է հասարակական հարաբերությունները կառավարման ոլորտում կամ լուծում է կառավարման ոլորտում ծագող կոնկրետ գործերը (վեճերը), որով սահմանվում է իրավունքի սուբյեկտների համար նոր իրավական կարգավիճակ, որն ունի պետաիշխանական բնույթ, որը ընդունվում է հանրային կառավարում իրականացնող սուբյեկտների կողմից սահմանված վարույթային կարգով որոշակի նպատակների հասնելու և որոշակի խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև կառավարման գործառույթը իրանակացնելու նպատակով:⁶

Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչական իրավունքում վարչական ակտ է համարվում ցանկացած կարգադրություն, որոշում կամ վարչական մարմնի այլ իշխանական գործողություն, որն ուղղված է կարգավորելու հանրային իրավունքի ոլորտում ծագող մասնավոր կամ եզակի դեպքը, որն ունի արտաքին բնույթի իրավական հետևանքներ:⁷

«Վարչական ակտ» հասկացության օրենսդրական սահմանումը նախատեսված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասում՝ հետևյալ ձևակերպմամբ. «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց

⁵ Юридический электронный словарь академик // <https://dic.academic.ru/dic.nsf/lower/12816> (24.03.2018)

⁶ Административное право: учебник / Б.В. Россинский, Ю.Н. Стариков.– 4-ое изд., пересмотр. и доп.– М.: Норма, 2009.– 972с., с. 437.

⁷ Административно-процессуальное право Германии: Закон об административном производстве; Закон об административно-судебном процессе; Законодательство об исполнении административных решений: пер. с нем. / В. Бергманн, введ., сост.– М.: Волтерс Клувер, 2007-288 с.– (Серия «Германские и европейские законы»; кн. 4).– парал. тит. л. нем.– ISBN 5-466-00226-7 (в пер.), с. 35

համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»: Իսկ նշված հոդվածի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

Վարչական ակտերի շրջանակն անհարկի նեղացնելը և բացառապես անհատական ակտերով սահմանափակվելը չի բխում միջազգային իրավական չափանիշներից: **Այսպես՝ Եվրոպայի Խրիդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի R(2004) 20 հանձնարարականի** 1-ին կետով սահմանված այն դրույթը, որտեղ նշված է, որ վարչական ակտ է նաև նորմատիվ ակտը: Այսպես, ըստ վերը նշված հանձնարարականի՝ վարչական ակտեր են վարչական մարմնի անհատական և նորմատիվ ակտերը, որոնք ընդունվում են սահմանված կարգով հանրային իշխանություն իրականացնելու ընթացքում և կարող են շոշափել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքները և շահերը Այսինքն՝ վարչական ակտ է նաև ոչ միայն անհատական, այլև նորմատիվ ակտը:

Հարկ է ընդգծել, որ, որոշ բացառություններով հանդերձ՝ վերը նշված օրենսդրական բնորոշումը կարող էր ամբողջությամբ ներառել ոչ միայն անհատական, այլև նորմատիվ իրավական ակտերը, ինչը միանգամայն հիմնավորված կլիներ, սակայն միանշանակ վերապահումներն առ այն, որ վարչական ակտն անհատական ակտ է, ամբողջովին խաթարել է վարչական վարույթի և վարչարարության բուն էությունը: Այն, որ վերը նշված հատկանիշներով օժտված է ոչ միայն անհատական, այլև նորմատիվ իրավական ակտը, վիճահարույց չէ, ավելին՝ հենց նորմատիվ իրավական ակտերն են հաճախ առավելապես բնութագրվում, որպես արտաքին ներգործություն ունեցող, հանրային իրավունքի բնագավառում հարաբերությունների կարգավորման նպատակով անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վե-

րացնելուն կամ ճանաչելուն ուղղված իրավական ակտեր:⁸

Ինչպես նշեցինք՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական ակտի հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նշված օրենքի 12-րդ գլխի «Վարչական ակտի հարկադիր կատարումը» վերտառությամբ նորմերով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Վարչական ակտի հարկադիր կատարումը ուղղված է վարչական ակտից բխող պարտականությունների կատարմանը: Իսկ պարտականությունների ծավալի և դրանք իրականացնող սուբյեկտի մասին կարգավորումները մատնանշվում են բացառապես վարչական ակտով: Վարչական մարմինների ակտերը ենթակա են պարտադիր կատարման վարչական ակտի հասցեատիրոջ կողմից: Եթե վարչական ակտով այլ ժամկետներ սահմանված չեն, ապա վարչական ակտը ենթակա է կատարման՝ ուժի մեջ մտնելու պահից: Վարչական ակտի հարկադիր կատարման այդ կարգավորումներում ոչինչ չի կարող փոխվել: Այդ պատճառով վարչական ակտի հարկադիր կատարումը կարող է սկզբունքորեն ուղղված լինել միայն վարչական ակտի հասցեատիրոջ դեմ և նրանից կարող է պահանջել կատարել վարչական ակտով սահմանված գործողությունը կամ ձեռնպահ մնալ դրանից: Եթե պարզվի, որ հանգամանքները վարչական ակտի ընդունումից հետո փոխվել են, այնպես որ նպատակահարմար չէ միջոցներ ձեռնարկել հասցեատիրոջ դեմ, և անհմաստ է նրան ստիպել կամ արգելել որևէ բան անել, ապա վարչական ակտն անհրաժեշտ է վերացնել և ընդունել փոփոխված բովանդակությամբ նոր ակտ: Հարկադիր կատարման ենթակա է միայն այն, ինչ մինչ այդ սահմանվել է վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 12-րդ գլխով սահմանված վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի մասնակիցների

⁸ Գևորգ Դանիելյան, «Վարչական վարույթի առանձին տեսակների անհրաժեշտությունը պայմանավորող չափանիշները» (2017, հոդված), ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ, գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2017, էջ 81:

շրջանակը: Մասնավորապես՝ վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի մասնակիցներն են պարտավոր անձը և կատարողական մարմինը: Տարբերությունն այն է, որ դատական ակտերի հարկադիր կատարման դեպքում կողմեր են պահանջատերն ու պարտապանը, իսկ բուն հարկադրանք իրականացնողը կողմ չհանդիսացող իրավասու վարչական մարմինն է, մինչդեռ վարչական ակտերի հարկադիր կատարման վարույթում կողմը միաժամանակ կատարողական մարմինն է:⁹

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր անձը որոշակի գործողություն կատարելու կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ ընդունված վարչական ակտի հասցեատերն է: Հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նշված 79-րդ հոդվածը նախատեսում է «պարտավոր անձ» եզրույթի սահմանումը՝ դրանով իսկ տալով վերջինիս համապատասխան իրավական կարգավիճակ: Միևնույն ժամանակ՝ օրենսդիրը չի նախատեսում այդպիսի իրավական կարգավիճակով հանդես եկող անձի իրավունքները և պարտականությունները սահմանող իրավադրույթը: Կարծում ենք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի V բաժնի վարչական ակտի հարկադիր կատարումը վերտառությամբ 12-րդ գլուխը պետք է լրացվի նշված օրենքի 79-րդ հոդվածով սահմանվող «պարտավոր անձի» իրավական կարգավիճակով հանդես եկող վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի մասնակցի իրավունքները և պարտականությունները սահմանող նորմերով այն հաշվառմամբ, որ պարտավոր անձը, քանի որ վարչական ակտի հասցեատերն է, ունի նաև վարչական ակտի հասցեատիրոջ՝ վերը նշված օրենքով տրված իրավունքներն ու պարտականությունները:

Այսպիսով՝ առաջարկում ենք վարչական ակտի հարկադիր կատարման վարույթում պարտավոր անձի իրավունքները և պարտականությունները հստակեցնելու նպատակով «Վար-

չարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 79.1. Պարտավոր անձի իրավունքները և պարտականությունները.

1. Պարտավոր անձն իրավունք ունի բողոքարկելու հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին կատարողական մարմնի որոշումները, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը:

2. Պարտավոր անձը պարտավոր է կատարել կատարողական մարմնի օրինական պահանջը, ցույց չտալ դիմադրություն փոխարինող գործողության կամ անմիջական հարկադրանքի կիրառման ընթացքում»:

Ինչպես նշեցինք՝ վարչական ակտի հարկադիր կատարման սահմանները հստակ ուրվագծված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում՝ համաչափության սկզբունքի որոշակիացմամբ: Մասնավորապես՝ այդ սկզբունքն իր ընդգրծված կարևորությամբ կոչված է երաշխավորելու հարկադրանքի միջոցի կիրառման իրավաչափությունը: Համաչափության սկզբունքը կոչված է ապահովելու վարչական մարմնի կողմից կիրառվող միջոցի պիտանիությունը, այսինքն՝ ընտրված հարկադրանքի միջոցը պետք է նվազ ձևով միջամտի անձի իրավունքին: Սա նշանակում է, որ վարչական մարմինը պետք է գործադրի մեղմ միջոցը հետապնդվող նպատակին հասնելու համար: Հաջորդ տարրն անհրաժեշտություն է, որը պետք է գնահատվի հետապնդվող նպատակին հասնելու հնարավորության և թույլատրելիության համատեքստում, և վերջին տարրը համարժեքությունն է, որը դրսևորվում է հարկադրանքի միջոցի և հետապնդվող նպատակի համարժեքության ապահովմամբ:

Վարչական ակտերի հարկադիր կատարումն իրականացվում է համաչափության սկզբունքի պահպանմամբ հարկադրանքի այն միջոցները կիրառելով, որոնք սպառիչ կերպով թվարկվում են ՎՀՎԿՕ-ում (հոդված 78, մաս 2): Դրանք են՝

✓ Փոխարինող գործողությունը.

⁹ Գ.Դանիելյան / Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ / Եր.: Տիգրան Մեծ, 2011.– 384 էջ, էջ 112:

- ✓ Տուգանքը.
- ✓ Անմիջական հարկադրանքը:

Փոխարինող գործողության՝ որպես վարչական հարկադրանքի միջոցի առանձնահատկությունն այն է, որ դրա կիրառման դեպքում պարտավոր անձի վրա դրված պարտականությունը կատարում է մեկ այլ անձ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի համաձայն՝ եթե որևէ գործողություն կատարելու վերաբերյալ վարչական ակտով նախատեսված պարտականությունը պարտավոր անձը չի կատարում, բայց դրա կատարումը հնարավոր է մեկ այլ անձի կողմից, ապա կատարողական մարմինը կարող է վերջինիս հանձնարարել կատարելու այդ գործողությունը պարտավոր անձի հաշվին: Այստեղից հետևում է, որ փոխարինող գործողությունը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ խոսքն այնպիսի պարտականության կատարման մասին չէ, որը կարող է կատարել միայն անձամբ պարտավոր անձը: Այդ իսկ պատճառով փոխարինող գործողությունը չի կարող կիրառվել միայն այն դեպքում, եթե խոսքը պարտավոր անձի անգործության մասին է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը նախատեսում է այն, որ պարտավոր անձի հաշվին կատարողական մարմինն ինքը կարող է կատարել այդ գործողությունը, եթե դա հնարավոր է, և եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Հարկ ենք համարում ընդգծել այն, որ, անկախ այն հանգամանքից, թե ո՛ւմ կողմից է կատարվել պարտականությունը (այլ անձի կողմից կամ կատարողական մարմնի կողմից), փոխարինող գործողությունն իրականացվում է պարտավոր անձի հաշվին: Այսպիսով՝ փոխարինող գործողությունը, օրենսդրական կարգավորումների համաձայն, կարող է իրականացվել որևէ այլ անձի կամ հենց կատարողական մարմնի կողմից: Հարկ ենք համարում նշել, որ այն դեպքերում, երբ, հասցեատիրոջ փոխարեն՝ պարտականությունը կատարվում է այլ անձի կողմից, պարտավոր անձի և նրա պարտավորությունը կատարող անձի միջև որևէ ի-

րավական հարաբերություն չի առաջանում: Իսկ կատարողական մարմինն այս դեպքում պարտավորվում է այդ անձի հետ մասնավոր իրավունքի հիման վրա համապատասխան համաձայնություն կնքել: Սակայն, առանց հատուկ իրավական հիմքի, իսկ այդպիսիք առկա չեն ՎՀՎԿՕ-ում, այդ անձին չի կարելի ստիպել կատարել այն պարտականությունը, որը դրվել է պարտավոր անձի վրա:¹⁰

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պարտավոր անձը փոխարինող գործողության կամ անմիջական հարկադրանքի կիրառման ընթացքում դիմադրություն է ցույց տալիս, ապա դա կարող է հաղթահարվել ուժի կիրառմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Կարծում ենք՝ փոխարինող գործողության դեպքում, երբ, հասցեատիրոջ փոխարեն՝ պարտականությունը կատարվում է այլ անձի կողմից, որոշակի անհրաժեշտ իրավական հիմքերի և իրավակարգավորումների բացակայության հետևանքով հնարավոր են դեպքեր, երբ պարտավոր անձը կփորձի ոչ միայն դիմադրության միջոցով (որի կատարումից ձեռնպահ մնալը նրա պարտականությունն է), այլ նաև պարտականությունը կատարող այլ անձի վրա այլ տեսակի ներգործության կամ ազդեցության միջոցով (օրինակ՝ հոգեբանական, բարոյական և այլն) խոչընդոտել վարչական մարմնի կողմից դրված պարտականության կատարումը: Այսինքն՝ քննարկվող ոլորտի թերի իրավակարգավորումները կարող են պարտավորության կատարումից խուսափելու իրավական լծակ հանդիսանալ: Ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի V բաժնի 12-րդ գլխում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի իրավական նորմ, որը կբացառի նմանատիպ իրավական լծակներից օգտվելու հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը 81-րդ հոդվածում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ.

¹⁰ Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք / խմբ.՝ Հ. Թովմայան, Օ. Լուխերիանյոթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել.– Եր.: Բավիդ, 2011-424 էջ, էջ 338:

«3. Եթե կատարողական մարմնի հանձնարարությամբ պարտականությունն այլ անձի կողմից չի կատարվում պարտավոր անձի բարոյական, հոգեբանական, նյութական կամ այլ տեսակի ազդեցության հետևանքով, ապա կատարողական մարմինը կարող է պարտավոր անձի նկատմամբ նշանակել տուգանք կամ անմիջական հարկադրանք»:

Համապատասխան փոփոխություն կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածում՝ տուգանքի նշանակման հիմքերի համատեքստում լրացնելով նաև վերը նշված դեպքը որպես տուգանքի նշանակման հիմք:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրական բարեփոխումների և իրավակիրառական նշանակության մի շարք հիմ-

նահարցերի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներ մշակելու և դրանց բարելավման ուղղությունները կողմնորոշելու առումներով վարչական ակտի հարկադիր կատարման հիմնախնդիրների գիտագործնական վերլուծությունն առաջնահերթ կարևորություն ունի, քանի որ վարչական ակտերի հարկադիր կատարման վարույթը, չհանդիսանալով վարչական վարույթի պարտադիր փուլ, պատշաճ վարչարարության իրավունքի իրացման համատեքստում նպաստում է վարչական իրավահարաբերություններում օրինականության ապահովմանը, անցանկալի հետևանքների կանխմանը՝ վարչական ակտի պահանջներից շեղումներ թույլ չտալու ապահովմամբ և, անշուշտ, նաև վարչական ակտերի կայունության ապահովմանը:



АРШАК АРУТЮНЯН

Кандидат юридических наук, ассистент кафедры
правоведения и политологии права
Армянского государственного экономического университета

КАРЕН КОНДЖАКУЛЯН

Кандидат юридических наук, доцент кафедры
государственно-правовых и уголовно-правовых
дисциплин ФГБОУ ВО РЭУ им. Г.В.Плеханова,
доцент кафедры государственно-правовых
дисциплин ИГСУ РАНХиГС

ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО И ВИНА: ВОПРОСЫ СООТНОШЕНИЯ ПРАКТИКИ И ТЕОРИИ ЧЕРЕЗ ПРИЗМУ ОТВЕТСТВЕННОСТИ

Анализ специальной литературы позволяет выделить два подхода к пониманию вины юридического лица, а именно – субъективный и объективный.

Объективная вина – вина организации в зависимости от характера конкретного противоправного деяния юридического лица, совершившего и (или) не предотвратившего это деяние, т. е. это вина, обусловленная объективной стороной состава правонарушения.

Субъективная вина – отношение организации в лице ее представителей (работников, администрации, должностных лиц и т. д.) к противоправному деянию, совершенному этой организацией¹.

Более того, детальный анализ дает нам основание полагать, что вопросы ответственности без вины детерминированы с некоторыми положениями КоАП РФ, например, при присоединении юридического лица к другому юридическому лицу к административной ответственности за совершение административного правонарушения привлекается присоединившее юридическое лицо. В этой связи возникает закономерный вопрос, в чем выражается вина юридического лица, которому присоединили другое юридическое лицо.

Согласно Кодексу Российской Федерации об административных правонарушениях, юридические лица подлежат административной ответственности за совершение административных

правонарушений в случаях, предусмотренных статьями раздела 2 вышеуказанного Кодекса или законами субъектов Российской Федерации об административных правонарушениях. При этом, если в статьях разделов I, III, IV, V КоАП РФ не указано, что установленные данными статьями нормы применяются только к физическому лицу или только к юридическому лицу, данные нормы в равной мере действуют в отношении и физического, и юридического лица, за исключением случаев, если по смыслу данные нормы относятся и могут быть применены только к физическому лицу.

Вызывают интерес некоторые суждения, согласно которым, вина юридического лица определяется как «комплекс негативных элементов, характеризующихся дезорганизацией деятельности юридического лица, непринятием им необходимых мер для надлежащего исполнения возложенных на него обязанностей, не приложением требуемых усилий для предупреждения правонарушений и устранения их причин»².

В соответствии с частью 3 статьи 2.1 КоАП РФ, в случае совершения юридическим лицом административного правонарушения и выявления конкретных должностных лиц, по вине которых оно было совершено (статья 2.4 КоАП РФ), допускается привлечение к административной ответственности по одной и той же норме как юридического лица, так и указанных должностных лиц.

¹ Носков Б.П. Тимошин А.В. К вопросу об административной ответственности юридических лиц // Административное право и процесс, 2009, N 6, с. 5-7.

² Овчарова Е.В. Административная ответственность юридических лиц: Автореф. дис.... канд. юрид. наук. М., 2001, с. 13-15.

В этой связи, Пленум Верховного Суда РФ в Постановлении N 5 от 24.03.2005 указал, что в случае совершения юридическим лицом административного правонарушения и выявления конкретных должностных лиц, по вине которых оно было совершено, допускается привлечение к административной ответственности по одной и той же норме как юридического лица, так и указанных должностных лиц. И соответственно, привлечение к уголовной ответственности должностного лица не может служить основанием для освобождения юридического лица от административной ответственности³.

Пленум Верховного Суда РФ разъяснил также, что по одной и той же статье Особенной части КоАП РФ необходимо устанавливать виновность как должностного лица, так и юридического лица.

Возникает вопрос, насколько подобный подход может быть оправдан в случае, если субъективная сторона вины юридического лица полностью исчерпывается виновными действиями лица должностного, и не становится ли фикцией в таком случае фундаментальный принцип самостоятельной воли наказываемого лица.

Мы разделяем позицию, согласно которой, представляется неверным употребление термина «должностное лицо» в указанном Постановлении Пленума Верховного Суда РФ, так как возможно привлечение к ответственности не только должностного лица, но и иного работника организации⁴.

В то же время, при определении степени ответственности должностного лица за совершение административного правонарушения, которое явилось результатом выполнения решения коллегиального органа юридического лица, необходимо выяснять, предпринимались ли должностным лицом меры с целью обратить внимание коллегиального органа либо администрации на

невозможность исполнения данного решения в связи с тем, что это может привести к совершению административного правонарушения.

Поскольку КоАП РФ не предусматривает в указанном случае каких-либо ограничений при назначении административного наказания, судья вправе применить к юридическому и должностному лицу любую меру наказания в пределах санкции соответствующей статьи, в том числе и максимальную, учитывая при этом смягчающие, отягчающие и иные обстоятельства, влияющие на степень ответственности каждого из этих лиц⁵.

Дискуссионность такой правовой категории (вина) вытекает из его сущности и содержания юридического лица и проявляется, в частности, в отсутствии у него психо-эмоционального отношения к совершаемым им деяниям. Следовательно, является невозможным использование в отношении юридического лица классического понимания вины.

Административная ответственность юридических лиц в современных условиях имеет не только правоохранительную, но и ярко выраженную фискальную направленность⁶.

Например, при привлечении его к административной ответственности за правонарушения в сфере Правил дорожного движения являются: 1) несоответствие административной и гражданской правосубъектности; 2) невозможность применения таких видов наказания как: административный арест, лишение специального права, 3) назначение административного наказания юридическому лицу не освобождает от административной ответственности за данное правонарушение виновное физическое лицо; 5) проблемы реализации субъективной стороны правонарушения (концепция вины).

Кодекс об административных правонарушениях РФ установил, что юридическое лицо

³ Постановление Пленума Верховного Суда РФ от 24.03.2005 N 5 (с изм. и доп. от 09.02.2012) «О некоторых вопросах, возникающих у судов при применении Кодекса Российской Федерации об административных правонарушениях» // Бюллетень Верховного Суда РФ, N 6, 2005.

⁴ Панов А.Б. Юридическое лицо – субъект административной ответственности // Административное право и процесс, 2012, N 6, с. 11-15.

⁵ Постановления Пленума Верховного Суда РФ от 24 марта 2005 г. N 5 «О некоторых вопросах, возникающих у судов при применении Кодекса Российской Федерации об административных правонарушениях» // Российская газета. N 80. 2005. 19 апреля.

⁶ Панов А.Б. Понятие административной ответственности // Административное право и процесс, 2011, N 12,

признается виновным в совершении административного правонарушения, если будет установлено, что у него:

- имелась возможность для соблюдения правил и норм, за нарушение которых КоАП РФ или законами субъекта Российской Федерации предусмотрена административная ответственность, но данным лицом;
- не были приняты все зависящие от него меры по их соблюдению.

Формулировки Кодекса об административных правонарушениях «имелась возможность для соблюдения правил и норм», «не были приняты все зависящие от него меры по их соблюдению» носят дискреционный характер и оставляют широкий простор для усмотрения правоприменителя.

Так, Конституционный Суд РФ в определении установил, что основания, при обязательном наличии которых юридическое лицо может быть признано виновным в совершении административного правонарушения, направлены на обеспечение действия презумпции невиновности («статья 1.5 Кодекса об административных правонарушениях Российской Федерации»), имеют целью исключить возможность привлечения юридических лиц к административной ответственности при отсутствии их вины и сами по себе не нарушают конституционные права и свободы заявителя⁷.

При этом Конституционный Суд РФ определил, что установление же того, имелась ли у юридического лица возможность для соблюдения норм и правил, за нарушение которых предусмотрена административная ответственность, и были ли приняты все зависящие от него меры по их соблюдению, а также проверка доказательств, свидетельствующих о наличии его вины (умышленной или неосторожной) или ее

отсутствии, связаны с исследованием фактических обстоятельств дела, что является прерогативой судов общей и арбитражной юрисдикции и не входит в компетенцию Конституционного Суда Российской Федерации⁸.

В рамках определения вины юридического лица, вызывает особый интерес Постановление Пленума ВС «О некоторых вопросах, возникших в судебной практике при рассмотрении дел об административных правонарушениях». Так, в Постановлении отмечается, что выяснение виновности лица в совершении административного правонарушения осуществляется на основании данных, зафиксированных в протоколе об административном правонарушении, объяснений лица, в отношении которого ведется производство по делу об административном правонарушении, в том числе об отсутствии возможности для соблюдения соответствующих правил и норм, о принятии всех зависящих от него мер по их соблюдению, а также на основании иных доказательств, предусмотренных частью 2 статьи 26.2 КоАП РФ.

В то же время вызывает интерес положение, согласно которому, рассматривая дело об административном правонарушении, арбитражный суд в судебном акте не вправе указывать на наличие или отсутствие вины должностного лица или работника в совершенном правонарушении, поскольку установление виновности названных лиц не относится к компетенции арбитражного суда. Следовательно, как справедливо отмечается в специальной литературе, исходя из принципа состязательности и равноправия, закрепленного в ст. 123 Конституции РФ, органы и должностные лица при привлечении юридического лица к административной ответственности обязаны выяснить наличие вины в его действиях, а не автоматически переносить вину работника на юридическое лицо⁹.

⁷ Определение Конституционного Суда РФ от 21.04.2005 N 119-О «Об отказе в принятии к рассмотрению жалобы общества с ограниченной ответственностью “Торговый дом “Волна” на нарушение конституционных прав и свобод частью 2 статьи 2.1 Кодекса Российской Федерации об административных правонарушениях» // base.consultant.ru

⁸ Определение Конституционного Суда РФ от 21.04.2005 N 119-О «Об отказе в принятии к рассмотрению жалобы общества с ограниченной ответственностью “Торговый дом “Волна” на нарушение конституционных прав и свобод частью 2 статьи 2.1 Кодекса Российской Федерации об административных правонарушениях» // base.consultant.ru

⁹ Белова Л.В. Вина юридического лица по административному праву // Вестник Федерального арбитражного суда Запдно-Сибирского округа, 2011, N 4, с. 43-47.

При этом, как отмечается в Постановлении, в отличие от физических лиц, в отношении юридических лиц КоАП РФ формы вины (статья 2.2 КоАП РФ) не выделяет. Следовательно, и в тех случаях, когда в соответствующих статьях Особенной части КоАП РФ возможность привлечения к административной ответственности за административное правонарушение ставится в зависимости от формы вины, в отношении юридических лиц требуется лишь установление того, что у соответствующего лица имелась возможность для соблюдения правил и норм, за нарушение которых предусмотрена административная ответственность, но им не были приняты все зависящие от него меры по их соблюдению (часть 2 статьи 2.1 КоАП РФ)¹⁰.

Более того, в силу части 3 статьи 2.1 КоАП, РФ назначение административного наказания юридическому лицу не освобождает от административной ответственности за данное пра-

вонарушение виновное физическое лицо, равно как и привлечение к административной или уголовной ответственности физического лица не освобождает от административной ответственности за данное правонарушение юридическое лицо¹¹.

В этой связи напрашивается вывод, исходя из правоприменительной практики, что применение нормы, содержащейся в ч. 2 ст. 2.1 Кодекса Российской Федерации об административных правонарушениях, достаточно противоречиво, при этом не только должностные лица органов исполнительной власти, но и суды в аналогичных ситуациях нередко принимают противоречивые решения, которые не корреспондируются императивностью наличия вины при привлечении административной ответственности юридического лица, в нарушение базового принципа равенства всех перед правовой нормой.



¹⁰ Постановление Пленума ВАС РФ от 02.06.2004 № 10 «О некоторых вопросах, возникших в судебной практике при рассмотрении дел об административных правонарушениях», в ред. Постановлений Пленума ВАС РФ от 20.06.2007 N 42, от 26.07.2007 N 46, от 20.11.2008 N 60, от 10.11.2011 N 71 // Вестник ВАС РФ, N 8, 2004.

¹¹ Постановление Пленума ВАС РФ от 02.06.2004 № 10 «О некоторых вопросах, возникших в судебной практике при рассмотрении дел об административных правонарушениях», в ред. Постановлений Пленума ВАС РФ от 20.06.2007 N 42, от 26.07.2007 N 46, от 20.11.2008 N 60, от 10.11.2011 N 71 // Вестник ВАС РФ, N 8, 2004.

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ
ՊԵՏԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԻՐՔԵՐԻՉ**

«Ազգային անվտանգության» հետ կապված հիմնական հասկացությունների իմաստի բացահայտումը, դրանց բնորոշումների սահմանումն անվտանգաբանության մեջ ավանդաբար կիրառվող հնարք է, որը ներթափանցել է նաև անվտանգության հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ¹: ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը (այսուհետ՝ ԱԱՌ), սակայն, չի բացում ազգային անվտանգության ոչ մի հասկացության բովանդակություն: Անհրաժեշտ է արդյոք ազգային անվտանգության հիմնական հասկացությունների իմաստի գոնե տեսական բացահայտումը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրա կարիքը չկա, որովհետև այդ հասկացությունների քննարկումն արված է ազգային անվտանգությանը նվիրված գրեթե բոլոր հետազոտություններում: Այդ պատճառով նորամուծությունը բարդ խնդիր է: Հետևաբար՝ հասկացություններին անդրադառնալիս հետազոտողը կատարելու է այլոց կողմից բացահայտված հասկացությունների ամբողջական համեմատական հավաքագրում (կոմպիլյացիա): Բայց հայաստանյան անվտանգաբանությունը նոր կայացող ոլորտ է: Մյուս կողմից՝ ամեն մի գիտական ոլորտում որևէ կատեգորիա կատա-

րում է մեթոդաբանական, համակարգակազմիչ դեր: Օրինակ՝ իրավունքի փիլիսոփայության ու տեսության մեջ նման դերակատարություն վերապահված է «իրավունք» հասկացությամբ²: Նույն կերպ՝ համակարգակազմիչ, կանխագուշակող, կողմնորոշիչ նշանակություն ունի նաև «ազգային անվտանգություն» հասկացությունը՝ անկախ այն հանգամանքից՝ քաղաքագիտական, թե՛ իրավագիտական ուղղվածություն ունի ազգային անվտանգության տվյալ հայեցակարգը: Հետևաբար՝ եթե «ազգային անվտանգությունը» որևէ հետազոտող տալիս է ուրիշներից տարբերվող բնորոշում, նշանակում է՝ ազգային անվտանգության հիմնական այլ հասկացությունները, համակարգակազմիչ կատեգորիայի հայեցակարգին համապատասխան, կարող են նորովի վերաիմաստավորվել:

Արևմտյան տեսաբաններից շատերն ընդունում են «ազգային անվտանգություն» հասկացության անորոշությունը, դրա սահմանման բարդությունը, «մշուշոտությունը»: Ա. Ուոլֆերսը նույնիսկ հանգեց եզրակացության, որ ազգային անվտանգությունը երկիմաստային խորհրդանիշ է, որը, հնարավոր է՝ չունի ինչ-որ ճշգրիտ բնորոշում³: Արևմտյան տեսաբանները

¹ ՌԴ «Անվտանգության մասին» 1992 թ. օրենքի 1-ին բաժնում տրվում էին «անվտանգություն», «կենսականորեն կարևոր շահեր», «անվտանգության սպառնալիքներ», «անվտանգության օբյեկտներ» և մի շարք այլ հասկացություններ (տե՛ս Ведомости СНД и ВС РФ. 1992. №15, с. 769): «Անվտանգության մասին» ՌԴ 2010 թ. դաշնային օրենքը չունի հասկացությունների բնորոշումներ, սակայն ՌԴ ազգային անվտանգության ռազմավարությունը մինչև 2020 թ. ամրագրում է մի շարք հիմնարար հասկացությունների բովանդակությունը (տե՛ս Стратегия национальной безопасности Российской Федерации до 2020 года. // Утверждена Указом Президента РФ от 12 мая 2009 г. №537, редактирована Указом Президента РФ от 01.07.2014 г. № 483. СЗ РФ. – 2009, 20. – ст. 2444): Տեսաբաններից ոմանք քննադատում են օրենքի այդ բացը, որն ունակ է առաջացնելու իրավական անորոշություններ (տե՛ս А.В. Шободоева Основы теории национальной безопасности, Иркутск, из-во БГУ, 2015, էջ 45):

² Տե՛ս Ներսիսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 29:

³ Տե՛ս Wolfers A. Discord and Collaboration. Essays on International Politics. Baltimore: Johns Hopkins University Press, 1962. P. 6.

մեծ մասամբ ազգային անվտանգությունը կապում են «ազգային շահեր», «ազգային ուժեր» հասկացությունների հետ՝ մեկնաբանելով որպես ռազմական անվտանգություն ու երկրի պաշտպանություն⁴: Անվտանգաբանության ռուսական դպրոցը, լինելով նոր ձևավորված, ունի բավականին համակարգված, հետևողական ու տրամաբանական մոտեցումներ, որոնց որոշ տարրեր կարող են օգտակար լինել ՀՀ ազգային անվտանգության հասկացության կառուցման համար: Սակայն ռուսական դպրոցի առանձնահատկությունը և հիմնահարցի խճճվածությունը պայմանավորված են ռուսական պետության բազմազգությամբ, ինչն առաջ է բերում «ազգ» եզրույթի տարբեր իմաստներ, և այստեղ խնդրի լուծման միակ ուղին ոչ թե գիտականն է, այլ՝ եզրույթային կոնվենցիան, համաձայնությունն «ազգ» կամ «ազգային» բառի իմաստի շուրջ: Հետևաբար՝ Հայաստանի իրողությունների համար անհրաժեշտ է կառուցել ազգային անվտանգության սեփական, հայ ժողովրդի ու նրա պետականության առանձնահատկությունների վրա կառուցված բնորոշումը:

ՀՀ ԱԱՌ-ն չի բացում ազգային անվտանգության ոչ մի հիմնական հասկացություն: Դրաներածությունն սկսվում է ազգային անվտանգության ռազմավարության բնորոշմամբ, որի համաձայն՝ ՀՀ ԱԱՌ-ն պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Հիմք ընդունելով ազգային անվտանգության ռազմավարության այս բնորոշումը՝ վերլուծության, բաղդատման միջոցով փորձենք կառուցել ազգային անվտանգության հայաստանյան բնորոշումը:

Առաջին, կարևոր հատկանիշը, որ բնութագրական է ազգային անվտանգությանը, նրա օբյեկտների հարցն է: ՀՀ ԱԱՌ-ն ընդունում է այդ հարցի լուծման եռամիասնական մոտեցումը՝ անհատ, հասարակություն և պետություն: Սակայն այդ լուծումը պետք է ճշգրտվի, քանի

որ, այսպես կոչված, հայկական անվտանգությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Հայաստանում ազգն էթնիկ իմաստով և հասարակությունը, որպես անհատների համակցություն, գրեթե համընկնում են, ի տարբերություն մի շարք այլ երկրների: Նշանակում է ազգային անվտանգության օբյեկտ է ոչ թե չեզոք համարվող հասարակությունը, այլ «հայ հասարակությունը», հայ ազգը: Հետևաբար, ազգային անվտանգության բնորոշումը պետք է հաշվի նստի այդ առանձնահատկության հետ: Ազգային անվտանգության օբյեկտի նման ճշգրտումը կարևոր նշանակություն ունի ԱԱՌ-ի գործնական խնդիրների լուծման համար, որովհետև ազգը դառնում է և՛ ազգային անվտանգության օբյեկտ, և՛ դրանից բխող քաղաքական ծրագրերի օբյեկտ: Այսպիսով՝ ազգային անվտանգության օբյեկտներ են դառնում անհատը, հասարակությունը (ազգը), պետությունը, դրանով իսկ լուծվում է ՌԴ անվտանգաբանության համար այդքան խճճված «ազգային անվտանգություն» «պետական անվտանգություն» հասկացությունների հարաբերակցությունը: Այս մոտեցման հիման վրա ըստ ազգային անվտանգության օբյեկտների պետք է տարբերակել անվտանգության երեք տեսակներ՝ անհատի անվտանգություն, հասարակության (ազգի) անվտանգություն և պետության անվտանգություն: Երեքին միավորող (սինթետիկ) ընդհանուր հասկացությունը՝ «ազգային անվտանգություն» է: Ընդհանուր հասկացության մեջ «ազգային» ածականը արտահայտում է հայ ժողովրդի մեկ այլ յուրահատկություն՝ հայկական սփյուռքի գոյությունը: Դա անհրաժեշտաբար պետք է արտացոլվի մեր ազգային անվտանգության հայեցակարգում, որովհետև սփյուռքի գոյությունը ՀՀ արտաքին անվտանգության հիմքերից ու պայմաններից մեկն է: Այս խնդիրը նկատի ունենալով, ՀՀ ԱԱՌ-ն, որպես պետական քաղաքականության համակարգ, ներառում է նաև այնպիսի ոլորտ, ինչպիսին է «հայ ինքնության պահպանումը»: Դրան համապատասխան ՀՀ ազգային անվտանգու-

⁴ Այսպես՝ Ու. Լիպպմանը համարում է, թե պետությունն անվտանգության վիճակում է, երբ չի զոհաբերում իր օրինական շահերը պատերազմից խուսափելու համար և երբ ի վիճակի է անհրաժեշտության դեպքում պաշտպանելու այդ շահերը ռազմական ուժի օգտագործմամբ (տես Lippman W. US Foreign Policy: Shield of the RepubUc. Boston, 1943. P. 5):

թյունը հիմնարար արժեք է ճանաչում **հայապահպանությունը**⁵, որի իրավական հիմքը ՀՀ Սահմանադրության 19 հոդվածն է: Այսպիսով՝ հայկական ազգային տեսանկյունից՝ ազգային անվտանգության օբյեկտի վերածվեց նաև սփյուռքը, որին ըստ օբյեկտի համապատասխանող անվտանգությունը կարելի է անվանել «սփյուռքահայության անվտանգություն»: Դա իր բնույթով լրիվ և զուտ ազգային-հայկական խնդիր է, և դրա նպատակն օտար միջավայրում հայ ինքնության պահպանությունն է՝ հայապահպանությունը, ինչպես նաև դրան հարակից մի շարք օժանդակող գործառնությունները: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ **հայկական ազգային անվտանգության օբյեկտներ են անհատը, հասարակությունը (ազգը), պետությունը, սփյուռքահայությունը:**

Երկրորդ հատկանիշը, որի միջոցով պետք է ձևակերպել ազգային անվտանգություն հասկացությունը, վերաբերում է դրա նպատակներին: Ամենապարզ բնորոշմամբ՝ ազգային անվտանգությունը դրա օբյեկտների պաշտպանվածությունն է ներքին և արտաքին տարաբնույթ վտանգներից: Կարծես թե՝ չի ստացվում. անվտանգության ապահովման նպատակն անվտանգությունն է: Տրամաբանական կրկնաբանությունից խուսափելու համար տարբեր հեղինակներ փորձում են նպատակայնացնել ազգային անվտանգությունը: Օրինակ՝ ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգի պաշտոնական հիմքը համարվող փաստաթղթերում որպես ազգային անվտանգության կարևոր տրամբանական-դեդուկտիվ նպատակ է դիտարկվում ազգի՝ որպես մշակութային-պատմական, քաղաքական ընդհանրության ինքնապահպանումը, ինչը ենթադրում է պետական կարգերի, ազգային իդեալների, ավանդույթների, կենսատոմի պաշտպանություն⁶: Վ. Դանիլենկոյի կարծիքով՝ «Ազգային անվտանգու-

թյան նպատակը պետության անկախ գոյության համար պայմանների ստեղծումն է բառի լայն իմաստով, ինչը ենթադրում է հիմնական սոցիալական խմբերի համար անձնական և նյութական ազատության ընդունելի աստիճան, տարածքային ամբողջականության, կյանքի ավանդական ոճի, ինչպես նաև հասարակական ու պետական կառույցի հիմնական ինստիտուտների, արժեքների և այլ կարևոր ատրիբուտների պահպանություն»⁷:

Ազգային անվտանգությունը գործում է ընդհանուր հասարակական համակարգում, հետևաբար՝ ազգային անվտանգության նպատակները պետք է համահունչ լինեն հասարակական համակարգի նպատակներին: Քանի որ հասարակական ընդհանուր նպատակների ընտրությունը հայեցողական բնույթ ունի, ուրեմն՝ հակասականություն չառաջացնելու և կայուն, նպատակադրված գործելու համար հասարակական նպատակներն արդի պայմաններում ամրագրվում են Սահմանադրությամբ (հիմնական օրենքով) և, առաջին հերթին՝ սահմանադրական կարգի հիմունքներում: Սահմանադրական կարգի հիմունքները **հասարակական համակարգի ռազմավարական, ընդհանուր, վերջնական նպատակներն են**, որոնք ուղղորդում և կարգավորում են հասարակական համակարգի գործունեությունը, կամքը՝ որպես բազիս բուն իմաստով պարտադիր, իրավաբանական օրենք: Արդի հասարակական իրողությունների տեսանկյունից՝ ազգային անվտանգության նպատակները պետք է բխեն հասարակական համակարգի նպատակներից, համահունչ լինեն դրանց: Հետևաբար՝ ազգային անվտանգությունն ինքնանպատակ չէ, այլ նպատակադրված է սահմանադրական կարգի հիմունքների կայացմանը, դրանց կայունացմանը, դրանց դեմ ուղղված քայքայիչ սպառնալիքների կանխմանը, չեզոքացմանը, վերացմանը:

⁵ Ազգային անվտանգության ռազմավարության ձևավորմանը նվիրված շատ երկրների փաստաթղթեր սկսվում են ազգային հիմնական արժեքների թվարկմամբ ու բնութագրմամբ, իսկ այնուհետև՝ դրանց գլխավոր սպառնալիքների բացահայտմամբ:
⁶ Տե՛ս The White House. National Security Strategy of the United States. Wash.: GPO, 1987. P. 3-4; The White House. National Security Strategy of the United States. Wash.: GPO, 1988. P. 6-7; The White House. National Security Strategy of the United States. Wash.: GPO, 1990. P. 1-3.
⁷ Տե՛ս Даниленко В.В. Теоретико-правовые проблемы правового обеспечения национальной безопасности России. Дисс. канд. юр. наук. Специальность 12.00.01; М., 2010, էջ 70, Волков Я.В. Национальная безопасность государства Израиль: философско-политологический анализ концепции и практики применения: Дисс.... канд. филос. наук. М., 1996.– էջ 19:

նր և այլն: Ընդհանուր հասարակական նպատակների համեմատ՝ ազգային անվտանգությունը միջոցներից ու պայմաններից մեկն է: Ազգային անվտանգության այս հատկությանը շատ քիչ հեղինակներ են ուշադրություն դարձրել: «Անվտանգությունը ցանկացած համակարգի կամ ինստիտուտի գոյության կարևոր պայմաններից մեկն է: Հենց պայմանն, այլ ոչ թե՛ նպատակը, քանի որ նպատակը պետք է լինի ինչ-որ ավելի մեծ, որակապես այլ, ավելի բարձր և բովանդակային»⁸: Այդպիսի «մեծ, որակապես այլ, ավելի բարձր ու բովանդակային» նպատակ կարող են ծառայել միայն և միայն սահմանադրական կարգի հիմունքները: Եթե հանկարծ ազգային անվտանգության համար պատկերացվեն այլ նպատակներ, ապա դա Սահմանադրության ու ազգային անվտանգության հայեցակարգի միջև կոլիզիայի առաջացման հիմք է: Նման տեսական մոտեցումը կարող է ծնել նաև մրցակցություն Սահմանադրության ու ազգային անվտանգության ռազմավարության միջև, ինչը շատ վտանգավոր երևույթ է: Հասարակական հիմնական արժեքներն առաջին հերթին սահմանադրական արժեքներն են, որոնք խտացված են սահմանադրական կարգի հիմունքներում և վերաբերում են պետությանը, քաղաքացիական հասարակությանը՝ «ազգին», անհատին, սփյուռքին: Դա, իհարկե, չի նշանակում, թե այլ արժեքներ չեն կարող լինել անվտանգության օբյեկտ: Ուղղակի բոլոր արժեքների մեջ սահմանադրական կարգի հիմունքներն են առաջնային, առանցքային, բարձրագույն ուժ ունեցող, կայուն. վերջիններս գրեթե անվիճելի և տարածայնություն չառաջացնող արժեքներ են, որոնք արժանի են դիտվելու որպես ազգային անվտանգության նպատակներ: **«Երկարար՝ ազգային անվտանգության նպատակը սահմանադրական կարգի հիմունքներն են՝ որպես անհատի, հասարակության (ազգի), պետության ու սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի իրավական արտահայտություն»:**

«Երջին սերնդի ազգային անվտանգության ռազմավարությունները և ազգային անվտանգության արդի տեսությունն ազգային անվտանգությունը կապում են «զարգացման», «կայուն զարգացման» հետ: ՀՀ ԱԱՌ-ն «կայուն զարգացումը» դիտարկում է որպես ազգային անվտանգության պետական քաղաքականության բաղադրատարր: Տրամաբանորեն ստացվում է հետևյալ բանաձևը. ազգային անվտանգության օբյեկտների անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման համար ՀՀ-ն մշակում է քաղաքականության համակարգ՝ ի դեմս ԱԱՌ-ի⁹: Այստեղ մենք տեսնում ենք նոր մոտեցում ազգային անվտանգության շրջանակներում, մասնավորապես՝ ոչ միայն կենսականորեն կարևոր շահերի մերկ պաշտպանություն, այլև անվտանգություն զարգացման միջոցով, ինչը բացարձակապես նոր հիմնարար դրույթ է ազգային անվտանգության տեսության մեջ¹⁰: Եթե ՌԴ պաշտոնական փաստաթղթերն ազգային անվտանգության համակարգում կայուն զարգացումը դիտարկում են որպես ազգային անվտանգության նպատակներից մեկը, ապա ՀՀ-ում (տրամաբանորեն ստացվում է այդպես) ազգային անվտանգության ապահովումը, կայուն զարգացումը, հայ ինքնության պահպանումը պետական քաղաքականության համակարգի երեք ինքնուրույն տարրեր են, այլ ոչ թե՛ միմյանց ստորադասված հասկացություններ կամ երաշխիքներ: Ենթադրվում է, թե «կայուն զարգացումը» (որովհետև ՀՀ ԱԱՌ-ն չի բացում դրա բովանդակությունը) օգտագործված է միջազգային կազմակերպությունների էկոլոգիական ոլորտի փաստաթղթերի իմաստով: Այսպիսով՝ ստացվեց, որ. «Ազգային անվտանգության նպատակները սահմանադրական կարգի հիմունքներն են՝ որպես անհատի, հասարակության (ազգի), պետության ու սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի իրավական արտահայտություն»:

Վերջին սերնդի ազգային անվտանգության ռազմավարությունները և ազգային անվտանգության արդի տեսությունն ազգային անվտանգությունը կապում են «զարգացման», «կայուն զարգացման» հետ: ՀՀ ԱԱՌ-ն «կայուն զարգացումը» դիտարկում է որպես ազգային անվտանգության պետական քաղաքականության բաղադրատարր: Տրամաբանորեն ստացվում է հետևյալ բանաձևը. ազգային անվտանգության օբյեկտների անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման համար ՀՀ-ն մշակում է քաղաքականության համակարգ՝ ի դեմս ԱԱՌ-ի⁹: Այստեղ մենք տեսնում ենք նոր մոտեցում ազգային անվտանգության շրջանակներում, մասնավորապես՝ ոչ միայն կենսականորեն կարևոր շահերի մերկ պաշտպանություն, այլև անվտանգություն զարգացման միջոցով, ինչը բացարձակապես նոր հիմնարար դրույթ է ազգային անվտանգության տեսության մեջ¹⁰: Եթե ՌԴ պաշտոնական փաստաթղթերն ազգային անվտանգության համակարգում կայուն զարգացումը դիտարկում են որպես ազգային անվտանգության նպատակներից մեկը, ապա ՀՀ-ում (տրամաբանորեն ստացվում է այդպես) ազգային անվտանգության ապահովումը, կայուն զարգացումը, հայ ինքնության պահպանումը պետական քաղաքականության համակարգի երեք ինքնուրույն տարրեր են, այլ ոչ թե՛ միմյանց ստորադասված հասկացություններ կամ երաշխիքներ: Ենթադրվում է, թե «կայուն զարգացումը» (որովհետև ՀՀ ԱԱՌ-ն չի բացում դրա բովանդակությունը) օգտագործված է միջազգային կազմակերպությունների էկոլոգիական ոլորտի փաստաթղթերի իմաստով: Այսպիսով՝ ստացվեց, որ. «Ազգային անվտանգության նպատակները սահմանադրական կարգի հիմունքներն են՝ որպես անհատի, հասարակության (ազգի), պետության ու սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի իրավական արտահայտություն»:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

⁸ Стн Рыхтик М.И. Безопасность в современном мире // Национальные интересы и проблемы безопасности в меняющемся мире. Материалы междисциплинарного семинара / Отв. ред. К.С. Гаджиев, Г.В. Каменская, Э.Г. Соловьев. М., 2003. էջ 6:
⁹ ՌԴ-ի ազգային անվտանգության ռազմավարությունը և ազգային անվտանգության քաղաքականությունը կապում է «կայուն զարգացման հետ»: Սակայն ՌԴ-ում ազգային անվտանգությունը դիտարկվում է որպես «կայուն զարգացման» ապահովում (այլ նպատակների հետ մեկտեղ): Այդ նպատակը ՌԴ-ում որոշակիորեն հստակեցված է, որովհետև դեռ 1996 թ. ՌԴ նախագահն ընդունել է ՌԴ-ի կայուն զարգացման անցնելու հայեցակարգը (տե՛ս Концепция перехода Российской федерации к устойчивому развитию: Указ президента РФ от 01.04.1996 г. №444// СЗ РФ. – 1996, – № 15. – С. 1572):
¹⁰ Стн А.В. Шободоева. Основы теории национальной безопасности, курс лекции, Иркутск, из-во БГУ, 2015, էջ 17:

գույությունն ապահովում է ... շահերի պաշտպանությունը ... սպառնալիքներից հասարակական համակարգի բնականոն գործունեության, կայուն զարգացման ապահովման համար», կամ՝ «ազգային անվտանգության ապահովումը երաշխիք է զարգացման համար, իր հերթին զարգացումը՝ ազգային անվտանգության համար (անվտանգություն զարգացման միջոցով)»:

Եթե միավորենք բոլոր միջանկյալ եզրակացությունները, ապա կստանանք Հայաստանի պայմաններին տեսականորեն հարմարեցված «ազգային անվտանգություն» հասկացության հետևյալ սահմանումը. ազգային անվտանգությունն անհատի, հասարակության (ազգի), պետության, սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի (ներառյալ՝ ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների) պաշտպանությունն է՝ իրական արտաքին ու ներքին, քաղաքական, իրավական, ռազմական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, տեղեկատվական և այլ բնույթի սպառնալիքներից՝ հասարակական ընդհանուր համակարգի բնականոն գործունեության, կայուն զարգացման ապահովման համար:

Հիմք ընդունելով այս բնորոշումը՝ փորձենք վերահիմնավորել պետության հետ կապված ազգային անվտանգության հետևյալ հիմնական հասկացությունները:

«Ազգային անվտանգության օբյեկտ» և ազգային անվտանգության տեսակները ըստ օբյեկտի և ոլորտների: Ազգային անվտանգության տեսության մեջ ընդունված մոտեցումներից է ազգային անվտանգության տեսակների դասակարգումը, դրա որոշակի ոլորտների առանձնացումը: Այս հարցում ևս ազգային անվտանգության տեսության մեջ չկա միասնական մոտեցում: Կան դասակարգման բազմաթիվ տարբերակներ և նույնիսկ մոտեցումներ, որոնց համաձայն՝ գոյություն ունեն ազգային անվտանգության անվերջ տեսակներ, որովհետև դասակարգման հիմքում դրվում են հասարակության գործունեության ոլորտները, որոնք բազմազան են¹¹: Այս մոտեցումը համարելով ոչ բավարար չափով հիմնավորված՝ մենք կողմնակից ենք այն տեսաբանների տարբերակներին, ովքեր, օրինակ, ՌԴ-ի համար՝ հետևելով իրենց օրենսդրությանը, առաջարկում են ազգային անվտանգության տեսակների դասակարգման մեկ հիմք՝ ըստ օբյեկտների, այն է՝ անհատի անվտանգություն, հասարակության անվտանգություն, պետության անվտանգություն¹²: Այս դասակարգման կողմնակից հեղինակները չեն ընդունում որևէ այլ չափանիշ անվտանգության տեսակների դասակարգման համար, քանի որ չկան ո՛չ դրա տեսական, ո՛չ էլ՝ իրավաօրենսդրական նախադրյալները:

Հիմք ընդունելով այս մոտեցումը և որպես դասակարգման չափանիշ ընտրելով ազգային անվտանգության օբյեկտները՝ մենք առաջարկում ենք հայ իրականությանը համապատասխանող ազգային անվտանգության հետևյալ տեսակները՝ անհատի անվտանգությունը, հասարակության (ազգի) անվտանգությունը, պետության անվտանգությունը, սփյուռքահայության անվտանգությունը: Այս դասակարգման չափանիշն ընտրված է գիտական մոտեցման հիման վրա, այն է՝ ազգային անվտանգության օբյեկտները, մյուս կողմից՝ նման դասակարգման համար, ճիշտ է, ոչ հստակ, բայց հիմքեր է տալիս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը:

Քանի որ հասարակական ամբողջական համակարգը կառուցվածքային առումով համապատասխան ենթահամակարգերի կենսագործունեություն, մասնավորապես՝ քաղաքական և իրավական համակարգեր են, տնտեսություն, սոցիալական ոլորտ, հոգևոր-մշակութային ոլորտ, էկոլոգիական և տեղեկատվական ոլորտներ, այդ պատճառով հասարակական համակարգի բոլոր ոլորտներին ուղղված են որոշակի սպառնալիքներ: Սպառնալիքների աղբյուրը կարող է լինել արտաքին և ներքին, հետևաբար՝ ըստ այդ չափանիշի՝ նպատկա-

¹¹ Օրինակ՝ ներկայումս արդեն առանձնացնում են անվտանգության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են գենետիկ, ինտելեկտուալ և այլն, ընդ որում՝ առանց հստակ նշելու այն չափանիշները, որոնցով կատարվել է ազգային անվտանգության տեսակների այդ դասակարգումը (տես, օրինակ՝ Возженников А.Б. Национальная безопасность: теория, политика, стратегия. М., 2000, էջ 69):

¹² Տես, օրինակ՝ Колокольцев В.А. Обеспечение государственных интересов России в контексте национальной безопасности. Дисс... док. юр. наук. Специальность 12.00.01, Санкт-Петербург, 2005, էջ 148:

հարմար է տարբերակել ներքին և արտաքին անվտանգությունները: Կախված այն հանգամանքից, թե հասարակական կենսագործունեության ո՞ր ոլորտին (ենթահամակարգին) են ուղղված սպառնալիքները, կարող ենք առանձնացնել անվտանգության քաղաքական (պետական), իրավական, հոգևոր-մշակութային էկոլոգիական, տեղեկատվական ոլորտները (հնարավոր է նաև՝ անվտանգության տեսակները): Այս դասակարգման չափանիշը վերցված է ազգային անվտանգաբանության մեջ ընդունված մոտեցումներից¹³: Սակայն որոշակիորեն ճշգրտված է՝ ելնելով հասարակական համակարգի կառուցվածքային պատկերացումների վերաբերյալ նոր մոտեցումներից:

«Ազգային անվտանգության կենսականորեն կարևոր շահ»: Ազգային անվտանգության կենսականորեն կարևոր շահերը սահմանադրական կարգի հիմունքներով պայմանավորված պահանջմունքների համակցություն են, որոնց բավարարումը հուսալիորեն ապահովում է անհատի, հասարակության (ազգի), պետության, սփյուռքահայության գոյությունը և առաջադեմ զարգացման հնարավորությունը:

«Սպառնալիք», «վտանգ», «գործոն»: Սպառնալիքը (կամ հնարավոր վտանգը) սովորաբար բնորոշվում է որպես «սպառնալիքի աղբյուրի (վտանգի) և պաշտպանվող օբյեկտի փոխգործողության ընթացքում գործոնների բացասական դրսևորման իրական հնարավորություն»¹⁴: Եթե այս բնորոշումը տեղայնացնենք ազգային անվտանգության վերը պարզորոշված օբյեկտների նկատմամբ, ապա կստանանք հետևյալ բնորոշումը. **անվտանգության սպառնալիքը** պայմանների ու գործոնների համակցություն է, որն ստեղծում է վտանգներ անհատի, հասարակության (ազգի), պետության, սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի (ներառյալ՝ սահմանադրական կարգերի հիմունքների) համար: Բնորոշման առանցքը կազմում է գործոնը, որը, որպես կանոն՝ լատիներեն factor բառի համարժեքն է: **Գործոնն** ինչ-որ գործընթացի, երևույթի պատճառը, շարժիչ ուժն է, որը որոշում է նրա բնութագիրը կամ առանձին գծերը¹⁵: **Վտանգին** ուղեկցող գործոնների բացասական դրսևորման հետևանքները նշելու համար օգտագործում են «վնաս», «ոխսկ» հասկացությունները¹⁶:



¹³ Տե՛ս Колокольцев В.А., Обеспечение государственных интересов России в контексте национальной безопасности. Дисс... док. юр. наук. Специальность 12.00.01, Санкт-Петербург, 2005, էջ 149:
¹⁴ Տե՛ս Фомин С.А. Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 14:
¹⁵ Տե՛ս Мирошниченко В.М. О системном подходе министерств и ведомств РФ к совершенствованию системы государственного управления. Монография. М.: АПК, 1998:
¹⁶ Տե՛ս Фомин С.А. Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007, էջ 15:

ԱՐՄԵՆ ԿԱՐԵՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
իրավագիտության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դասախոս

ԱՆՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
իրավագիտության ամբիոնի մագիստրոս

ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսության բնականոն և կայուն զարգացման գործում առանձնահատուկ նշանակություն ունի խոշոր գործարքի ինստիտուտը, քանի որ իրավաբանական անձանց և քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտների համագործակցության հիմնական միջոցն է: Ներկայումս խոշոր գործարքի ինստիտուտը գտնվում է կայացման փուլում, կան ոլորտի կարգավորման վերաբերյալ իրավական լուծումներ պահանջող օրենսդրական բացեր և մի շարք հիմնախնդիրներ: Խոշոր գործարքի ինստիտուտի ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ անհրաժեշտ է վեր հանել ոլորտի կարգավորման վերաբերյալ օրենսդրական բացերը և, հաշվի առնելով նաև միջազգային փորձը՝ կատարել խոշոր գործարք կնքելու մասին որոշումներ կայացնելու վերաբերյալ օրենսդրական դրույթների կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Այսպես՝ կորպորատիվ հարաբերություններում առանձնահատուկ նշանակություն ունի ժողովրդավարության սկզբունքը: Այս սկզբունքի էությանն այն է, որ կորպորացիայի կառավարման ընթացքում որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ, և դրանք պարտադիր են ընկերության կառավարման մարմինների և մասնակիցների կամ բաժնետերերի համար: Այսինքն՝ ընկերության կամքը ձևավորվում է կազմակերպության մասնակիցների քվեարկությամբ ընդհանուր ժողովում, որտեղ ընկերության մասնակիցն արտահայտում է իր կամքը, իսկ ընկերության մասնակիցների կամ խորհրդի անդամների միասնական կամահայտ-

նությունը հանգեցնում է իրավաբանական անձի կամքի ձևավորմանը¹:

«Բաժնետիրական ընկերությունների մասին»² և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»³ օրենքների համաձայն՝ որպեսզի գործարքի կնքման վերաբերյալ որոշումը համարվի պատշաճ կայացրած, անհրաժեշտ է երկու պայմանի առկայություն՝

- գործարքի կնքմանն ուղղված կամքը պետք է ձևավորվի դրա լիազորությունն ունեցող մարմնի կողմից,
- գործարքի կնքման մասին որոշումը պետք է ընդունվի օրենքի և կանոնադրության պահանջներին համապատասխան:

Հարկ է նշել, որ խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների կայացման կարգը տարբերվում է՝ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առանձնահատկություններով պայմանավորված: Այսպես՝ խոշոր գործարքի կնքման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացակարգն առավել մանրամասն կարգավորվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, որի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է գույքը, որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն, ընդ որում՝ խորհրդից դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առվում: Այն դեպ-

¹ Տե՛ս Ավետիսյան Վ.Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 28:
² Տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք (25.09.2001), ՀՀՊՏ 2001.11.06/34(166):
³ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք (24.10.2001), ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

քում, երբ գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցն ընդհանուր ժողովում քննարկելու մասին: Այդ դեպքում գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է նաև, որ, եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ էական բացթողում կարելի է համարել այն, որ բաժնետիրական ընկերության միանձնյա գործադիր մարմինը զրկված է բաժնետերերի արտահերթ ժողով հրավիրելու և բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում հարցեր ներառելու հնարավորությունից, սակայն պետք է արձանագրել, որ հենց միանձնյա գործադիր մարմինն է տիրապետում այս կամ այն հարցերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը, որն անհրաժեշտ է առկա հարցերի վերաբերյալ ճիշտ որոշումներ կայացնելու համար: Կարծում ենք, որ, լինելով ինչպես կամք ձևավորող, այնպես էլ կամք արտահայտող մարմին, գործադիր մարմինը պետք է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցություն ունենա կազմակերպության կողմից առավել կարևոր որոշումների ընդունման գործում: Սակայն, ինչպես նշում է Վ. Ավետիսյանը՝ թեև 72-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է բաժնետերերի ներկայացված առաջարկը խորհրդի կողմից մերժելու դեպքում դատական կարգով բողոքարկելու

հնարավորություն, միևնույն է՝ այդ իրավունքների դատական կարգով պաշտպանությունն արդյունավետ չէ, քանի որ գործնականում մինչև գործի քննության ավարտը ժողովը կարող է գումարվել, և այդ դեպքում բաժնետիրոջ թեկուզ և դատարանի կողմից բավարարված պահանջը որևէ գործնական կիրառություն չի ունենա⁴:

Իսկ ինչ վերաբերում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին՝ պետք է արձանագրել, որ այս դեպքում նման խնդիր չկա, քանի որ, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներում ամրագրված նորմերի համաձայն՝ հերթական և արտահերթ ընդհանուր ժողովները հրավիրվում են գործադիր մարմնի կողմից:

Այսինքն՝ բաժնետիրական ընկերությունների դեպքում միանձնյա գործադիր մարմնի կողմից խոշոր գործարքների կնքման հետ կապված որոշումների կայացման վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողով առաջարկություններ ներկայացնելու իրավունքի բացակայությունը ստեղծելու է մի իրավիճակ, որ, եթե այդ հարցերը ճիշտ ժամանակին ընդհանուր ժողովը քննարկման չդնի, ապա դա կարող է բացասական հետևանքներ առաջացնել այդ տնտեսական ընկերության համար:

Նշված բացթողումն առանձապես ակնառու է դառնում, երբ խոշոր գործարքներ կնքելիս գործարքի առարկա գույքի արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսը և, ըստ օրենքի՝ պահանջվում է գործարքը կնքելու մասին ընդհանուր ժողովի որոշում: Այս դեպքում պարտադիր կերպով տեղի է ունենում երկակի հաստատում. սկզբում խորհուրդը որոշում է ընդունում հարցն ընդհանուր ժողովի օրակարգում ներառելու վերաբերյալ, այնուհետև ընդհանուր ժողովը կայացնում է գործարք կնքելու մասին որոշում: Վերոնշյալից հետևում է, որ հնարավոր են դեպքեր, երբ գործարքը համապատասխանում է ընդհանուր ժողովի կողմից քննարկման ենթակա գործարքների չափանիշներին, սակայն խորհուրդը կարող է բացառել գործադիր

⁴ Տե՛ս Ավետիսյան Վ.Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 306:

մարմնի ներկայացրած գործարքն ընդհանուր ժողովի կողմից քննարկելու, ինչպես նաև այդ գործարքը կնքելու հնարավորությունը: Կարծում ենք՝ նման իրավիճակը խորհրդի դերի անհիմն չափազանցված լինելու մասին է վկայում:

Այսպիսով՝ խոշոր գործարքի կնքման մասին որոշումներ կայացնելու հարցում բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների համագործակցության հստակ մեխանիզմների բացակայությունը լուրջ խնդիրներ է առաջացնում բաժնետիրական ընկերությունների համար, քանի որ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ խորհուրդը նշված հարցի վերաբերյալ համաձայնության չգալու և համապատասխան որոշում չկայացնելու դեպքում իրավունք ունի հարցը չհանձնելու ընդհանուր ժողովի հետագա քննարկմանը:

Նշված խնդիրը լուծելու նպատակով առաջարկում ենք վերոնշյալ դրույթում փոփոխություններ կատարել, այն է՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության մեջ «իրավունք ունի» բառերը փոխարինել «պարտավոր է» բառով, որով խորհրդի ոչ թե իրավունքը, այլ՝ պարտականությունը կդառնա գործարքների կնքման մասին որոշում կայացնելու վերաբերյալ հարցի քննարկումը հանձնել ընդհանուր ժողովին, եթե խորհրդի անդամները չկարողանան վերջնական համաձայնության գալ:

Իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում խոշոր գործարք կնքելիս ընկերության գործադիր մարմինների համագործակցության կարգը տարբերվում է բաժնետիրական ընկերություններից, քանի որ այս դեպքում գործադիր մարմինը տիրապետում է լիազորությունների ավելի լայն շրջանակի: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածների համաձայն՝ հերթական և արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր մարմնի կողմից, իսկ ըստ 39-րդ հոդվածի՝ ժողովի օրակարգը ձևավորում է գործադիր մարմինը, ինչը, իր հերթին, հնարավորություն է տալիս նրան ընդհանուր ժողովի քննարկմանն անարգել ներկայացնելու խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ հարցերը, բացի այդ՝ ընկերության ցանկա-

ցած մասնակից իրավասու է առաջարկ ներկայացնելու ընդհանուր ժողովի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկելու համար, իսկ գործադիր մարմինն իրավասու չէ փոփոխություններ կատարելու ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկվելու նպատակով առաջարկված լրացուցիչ հարցերի ձևակերպումներում:

Պետք է արձանագրել նաև, որ թե՛ բաժնետիրական ընկերությունների, թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքները սահմանում են, որ գործադիր մարմինը հաշվետու է ընդհանուր ժողովին և տնօրենների խորհրդին, և այս առումով պետք է ընդունել, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գործադիր մարմինների միջև համագործակցության մեխանիզմի կառուցակարգն առավել նախընտրելի է, քան բաժնետիրական ընկերությունների:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները մասնավոր իրավունքի սուբյեկտներ են, որոնց մասնակիցները, որպես կանոն, պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցելու ընկերության անմիջական ղեկավարմանը, առաջարկում ենք, որ գործադիր մարմինը, լինելով ինչպես կամք ձևավորող, այնպես էլ կամք արտահայտող մարմին, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցություն ունենա ընկերության կողմից առավել կարևոր որոշումների՝ խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների ընդունման գործում, այսինքն՝ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցի ընկերության ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի նիստերին:

Ուշադրության արժանի հաջորդ հարցը բաժնետիրական ընկերություններում խորհրդի և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում մասնակիցների ժողովի ու խորհրդի՝ խոշոր գործարքներ կնքելու վերաբերյալ որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումն է:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը սահմանում է, որ, եթե խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքն ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսն է, ապա խոշոր գոր-

ծարք կնքելու մասին որոշումը պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն, ընդ որում՝ խորհրդից դուրս եկած անդամների ձայները հաշվի չեն առնվում: Իսկ եթե խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելի է, ապա խոշոր գործարք կնքելու մասին որոշումը պետք է ընդունվի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

Վերլուծելով վերոնշյալ հոդվածների դրույթները՝ հարց է առաջանում՝ ո՞վքեր են համարվում խորհրդից դուրս եկած անդամներ՝ հիմք ընդունելով նաև այն փաստը, որ օրենքն այս հարցի վերաբերյալ որևէ սահմանում չի տալիս:

Ելնելով Ռուսաստանի Դաշնության⁵, Բելառուսի⁶, Ղազախստանի⁷, Մոլդովայի⁸ և այլ երկրների օրենսդրությունների համեմատական ուսումնասիրությունից՝ գտնում ենք, որ խոսքն այս դեպքում ոչ թե քվեարկությանը չմասնակցած, այլ խորհրդից առհասարակ դուրս եկած անդամների մասին է: Մասնավորապես՝ ՌԴ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ տնօրենների խորհրդից դուրս եկած անդամներ են համարվում նրանք, որոնց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են և մահացածները: Այսինքն՝ խորհրդից դուրս եկած են համարվում այն անդամները, որոնք կամ մահացել են, կամ էլ ընդհանուր ժողովի կողմից նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ խորհրդին չի հաջողվում միաձայն որոշում կայացնել, տեղի է ունենում հետևյալ երկու զարգացումներից մեկը.

- գործարք կնքելու մասին խորհրդի որոշման բացակայության փաստը նախևառաջ բացառում է գործադիր մարմնի կողմից այն կնքելու հնարավորությունը,

- խորհրդի որոշմամբ գործարք կնքելու վերաբերյալ որոշման կայացման հարցը կարող է փոխանցվել ընդհանուր ժողովի հետագա քննարկմանը:

Անհրաժեշտ է նշել, որ օրենքը բացառում է վերոնշյալ ընթացակարգերից որևէ շրջանցում, հետևաբար նույնիսկ այն դեպքում, երբ խորհրդի կողմ կամ դեմ քվեարկող անդամները միաժամանակ նաև ընկերության բաժնետերերն են և միասին տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի 3/4-ին, միևնույն է նրանք իրավունք չունեն շրջանցելու սահմանված ընթացակարգը, ուստի խորհուրդը ամեն դեպքում խոշոր գործարքներ կնքելու մասին որոշումը պետք է կայացնի միաձայն:

Սակայն բոլոր այն դեպքերում, երբ խորհուրդը չի կարողանում միաձայն որոշում կայացնել, խորհուրդը գործարքի կնքման վերաբերյալ որոշում կայացնելու հարցը պարտավոր է հանձնել ընդհանուր ժողովի քննարկմանը: Ուստի հարցը, թե ի՞նչ անել, երբ խոշոր գործարք կնքելու վերաբերյալ որոշման կայացումը հնարավոր չէ անհրաժեշտ քվորումի բացակայության պատճառով, օրենսդրական կարգավորման կարիք ունի: Գտնում ենք, որ պետք է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության մեջ ավելացնել, որ խորհուրդը գործարք կնքելու մասին որոշման ընդունման հարցը պարտավոր է փոխանցել ընդհանուր ժողովի քննարկմանը նաև խորհրդի նիստին անհրաժեշտ քվորումի բացակայության դեպքերում:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար սահմանած է խոշոր գործարքների կնքման մասին որոշումների կայացման այլ ընթացակարգ: Այսպես՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 48-րդ հոդվածի ուժով միայն մասնակիցների ընդհանուր ժողովն է իրավասու խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշում կայացնել: Հարկ է նկատել, որ այս հոդվածը դիսպոզիտիվ բնույթ է կրում:

⁵ Տե՛ս Федеральный закон «Об акционерных обществах» от 26.12.1995 года, №248, статья 48:

⁶ Տե՛ս Закон Республики Беларусь от 9 декабря 1992 г. №2020-XII, Об акционерных обществах, обществах с ограниченной ответственностью и обществах с дополнительной ответственностью, статья 552:

⁷ Տե՛ս Закон Республики Казахстан от 13.05.2003 г., №415-II, Об акционерных обществах, статья 55:

⁸ Տե՛ս Закон Республики Молдова, «Об акционерных обществах» от 02.04.1997 года, статья 332.

Մասնավորապես՝ սահմանվում է, որ ընկերությունն իր նախաձեռնությամբ խորհրդի ձևավորված լինելու դեպքում կարող է կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը հանձնել իր զուտ ակտիվների 20-50 տոկոսը կազմող արժեքով գործարքները կատարելու մասին որոշումների ընդունման իրավասությունը: Կանոնադրությամբ կարող է նաև նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար ընդհանրապես չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը:

Ուշագրավ է նաև այն, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը, ի տարբերություն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, չի սահմանում ձայների հարաբերակցությունը, որով խոշոր գործարքներ կատարելու մասին որոշումները կարող են ընդունվել ընդհանուր ժողովի, իսկ խորհրդի ձևավորված լինելու դեպքում՝ նաև խորհրդի կողմից:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը սահմանում է նաև, որ ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ խոշոր գործարքներ կատարելու համար չի պահանջվում ընդհանուր ժողովի կամ ընկերության խորհրդի որոշումը: Այսպիսով՝ ստացվում է, որ, մի կողմից՝ վերոնշյալ օրենքն իմպերատիվ նորմերով սահմանում է խոշոր գործարքների կատարման վերաբերյալ որոշումների կայացման ընթացակարգերը, սակայն զուգահեռաբար թույլ է տալիս ընդհանրապես չկիրառել այդ դրույթները:

Ուստի կարելի է եզրակացնել, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում օրենսդրի կողմից ցուցաբերած մոտեցումն առավելապես համապատասխանում է հայաստանյան իրավական համակարգին, քանի որ ցուցաբերում է ճկունություն նշված ընկերությունների գործունեության կարգավորման հարցում՝ թույլ տալով հաշվի առնել ամեն առանձին կազմակերպության առանձնահատկությունները:

Խոշոր գործարքի ինստիտուտի կարևոր խնդիրներից է նաև այն, որ խոշոր գործարք կնքելու մասին որոշման մեջ պարտադիր կերպով պետք է նշվեն հաստատվող գործարքի էական պայմանները:

Համեմատության համար նշենք, որ Ռու-

սաստանի Դաշնության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 79-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ խոշոր գործարք կնքելու մասին որոշման մեջ պարտադիր նշվում են հաստատվող գործարքի էական պայմանները: Մասնավորապես՝ նշվում են գործարքի կողմերը, շահառուները, գործարքի արժեքը, գործարքի առարկան և այլ էական պայմաններ:

Կարծում ենք՝ խոշոր գործարքների կատարման մասին ցանկացած որոշում, անկախ այն հանգամանքից՝ ընդունվել է ընդհանուր ժողովի, թե՛ խորհրդի կողմից, պետք է նշում պարունակի գործարքի առարկայի, դրա կողմերի ու շահառուների, գործարքի արժեքի և այլ էական պայմանների մասին: Հակառակ դեպքում պարզապես կորչում է խոշոր գործարքների կնքման վերաբերյալ որոշումների կայացման իմաստը, քանի որ ընկերության բաժնետերերը կամ մասնակիցները, չվերլուծելով գործարքի էական պայմանները, չեն կարող ընկերության համար կնքվող գործարքի նշանակության վերաբերյալ հստակ պատկերացում կազմել:

Ուստի խոշոր գործարքների կնքելու մասին որոշումների ռեկվիզիտների հարցը չափազանց կարևոր է և ունի օրենսդրական կարգավորման կարիք, իսկ Ռուսաստանի Դաշնության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 79-րդ հոդվածի 4-րդ մասի ներառումը նաև մեր օրենսդրությունում կարող է լուծել այս խնդիրը:

Բացի այդ՝ ուշագրավ բացթողում կարելի է համարել նաև այն, որ թե՛ բաժնետիրական, թե՛ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքները չեն նշում այն ժամկետները, որոնց ընթացքում այդ որոշումները պետք է ընդունվեն: Այս դեպքում հարց է առաջանում. ե՞րբ է պետք կայացնել գործարքի կնքումը հասատող որոշումը՝ մինչև գործարքի կնքումը, թե՛ մինչև գործարքի կատարումը, թե՛ կատարումից հետո: Ենթադրվում է, թե այս դեպքում խոսքը մինչև գործարքի կատարումը գործարքի կնքման վերաբերյալ որոշման կայացման մասին է, հակառակ դեպքում կատարված գործարքը կարող է համարվել չհաստատված և դատական կարգով անվավեր ճանաչվել: Կարծում ենք՝ նշված բաց-

թողումը շատ կարևոր ընթացակարգային հարց է, որ պիտի օրենսդրական կարգավորում ստանա, կամ որոշակի ժամկետ նախատեսվի գոնե կանոնադրությամբ:

Ուստի, հաշվի առնելով այն, որ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը կարող է անվավեր ճանաչվել, եթե չեն պահպանվել խոշոր գործարքի համար օրենքով նախատեսված պահանջները, բայց օրենքով ամրագրված չեն գործարքի համար էական պայմանները, առաջարկում ենք «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքներում դրույթ ամրագրել, որով սահմանվի, որ խոշոր գործարքը հաստատելու որոշման մեջ պարտադիր նշվում են գործարքի համար էական պայմանները՝ գործարքի կողմերը, շահույթ ձեռք բերողները, գործարքի արժեքը, գործարքի առարկան, գործարքի հաստատումից հետո գործարքը կնքելու օրն ու ժամկետը:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ խոշոր գործարք կնքելու մասին որոշումն ընդունվում է խորհրդի կողմից միաձայն, ընդհանուր ժողովի կողմից՝ բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ գործադիր մարմինը չի մասնակցում խոշոր գործարք կնքելու որոշումների ընդունմանը, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բաժնետիրական ընկերությունների համար, մինչդեռ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում նման խնդիր չկա, քանի որ այդ օրենքով հերթական և արտահերթ ընդհանուր ժողովները հրավիրվում են գործադիր մարմնի կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բաժնետիրական ընկերությունները մասնավոր իրավունքի սուբյեկտներ են, որոնց մասնակիցները պետք է հնարավորություն ունենան մասնակցելու ընկերության անմիջական ղեկավարմանը, առաջարկում ենք, որ գործադիր մարմինը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցություն ունենա ընկերության կողմից առավել կարևոր որոշումների ընդունման գործում, այսինքն՝ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցի խոշոր գործարք կնքելու վերաբերյալ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի նիստերին:

Տնօրենների խորհրդին տրված իրավունքը չչարաշահելու նպատակով առաջարկում ենք նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության մեջ «իրավունք ունի» բառերը փոխարինել «պարտավոր է» բառով, որով խորհրդի ոչ թե իրավունքը, այլ՝ պարտականությունը կդառնա գործարքների կնքման մասին որոշում կայացնելու վերաբերյալ հարցի քննարկումը հանձնել ընդհանուր ժողովին, եթե խորհրդի անդամները չկարողանան վերջնական համաձայնության գալ:

Այսինքն՝ խոշոր գործարք կնքելու մասին որոշումների կնքման ընթացակարգերը պետք է համապատասխանեն օրենսդրության պահանջներին, հակառակ դեպքում այդ որոշումները կարող են անվավեր ճանաչվել դատական կարգով:



ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, հայցորդ

ՊՐԵՏՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱԶԴԵՃՈՒԹՅՈՒՆԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Հռոմի իրավական համակարգը հայտնի է, նախ և առաջ, պրետորական ինստիտուտի իրավաստեղծ գործունեությամբ, որը հետագայում հիմք է հանդիսացել հասարակությունների իրավունքների և զարգացման, և ամրապնդման համար: Այդ ինստիտուտի կենտրոնացված մարմինը եղել է հենց պրետորը, ով ամբողջությամբ վերահսկել ու կարգավորել է դատական գործունեությունը: Պրետորի դատավարական, ինչպես նաև վարչական արտոնությունները տարածվել են դատավորի ընտրության, նշանակման և իմպերատիվ բնույթով պրետորական բանաձևի շնորհման վրա: Պրետորը որևէ մեկին չի պարտադրել ստանձնել միջնորդ դատավորի պարտականություններն այն պատճառաբանությամբ, որ այդ գործը համարվել է ազատ, չի ծագել պարտավորության ուժով և զատ է եղել հարկադրական բնույթից: Սակայն, եթե որևէ մեկն արդեն ստանձնել է միջնորդ դատավորի պարտականությունները, ապա պրետորը համարել է, թե այդ գործը պատկանել է իր ջանքերի և հոգսերի շարքին: Նույնիսկ ավելին՝ վերջինիս պարտավորությունների մեջ ներառվել է վեճն իր ավարտին հասցնելու և դատավորի ընտրության վերաբերյալ նոր վեճի առաջացումից խուսափելու պարտականությունների հետևողականությունը: Այն պարագայում, եթե միջնորդ դատավորը եղել է նախկին կոնսուլը, ինչի շնորհիվ օժտված է եղել զգալի արժանիքներով, պրետորը շարունակել է ձեռնարկել մինչև հարկադրանք հասնող բոլոր միջոցները՝ դատավորի ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելու նպատակով¹: Դատավորի ստանձնած պարտականությունների կատարումը նշանակել է ղեկավարող և վերահսկողու-

թյուն իրականացնող պրետորի կողմից վերջինիս տրամադրված հայցային բանաձևին խիստ համապատասխան գործելը: Բանաձևը, սովորաբար, նախատեսել է ողջ դատական ընթացքը և քաղաքացիաիրավական վեճի լուծումը²:

Պրետորի դատավարական արտոնությունները վերաբերել են պատասխանողի կողմից դատարան ներկայանալու ապահովմանը, ինչպես նաև դրան խոչընդոտող անձանց դեմ միջոցների ձեռնարկմանը: Գործը քննելու իրավասության ընդդատությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է եղել, որ ցանկացած հիմքով դատարան կանչվող անձը ներկայանա պրետորի կամ նման իրավասություն ունեցող այլ մարմնի մոտ: Նախատեսված է եղել միայն երկու դեպք, երբ դատարան ներկայացող անձը հնարավորություն է ունեցել ազատվելու դատական գործընթացից: Առաջինը կայացել է որևէ մեկի կողմից իր անձի պաշտպանության մեջ, իսկ երկրորդը՝ գործի քննության ընթացքում հաշտության համաձայնություն կնքելու մեջ: Բոլոր մյուս դեպքերում դատարան ներկայացող անձը պարտավոր է եղել մասնակցելու դատաքննությանը և կատարելու իրեն վերապահված գործողությունները: Ուպահանոսը նշել է, որ տվյալ պահանջը պարունակվել է պրետորական էդիկտում և նպատակամղված է եղել դատարան կանչված անձանց խոչընդոտողներին հնազանդեցնելուն՝ պատժամիջոցների նկատմամբ վախի ուժով³: Նախատեսված է եղել հատուկ պատիժ այն անձանց համար, ովքեր չար մտադրությամբ ձգտել են խոչընդոտել որևէ մեկին ներկայանալ դատարան: Համարվել է, որ ոչ միայն նա է գործել չար մտադրությամբ, ով անձամբ կամ իր մտերիմների միջոցով խոչընդոտել է ներկայանալ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

¹ Sŕu Памятники Римского права, Законы XII таблиц, Институции Гая, Дигесты Юстиниана, М., 1997, էջ 239:
² Sŕu Савельев В. А., Римское частное право (проблемы теории и истории), Юрист, М., 1995, էջ 47:
³ Sŕu Памятники римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 191-192:

դատարան, այլ նաև նա, ով այդ նպատակով ներգրավել է այլ անձանց՝ չար մտադրության մասին տեղեկացնելու հանգամանքից անկախ: Այս անձանց համար օրենքով նախատեսված խիստ պատիժը համարվել է բավականին անհրաժեշտ և վերին աստիճանի արդարացի:

Անհրաժեշտության դեպքում պրետորի դատավարական արտոնություն է համարվել որոշակի կատեգորիայի անձանց համար դատական պաշտպանություն իրականացնելը, ինչպես նաև սկզբնական դիրքի վերականգմանն ու երաշխավորությանը վերաբերող հարցերի լուծումը: Այս կապակցությամբ Ուլպիանոսը պատմել է, որ պրետորը, հետևելով բնական արդարությանը, հաստատել է իր էդիկտը, որի միջոցով պաշտպանություն է տրամադրել երիտասարդներին, քանի որ այդ տարիքի անձանց դատողությունը թուլակազմ է և անկայուն, ինչի պատճառով ենթակա է խաբեության հնարավորությունների: Մասնավորապես՝ պրետորը պաշտպանություն է տրամադրել և օգնություն ցուցաբերել քսանհինգ տարին չլրացած անձանց ոչ միայն, երբ վերջիններիս գույքն ինչ-որ չափով նվազել է, այլ նաև՝ երբ վերջիններիս համար կարևոր է եղել վեճերի և ծախսերի հետևանքով դժվարությունների առջև չհայտնվելը: Բացի այդ՝ պրետորն օգնություն է ցուցաբերել վրիպած կամ խաբված անձանց՝ վախի, խարդախության, տարիքի կամ նմանատիպ այլ հանգամանքի հետևանքով վնաս կրելու պարագայում: Միաժամանակ՝ պրետորը խոստացել է վերականգնել սկզբնական դիրքը բոլոր այն դեպքերում, երբ տուժողի գործողություններն իրավաչափ են եղել և ճշմարիտ⁴: Երաշխավորության վերաբերյալ հարց լուծելիս պրետորը պնդել է, որ երաշխավորն ընտրվի նյութապես ապահովված անձանց միջից, բացառություն են հանդիսացել մտերիմ մարդկանց շարքից երաշխավորող ընտրելու դեպքերը: Այստեղ պարտադիր կերպով հաշվի է առնվել գործի բնույթը, որտեղ գույքային դրությունը որևէ նշանակություն չի ունեցել:

Պրետորի դատավարական արտոնությունները վերաբերել են նաև գործունակության սահ-

մանափակման, դատական գործունեության ընթացքի կամ ավարտի հարցերի լուծմանը: Սահմանափակ գործունակության ենթարկված անձինք, ովքեր չեն փոփոխել կամ գրկվել քաղաքացիությունից, ի հակադրումն Հռոմի մասնավոր իրավունքի ավանդական կանոնների՝ շարունակել են կապված լինել մինչև գործունակության սահմանափակումն ստանձնած բոլոր սեփական բնական պարտավորություններով: Էդիկտներից մեկում պրետորը հայտնել է. «Ես հայց կտամ նշված անձանց դեմ՝ իբրև գործունակությունը չի սահմանափակվել, այն դեպքում, երբ նրանց միջև պայմանագիրը կնքվել է նախկինում, և միայն այնուհետև ապացուցվել, որ նրանք ենթարկվել են գործունակության սահմանափակմանը»⁵:

Պրետորը քննել և լուծել է ինչպես մասնավոր բնույթի հարցեր, որոնք կապված են եղել Հռոմի քաղաքացիների գործունակության սահմանափակման վերաբերյալ հայցերի հետ, այդպես էլ ավելի ընդհանուր՝ դատավարության ընթացքի կամ ավարտի հետ կապված հարցեր⁶: Այս կապակցությամբ հռոմեական իրավաբան Պողոսը հավաստել է. «Դատավարությունն ավարտվում է, եթե տվյալ իրավասության բնագավառում դատավորից առավել իշխանությամբ օժտված պրետորը նման արգելք է սահմանում, կամ եթե դատավորը թույլտվություն է ձեռք բերում դատական գործունեության ընթացքը վարելու համար, որը պրետորին հավասար իշխանություն է»⁷:

Պրետորն օժտված է եղել վերը նշված դատավարական արտոնությունների նման մի շարք այլ լիազորություններով, որոնք իրեն հնարավորություն են ընձեռել լիովին վերահսկելու դատական գործընթացը: Վերջինիս առօրյա գործունեության ընթացքում ձևավորվել են պրետորական իրավունքի հիմքերը, դատավարական իրավունքի ինստիտուտներն ու նորմերը, դրա բովանդակության բաղադրիչները, ինչի միջոցով պրետորն զգալի ազդեցություն է թողել ողջ հռոմեական նյութական իրավունքի վրա: Պրետորների իրավաստեղծ գործունեու-

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 219, 227-228:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 233:

⁶ Տե՛ս Савельев В. А, նշվ. աշխ., էջ 47-48:

⁷ Տե՛ս Памятники Римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 254:

թյունը, որը լրացրել և ուղղել է Հռոմի մասնավոր իրավունքը, ձևավորել է ինքնատիպ, Հռոմի մասնավոր իրավունքից պայմանականորեն առանձնացող պրետորական իրավունքի համակարգը, որը ներկայումս համարվում է ժամանակակից նախադեպային իրավունքի սկզբնաղբյուրը:

«Հուստինիանոսի Ինստիտուցիաներում» ինչպես պրետորական իրավունքը, այնպես էլ պրետորական իրավունքի նորմեր բովանդակող պրետորական էդիկտներն անվանվել են «պատվավոր իրավունք» այն պատճառաբանությամբ, որ այս իրավունքն զգալի ուշադրության է արժանացել պատվավոր պաշտոններ զբաղեցնող տղամարդկանց կողմից⁸: Պրետորական իրավունքը Հռոմի մասնավոր իրավունքի վրա թողել է զգալի ազդեցություն՝ միաժամանակ պահպանելով իր ինքնուրույնությունը: Այս իրավական երևույթների ու հասկացությունների միջև տարբերություններն ընդգծելու կապակցությամբ՝ գիտական գրականության մեջ նշվել է հետևյալը. «Եթե «քաղաքացիական իրավունք» տերմինով իրավունքի ժամանակակից համակարգերում հիմնականում նշում են իրավունքի այն մասը, որը կարգավորում է տվյալ հասարակության մեջ գույքային հարաբերությունները, ապա հռոմեական իրավունքում «քաղաքացիական» (civilis), «քաղաքացիական իրավունք» (ius civile) տերմիններին տրվում է այլ՝ ավելի ընդարձակ իմաստ: Մասնավորապես՝ հռոմեական իրավունքում «ius civile» տերմինով նշանակվել է, նախ և առաջ, վաղ ժամանակաշրջանի հին հռոմեական ազգային իրավունքը, որն իր գործողությունը տարածել է բացառապես հռոմեական քաղաքացիների՝ քվիրիտների (quiritēs) նկատմամբ, այդ պատճառով անվանվում է նաև քվիրտորական իրավունք»⁹:

Հուստինիանոսի Ինստիտուցիաներում նշվել է. «Հռոմի մասնավոր իրավունքն իր անվանումը ձեռք է բերում յուրաքանչյուր պետության կողմից: Այն իրավունքը, որով օգտվում է հռոմեական ազգը, մենք կոչում ենք Հռոմի մասնավոր իրավունք կամ իրավունք, որով օգտվում են քվիրիտ-

ները, կոչվում է քվիրտորական, իսկ հռոմեացիները կոչվում են քվիրիտներ՝ Քվիրինի կողմից»¹⁰:

Հռոմի մասնավոր իրավունքի մասին նմանատիպ պատկերացում է պարունակվում նաև Հուստինիանոսի Դիգեստներում, որտեղ ասված է. «Այն իրավունքը, որը յուրաքանչյուր ազգ սահմանել է իր համար, պետության սեփական իրավունքն է և կոչվում է Հռոմի մասնավոր իրավունք: Իրավունքն այն է, ինչն օգտակար է բոլորին և շատերին յուրաքանչյուր պետությունում, այդպիսին է Հռոմի մասնավոր իրավունքը: Հռոմի մասնավոր իրավունքն այն է, ինչը ծագում է օրենքներից, պլեբիսցիտներից, սենատուս կոնսուլտներից, հրամանագիր պրինցեպսներից, իմաստունների կարծիքներից: Պրետորական իրավունքն այն է, ինչը պրետորները ներմուծել են Հռոմի մասնավոր իրավունքին աջակցելու, լրացնելու կամ ուղղելու համար՝ հասարակության շահի նպատակով: Ի պատիվ պրետորների՝ դա անվանվում է նաև «ius honorarium»¹¹: Դա իրավունք է, որը ելնում է պաշտոնական պարտականություններն անհատույց կատարող պատվավոր անձանց՝ պրետորների կողմից: Հռոմի մասնավոր իրավունքի և քաղաքացիական իրավունքի համեմատությունը, ժամանակակից պատկերացումներին համապատասխան, մատնանշում է առաջինի առաջնայնությունը: Հռոմի մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ պրետորական իրավունքի նորմերի միջոցով կարգավորվել են ոչ միայն գույքային, այլ նաև մի շարք այլ հարաբերություններ: Ելնելով հասարակության շահերից՝ պրետորական իրավունքը՝ որպես Հին Հռոմի դատական իրավաստեղծում, լրացրել և ուղղել է ոչ միայն հռոմեական իրավունքի գույքային և ոչ գույքային հարաբերությունները կարգավորող նորմերը, այլ նաև ավելի նշանակալից զանգվածով իրավական նորմեր, որոնց օգնությամբ կարգավորվել են հռոմեական քաղաքացիների միջև առաջացող հարաբերությունները: Հռոմի մասնավոր իրավունքի նորմերը կարևոր դեր են կատարել Հռոմի քաղաքացիների միջև առաջացող վեճերը լուծելու համար: Վերջիններիս մեջ կատարվել են հա-

⁸ Sեն Памятники Римского права, Институции Юстиниана, Л. Л. Кофанов, В. А. Томсинов, М., 1998, էջ 19:

⁹ Sեն Памятники Римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 159:

¹⁰ Sեն Кофанов Л. Л., Томсинов В. А., նշվ. աշխ., էջ 17:

¹¹ Sեն Памятники Римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 158-159:

մապատասխան լրացումներ և ուղղումներ՝ քաղաքի պրետորի էդիկտներում բովանդակվող համապարտադիր նորմերի օգնությամբ¹²:

Հռոմի մասնավոր իրավունքի հետ մեկտեղ՝ պրետորական իրավունքը մեծ ազդեցություն է ունեցել նաև ազգերի իրավունքի (ius gentium) զարգացման վրա, որն անվանվում է նաև համազգային իրավունք:

«Հռոմի մասնավոր և համազգային իրավունքը բաժանում են հետևյալ կերպ՝ օրենքներով և սովորույթներով առաջնորդվող բոլոր ազգերը մասնակիորեն օգտվում են իրենց սեփական իրավունքից, մասնակիորեն մարդկության համար ընդհանուր իրավունքից: Իրավունքը, որը յուրաքանչյուր ազգ ինքն է հաստատել իր համար, իր սեփական իրավունքն և կոչվում է մասնավոր՝ որպես քաղաքացիական հասարակությանը բնորոշ իրավունք: Իսկ այն իրավունքը, որը բոլոր մարդկանց միջև հաստատել է բնական գիտակցությունը, պաշտպանվում է բոլոր ազգերի կողմից բոլոր ժամանակներում և կոչվում է համազգային, ինչպես այն իրավունքը, որով առաջնորդվում են բոլոր ազգերը»¹³:

Այսպիսով՝ հռոմեական ազգը, ինչպես և բոլոր մյուս ազգերը, մի կողմից առաջնորդվել է իր սեփական իրավունքով, մյուս կողմից՝ մարդկության համար ընդհանուր իրավունքով: Ազգերի իրավունքը, ինչպես և Հռոմի մասնավոր իրավունքը, ունեցել է բարդ և հակասական բնույթ: Հռոմեական իրավունքի մասնագետների վկայությամբ՝ այդ իրավունքը ձևավորվել է շատ բազմազան հանգամանքների հետևանքով: Մասնավորապես՝ վերջինիս վերաբերել է հնագույն իրավունքը, որը կարգավորել է հռոմայեցիների և օտարերկրյա համայնքների միջև կնքված պայմանագրերը, ամուսնության փոխադարձ իրավունքները, առևտրային իրավունքը և այլն:

Համազգային իրավունքի բաղկացուցիչ մաս է կազմել առևտրային հարաբերությունների պրակտիկայում կիրառվող և ընդհանուր բնույթ ունեցող սովորական իրավունքը, որն ուղղված է եղել ցեղային ազգակցության և տնտեսական սերտ կապերի կարգավորմանը: Այսինքն՝ համ-

ազգային իրավունքի համակարգին վերաբերել է հիմնականում առևտրային իրավական ինստիտուտը, որը հռոմեական տիրապետության տարածման ընթացքում ընդօրինակվել է կայսրության տարբեր պրովինցիաների կողմից:

Տարբեր երկրների և ազգերի հետ առևտրային կապերի զարգացման ընթացքում ձևավորվող համազգային իրավունքը, ինչպես Հռոմի մասնավոր իրավունքը, ենթարկվել է պրետորական (դատական) իրավունքի խոր ազդեցությանը: Սակայն այստեղ եղել է սկզբունքային տարբերություն, որի համաձայն՝ Հռոմի մասնավոր իրավունքի զարգացման վրա ազդեցություն են գործել քաղաքի պրետորի էդիկտներում բովանդակվող պրետորական իրավունքի նորմերը, իսկ համազգային իրավունքի ձևավորման և զարգացման ընթացքի վրա ազդել են հիմնականում այլ քաղաքի՝ պերեգրինների պրետորի էդիկտների բովանդակությունը կազմող նորմերը¹⁴: Սույն ազդեցության շնորհիվ ձևավորվել է կյանքին ամբողջովին հարմարեցված իրավունք: Այդ իրավունքը մշակվել է դատական մագիստրատների պրակտիկայի միջոցով և հաճախակի արտահայտվել առևտրային սովորույթներում: Համազգային իրավունքն արդյունավետ կերպով և արագ հարմարեցվել է հռոմեական հասարակության զարգացող պահանջներին, ինչը հնարավոր չէ հավաստել հստակ ձևավորված և քիչ շարժական Հռոմի մասնավոր իրավունքի մասին: Տնտեսական հարաբերություններում մասնակցություն են ունեցել ոչ միայն հռոմայեցիները, այլ նաև այլ ազգությունների ներկայացուցիչները: Եվ հիմնականում՝ տնտեսական, իսկ ավելի կոնկրետ՝ առևտրային հարաբերությունների հիման վրա զարգացած և հնագույն ավանդույթներից ազատ համազգային իրավունքը ժամանակի ընթացքում դարձել է համընդհանուր իրավունք այն իմաստով, որ կիրառվել է առևտրային շրջանառության բոլոր մասնակիցների նկատմամբ՝ քաղաքացիությունից անկախ¹⁵: Համընդհանուր դառնալու պատճառներից կարևորագույնը եղել է այլ քաղաքի պրետորի իրավաստեղծ գործունեությունը: Երկրորդ՝ պերեգրիններ-

¹² Մանրամասն տե՛ս՝ Скрипилев Е. А., Основы Римского права, М., 2000:

¹³ Տե՛ս Кофанов Л. Л., Томсинов В. А., նշվ. աշխ., էջ 17:

¹⁴ Տե՛ս Галанза П. Н., Государство и право Древнего Рима, М., 1963, էջ 70-71:

¹⁵ Տե՛ս Новицкий И. Б., Перетерский И. С., Римское частное право, М., 1999, էջ 19:

րի պրետորը, լինելով հանրապետական Հռոմի պետական համակարգի մարմին, համազգային իրավունքի նորմերի ձևավորման և կենտրոնացման ընթացքում գտնվել է մշտական կապի և փոխազդեցության մեջ տվյալ համակարգի մյուս մարմինների, այդ թվում նաև՝ քաղաքի պրետորի հետ: Նույնիսկ ավելին՝ մի շարք դեպքերում վերջինս պարտադրված է եղել իր գործունեության ընթացքում հղում կատարելու Հռոմի մասնավոր իրավունքի առանձին նորմերին, որոնց հիման վրա լուծվել են Հռոմի քաղաքացիների միջև ծագող մի շարք վեճեր: Մասնավորապես՝ դա տեղի է ունեցել առևտրային իրավահարաբերություններում, երբ պրետորին ներկայացված և բավարարման ենթակա պահանջը հնարավոր չի եղել բավարարել միայն Հռոմի մասնավոր իրավունքի սահմաններում: Այդպիսի դեպքերում առաջին պրետորը, ով գործել է բացառապես Հռոմի մասնավոր իրավունքի սահմաններում, դիմել է *ius gentium*-ին և համապատասխանաբար ներկայացրել համազգային իրավունքի հիմնական դրույթներից ընդօրինակած հայցերի բանաձևեր: Երբեմն պերեգրիների պրետորի պարտականությունները փոխանցվել են քաղաքի պրետորին, ում գործունեության շնորհիվ զարգացած դատական պրակտիկան եղել է առավել բարձր մակարդակի վրա և ունեցել է ահռելի ազդեցություն հանրապետական Հռոմի պետաիրավական կյանքի վրա: Այս մասին վկայում են Տիտոս Լիվիոսի աշխատությունների առանձին հատվածները: Այդպիսի օրինակ է հետևյալը. «Օտարերկրացիների գործերով պրետոր Մարկոս Էմիլիոսի դատական պարտականությունները փոխանցվում են իր գործընկեր՝ քաղաքի պրետոր Մ. Ատիլիոսին»¹⁶:

Հռոմի մասնավոր և համազգային իրավունքի վրա պրետորական իրավունքի ազդեցությունը, ինչպես նաև իրավունքի մեկ համակարգի նորմերը մյուսից ընդօրինակելու պրակտիկան, անկասկած, հանգեցրել է դրանց աստիճանաբար մերձեցմանը և միաձուլմանը: Հռոմի մասնավոր և համազգային իրավունքի վե-

րաբերյալ իրավաբան Ուլպիանոսը նշել է. «Հռոմի մասնավոր իրավունքն ամբողջովին չի առանձնանում բնական իրավունքից և ազգերի իրավունքից, սակայն ոչ միշտ է դրանց հետևում, և եթե մենք ընդհանուր իրավունքին ավելացնում կամ դրանից բացառում ենք որևէ բան, ապա ստեղծում ենք սեփական, այսինքն՝ Հռոմի մասնավոր իրավունք»¹⁷:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ Հռոմի մասնավոր իրավունքը ժամանակին հակադրվել է նաև պրետորական, նաև ազգերի իրավունքին, հետազոտողները եզրակացրել են, որ Հռոմի մասնավոր իրավունքի և ազգերի իրավունքի հակադիր դրվածքների երկակիությունը չի հանգեցնի վերջիններիս փոխադարձ միաձուլմանը¹⁸: Սակայն իրավունքը միավորելու, քաղաքացիական և առևտրային շրջանառությունը զարգացնելու և առևտրային հարաբերություններն ամրապնդելու ձգտումն աջակցել է այդ զարգացմանը: Այնուհետև Հռոմի մասնավոր իրավունքի և ազգերի իրավունքի դրվածքների միաձուլման ընթացքին աջակցել է նաև հռոմեական քաղաքացիների իրավունքների ստանձնումը պերեգրիների կողմից: Այսպիսի արմատական փոփոխությունն անխուսափելիորեն հանգեցրել է վերջիններիս նախկին իրավունքի՝ *ius gentium*-ի համապատասխան փոփոխությանը և դրա սկզբունքների, ինստիտուտների միաձուլմանը Հռոմի մասնավոր իրավունքի հետ: Ի վերջո՝ հռոմեական իրավունքի միասնական համակարգի ձևավորման ընթացքին մեծապես աջակցել է պրետորական իրավունքի ինտեգրումը, որը, աջակցելով և զարգացնելով *ius civile*-ն՝ իրականում իրականացրել է *ius gentium* սկզբունքները¹⁹:

Այսպիսով՝ պրետորական իրավունքը՝ որպես դատական իրավաստեղծման գաղափար, մեծ ազդեցություն է թողել ոչ միայն Հռոմի մասնավոր և համազգային իրավունքի զարգացման ընթացքի, այլ նաև դրանց հիման վրա հռոմեական իրավունքի միասնական համակարգի ձևավորման ընթացքի վրա:

¹⁶ Стів Седяков С. Ю., Роль квинтильного претора в создании норм римского частного права предклассического периода, Древнее право, 1996, №1, էջ 126:

¹⁷ Стів Памятники римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 158:

¹⁸ Стів Новицкий И. Б., Перетерский И. С., նշվ. աշխ., էջ 19:

¹⁹ Նույն տեղը:

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԿԱ ՄԻ ՇԱՐՔ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացվել են քրեական գործերով իրավական օգնության բնագավառում գործնականում ծագող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցման շրջանակում սեփական քաղաքացիների՝ որպես կասկածյալ կամ մեղադրյալ հարցաքննելը և օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ միջնորդություններով ստացված քրեական գործերով հակընդդեմ հարցման իրավունքն ապահովելը:

Բանալի բառեր. իրավական օգնություն, միջազգային համագործակցություն, հարցաքննություն, հակընդդեմ հարցում, տեսակոնֆերանս, քրեական հետապնդում, քրեական գործով վարույթի փոխանցում:

АРТУР ДАВТЯН

Генеральный прокурор Республики Армения,
кандидат юридических наук

ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ В СФЕРЕ ОКАЗАНИЯ ПРАВОВОЙ ПОМОЩИ ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ

В статье представлены практические проблемы, возникающие в сфере оказания правовой помощи по уголовным делам, такие как допрос собственных граждан в качестве подозреваемых либо обвиняемых в рамках запроса об оказании правовой помощи, а также обеспечение права на встречный опрос (конфронтацию) при получении ходатайств компетентных органов иностранных государств об осуществлении уголовного преследования.

Ключевые слова: правовая помощь, международное сотрудничество, допрос, встречный опрос, видеоконференция, уголовное преследование, передача уголовного дела.

ARTUR DAVTYAN

Prosecutor General of the Republic of Armenia,
Candidate of Legal Sciences

**PRACTICAL ISSUES IN THE SPHERE OF INTERNATIONAL-LEGAL COOPERATION
ON CRIMINAL MATTERS**

The Article presents some practical issues in the sphere of international-legal assistance on criminal matters such as interrogation of citizens as suspects or accused, while executing the requests on legal assistance in criminal matters and ensuring the right to confrontation under the transferred criminal proceedings (cases) from competent authorities of foreign states.

Keywords: legal assistance, international cooperation, interrogation, confrontation, video-conference, criminal prosecution, transfer of criminal proceedings

ԶԱՐՈՒՎՈՒ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման, որակավորման բարձրացման և գիտահետազոտական գործունեության բաժնի պայմանագրային դասախոս

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՆԱԽԱԴԵՊԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՌ

Սույն հոդվածում փորձ է արվել ի հայտ բերել անձի հոգեկանում առկա այն հոգեբանական գործոնները, որոնք կարող են հանգեցնել կոռուպցիոն վարքագծի: Մասնավորապես՝ ժամանակակից օրինակներով ներկայացվել է, թե ինչպես անձը, արդեն իսկ ծնվելով, կարող է ունենա կոռուպցիոն կամ հակակոռուպցիոն վարքագծի տրամադրվածություն՝ իր և իր նախնիների կյանքի փորձից կախված:

Վերջիններիս հետ կապված՝ անդրադարձվել է նաև կոռուպցիոն վարքագիծ ծնող ազգային ավանդույթի հիմնախնդրին, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում կարևորություն ունեցող վստահության գործոնին:

Բանալի բառեր. կոռուպցիա, կաշառք, կոռուպցիոն նախադեպ, կոլեկտիվ անգիտակցական, վստահություն պետությանը, անվստահություն կոռուպցիային:

ЗАРУИ АРУТЮНЯН

Контрактный преподаватель кафедры переподготовки, повышения квалификации и научно-исследовательской деятельности Академии государственного управления РА

ПРЕЦЕДЕНТ КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ КАК ПРИЧИНА КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ

В данной статье предпринята попытка выявить личностные психологические факторы, которые могут привести в коррупционному поведению. В частности, на современных примерах рассмотрено, как человек уже с рождения может иметь склонность к коррупционному или антикоррупционному поведению, в зависимости от опыта своей жизни и опыта его предков.

В связи с последними, также отражена проблема национальной традиции, рождающей коррупционное поведение, а также фактор доверия, который важен при борьбе с коррупцией.

Ключевые слова: коррупция, взятка, коррупционный прецедент, коллективное бессознательное, доверие к государству, недоверие к коррупции.

ZARUHI HARUTYUNYAN

Lecturer on contract basis at the Faculty of Trainings, Qualification and Research Activities at Public Administration Academy of the Republic of Armenia

PRECEDENT OF CORRUPTION BEHAVIOR AS A CAUSE OF CORRUPTION BEHAVIOR

An attempt is made to identify personal psychological factors that can lead to corrupt behavior in this article. In particular, it is discussed on recent examples how a person from his birth can have tendency to corrupt or anti-corruption behavior depending on his life experience and experience of his ancestors.

In connection with the latter, the problem of the national tradition that engenders corrupt behavior as well as the trust factor important in fight against corruption are also reflected.

Keywords: corruption, bribe, corruption precedent, collective unconscious, trust in the state, distrust of corruption.

ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Սյունիքի մարզի դատախազության դատախազ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սույն հոդվածում հոդվածագիրը հանգամանորեն հետազոտում է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված հիմնախնդիրները:

Հեղինակը ձևակերպել է մի քանի նոր դրույթներ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների էության և առանձնահատկությունների վերաբերյալ և ներկայացնում է մի շարք առաջարկություններ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի կատարելագործման վերաբերյալ:

Բանալի բառեր. հանցագործություն, զինվորական հանցագործություններ, իրավակիրառ պրակտիկա, քրեական օրենսդրություն, կանոնակարգային փոխհարաբերություններ:

ЛЕОНИД НААПЕТЯН

Прокурор прокуратуры Сюникского марза (области) РА,
соискатель Института философии, социологии и права НАН РА

ПОНЯТИЕ, СУЩНОСТЬ И ВИДЫ ВОИНСКИХ ПРЕСТУПЛЕНИЙ

В настоящей статье автор обстоятельно изучает проблемы преступлений против порядка подчиненности и воинских уставных взаимоотношений.

Автор формулирует некоторые новые положения о преступлениях против порядка подчиненности и воинских уставных взаимоотношений и выдвигает ряд предложений по совершенствованию отдельных норм Уголовного кодекса Республики Армения.

Ключевые слова: преступления, воинские преступления, устав, уставные взаимоотношения, правоприменительная практика.

LEONID NAHAPETYAN

Prosecutor of Procuracy of the Syunik region RA,
An applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

THE CONCEPT, NATURE AND TYPES OF WAR CRIMES

In this article, the author of the article examines in detail the problems associated with crimes against the order of military service.

The author has formulated several new provisions regarding the nature and characteristics of crimes against the order of military service and offers a number of proposals for improving the Criminal Code of the Republic of Armenia.

Keywords: crime, war crimes, law enforcement practice, criminal law, statutory relations.

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱՆԿԱԽ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ (ՈՒՆԻՎԵՐՍԱԼ) ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է «Անկախ հակակոռուպցիոն (ունիվերսալ) մարմնի ստեղծման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմային, հոդվածի շրջանակներում համակարգված վերլուծության առարկա են հանդիսացել աշխարհում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի հիմնական մոդելները: Հեղինակը նշում է, որ ՀՀ-ում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները բավարար երաշխիքներ չեն ստեղծում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար: Նշվում է, որ ՀՀ-ում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված (ունիվերսալ) մարմին, որը կունենա բավարար իրավական և քաղաքական երաշխիքներն իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար:

Բանալի բառեր. կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մոդել, կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմին:

АЙК КЕСОЯН

Главный специалист юридического управления Аппарата Премьер-министра РА, кандидат юридических наук

ПЕРСПЕКТИВЫ СОЗДАНИЯ НЕЗАВИСИМОГО АНТИКОРРУПЦИОННОГО (УНИВЕРСАЛЬНОГО) ОРГАНА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Статья посвящена теме «Перспективы создания независимого антикоррупционного (универсального) органа в Республике Армения», в рамках статьи предметом системного анализа послужили действующие в мире основные модели институциональной борьбы с коррупцией. Автор отмечает, что действующие в РА институциональные механизмы борьбы с коррупцией не создают достаточных гарантий для эффективной борьбы с коррупцией. По мнению автора, для эффективной борьбы с коррупцией в РА необходимо создать специализированный (универсальный) орган борьбы с коррупцией, который будет обладать достаточными правовыми и политическими гарантиями для эффективного осуществления своей деятельности.

Ключевые слова: универсальная модель борьбы с коррупцией, превентивная модель борьбы с коррупцией, правоохранительная модель борьбы с коррупцией, специализированный орган борьбы с коррупцией.

HAYK KESOYAN

Office of the Prime Minister of the Republic of Armenia, legal department, chief specialist, PhD

PROSPECTS FOR THE CREATION OF INDEPENDENT ANTI-CORRUPTION (UNIVERSAL) BODY IN THE REPUBLIC OF ARMENIA

The article is devoted to the theme “Prospects for the creation of independent anti-corruption (universal) body in the Republic of Armenia”, within the framework of the subject of the article system analysis served as acting in the world of basic models of the institutional fight against corruption. The author notes that the existing institutional mechanisms of fight against corruption in RA do not provide sufficient guarantees for the effective fight against corruption. The author believes that an effective fight against corruption in Armenia needs to create a specialized (universal) body to combat corruption, which will have sufficient legal and political guarantees for the effective implementation of its activities.

Keywords: universal model of the fight against corruption, preventive model of the fight against corruption, the law-enforcement model to combat corruption, a specialized body to combat corruption.

ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

ԱՌԱՆՁՆԱԿԻ ԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՀԱՓՇՏԱԿԵԼԸ

Հեղինակի կողմից քննարկման առարկա են դարձել առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակության՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության, քրեաիրավական էությանն ու որակման առանձնահատկություններին վերաբերող հարցերը: Հոդվածում որոշակի քննարկման են արժանացել ինչպես իրավաբանական գրականության մեջ նշված հանցակազմի որակման խնդիրներին վերաբերող տեսակետները, այնպես էլ տարբեր հեղինակների արտահայտած կարծիքներն ու վերլուծությունները:

Հեղինակի կատարած ուսումնասիրությունների արդյունքներով՝ ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի բարեփոխումների և հափշտակությունների որակման համար:

Բանալի բառեր. հանցակազմ, գույք, առարկաների հափշտակություն, առանձնակի արժեք, որակում:

АРАИК АСЛАНЯН

Заместитель начальника отдела криминалистических исследований Экспертно-криминалистического управления Полиции РА, подполковник полиции, кандидат юридических наук

ХИЩЕНИЕ ПРЕДМЕТОВ, ИМЕЮЩИХ ОСОБУЮ ЦЕННОСТЬ

Автором были рассмотрены вопросы, касающиеся особенностей уголовно-правовой квалификации и сущности хищений предметов, имеющих особую ценность, как преступлений, направленных на собственность. В статье обсуждаются как точки зрения, касающиеся проблем определения состава преступления, указанного в правовой литературе, мнения и анализы разных авторов, так и правовые позиции относительно рассматриваемого вопроса.

В результате проведенных исследований автором были сделаны предложения, которые могут иметь важное значение для реформ Уголовного кодекса РА и квалификации преступлений по делам хищений.

Ключевые слова: состав преступления, имущество, хищение предметов, особая ценность, квалификация.

ARAYIK ASLANYAN

Candidate of Jurisprudence, Police Colonel and Deputy Head of the Subdivision of Criminal Scientific Researches of the Expert-Criminal Department of the RA Police

GRAB OF OBJECTS OF SEPARATE VALUE

Questions concerning to the criminal and legal essence and qualification of the peculiarities of grab as a crime against the property have become subject for discussion by the author. In the Article were discussed views concerning to the qualification issues of crime mentioned in the legal literature as well as opinions and analysis expressed by different authors.

In the result of study made by the author were represented suggestions which may be important for qualification of reforms and grabs of the RA Criminal Code.

Keywords: crime, property, grab of objects, separate value, qualification.

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ «ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական
կենտրոնի գիտական խորհրդատու,
ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՆԻ ԹԵՐՅԱՆ

ՀՀ «ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի սոցիոլոգ

ԳՈՎԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ «ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների
գիտահետազոտական կենտրոնի հոգեբան

**ՀՀ-ՈՒՄ ԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ)**

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել կանանց հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառ կամ պայման հանդիսացող գործոնները, ինչպես նաև ընտանիքի դերը հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմում: Հանցանք կատարելուց առաջ և դրա ընթացքում դատապարտյալի կողմից դրսևորվող վարքագծի վրա էական ազդեցություն կարող է ունենալ ընտանիքը, որը կարող է ինչպես նպաստել հանցանքի կատարմանը, այնպես էլ կարող է ձևավորել հանցավորի մեջ հանցանք կատարելու պատրաստակամություն կամ հեշտացնել հանցանքի կատարումը:

Բանալի բառեր. կին դատապարտյալներ, հանցագործություն, ընտանիք, ընտանեկան փոխհարաբերություններ, անբարենպաստ ազդեցություն:

АРМЕН ГУКАСЯН

Научный советник Научно-исследовательского центра
прикладных проблем криминологии при ГНКО
“Национальное бюро экспертиз” НАН РА,
начальник штаба Полиции РА, кандидат юридических наук, доцент

АНИ ТЕРЗЯН

социолог Научно-исследовательского центра
прикладных проблем криминологии при ГНКО
“Национальное бюро экспертиз” НАН РА

ԳՕՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

психолог Научно-исследовательского центра
прикладных проблем криминологии при ГНКО
“Национальное бюро экспертиз” НАН РА

**КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ НЕКОТОРЫХ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ
ОСУЖДЕННЫХ ЖЕНЩИН В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (РЕЗУЛЬТАТЫ ОПРОСА)**

В рамках данной статьи исследованы факторы, являющиеся причиной или условием женской преступности и ее отдельных видов, а также рассмотрена роль семьи в причинном механизме преступного поведения. Значительное влияние на поведение осужденного до совершения преступления, а также во время преступных действий, оказывает семья, которая может как способствовать совершению преступления, так и сформировать предрасположенность совершить преступление, а также облегчить его совершение.

Ключевые слова: осужденные женщины, преступление, семья, семейные взаимоотношения, неблагоприятное влияние.

ARMEN GHUKASYAN

Scientific adviser of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA, the head of Headquarters of the Police of RA, PHD (Doc. of legal science), associate professor

ANI TERZYAN

Sociologist of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA

GOHAR MANUKYAN

psychologist of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA

KEY ISSUES OF CLARIFYING SOME OF THE SOCIO-PSYCHOLOGICAL FEATURES OF FEMALE CONVICTS IN THE REPUBLIC OF ARMENIA (RESEARCH RESULTS)

This article is dedicated to research the factors contributing to the cause or condition of female criminality and its particular types, as well as the role of the family in the causal mechanism of criminal behavior. Family can have an essential influence on the behavior of the convict before committing a crime, as well as during criminal acts, which can contribute to both the commission of a crime and form a predisposition to commit a crime or facilitate its commission.

Keywords: female convictions, crime, family, family relations, unfavorable influence.

* * *

ԹԱՄԱՐԱ ՇԱԲԱՐՅԱՆ

ԵՆ և ԵՄ Երևանյան գրասենյակի ազգային փորձագետ, ՀՀ կառավարման ակադեմիայի և Արդարադատության ակադեմիայի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, արդարադատության առաջին դասի խորհրդական

ԻՆՆԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱՂԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հոդվածում ներկայացված են վարչական ակտի հարկադիր կատարման վարույթի առանձնահատկությունները, վարչական ակտի հասկացության դոկտրինալ և օրենսդրական սահմանումները, վարչական հարկադրանքի միջոցների կիրառման իրավական հիմքերը և այլն: Ներկայացված են հեղինակների կողմից առաջարկվող մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխմանը և իրավակիրառական պրակտիկայի ոլորտում առկա որոշ խնդիրների լուծմանը:

Բանալի բառեր. վարչական ակտ, վարչարարություն, վարչական հարկադրանք, վարչական վարույթ, հարկադիր կատարում, տուգանք, փոխարինող գործողություն:

ТАМАРА ШАКАРЯН

Национальный эксперт по программам Совета Европы и Евросоюза в Ереване, преподаватель Академии государственного управления и Академии юстиции РА, кандидат юридических наук, доцент, советник юстиции первого класса

ИННА НЕРСЕСЯН

Магистр юриспруденции

ПРАВОВЫЕ ВОПРОСЫ ПРИНУДИТЕЛЬНОГО ИСПОЛНЕНИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА

В данной статье представлены особенности принудительного исполнения административного акта, доктринальное и законодательное определение понятия административного акта, правовые основы применения мер административного принуждения и так далее. Представлены определенные предложения авторов по внесению изменений в законодательство Армении, которые направлены на улучшение армянской правовой системы, а также на разрешение проблем правоприменительной практики в области принудительного применения административного акта.

Ключевые слова: административный акт, административное принуждение, административный процесс, штраф.

TAMARA SHAKARYAN

Council of Europe and European Union legal expert,
Lecturer at the Justice Academy of RA and
at the Public Administration Academy of the RA,
First Class Councilor of Justice; PhD in Laws, associate professor in law

INNA NERSESYAN

Master of Law

LEGAL ISSUES OF ENFORCEMENT OF AN ADMINISTRATIVE ACT

This article presents the specifics of compulsory execution of an administrative act, the doctrinal and legislative definition of the concept of an administrative act, the legal basis for the application of administrative coercion measures and tat further.

This article presents certain suggestions of the authors on introducing amendments to Armenian legislation that are aimed at improving the Armenian legal system, as well as on resolving the problems of law enforcement practice in the field of enforcement of an administrative act.

Keywords: administrative act, administrative coercion, administrative process, penalty.

* * *

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական
ծառայության առաջատար մասնագետ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
իրավագիտություն և քաղաքագիտություն ամբիոնի ասիստենտ

ԿԱՐԵՆ ՂՈՆՋԱԿՈՒԼՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու,
Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի
տնտեսագիտական համալսարանի պետական
իրավունքի և քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
ՌԴ Նախագահին կից պետական ծառայության և
ժողովրդական տնտեսության Ռուսաստանի ակադեմիայի
պետական-իրավական առարկաների ամբիոնի դոցենտ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՎ ՄԵՂՔԸ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԻՉՄԱՅՈՎ

Հոդվածում քննարկվում են գիտնականների տեսական տեսակետները մեղքի հայեցակարգի և իրավաբանական անձի մեղքի որոշման խնդրահարույց կողմերի վերաբերյալ: Բացահայտվում են իրավունքի համակարգում և պատասխանատվության տեսությունների հիմնական տեսական եւ գործնական բախումները:

Բանալի բառեր. մեղք, պատասխանատվություն, իրավաբանական անձ, խնդրահարույց կողմեր:

АРШАК АРУТЮНЯН

кандидат юридических наук,
ассистент кафедры правоведения и политологии права
Армянского государственного экономического университета

КАРЕН КОНДЖАКУЛЯН

кандидат юридических наук, доцент кафедры
государственно-правовых и уголовно-правовых
дисциплин ФГБОУ ВО РЭУ им. Г.В. Плеханова,
доцент кафедры государственно-правовых
дисциплин ИГСУ РАНХиГС

ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО И ВИНА: ВОПРОСЫ СООТНОШЕНИЯ ПРАКТИКИ И ТЕОРИИ ЧЕРЕЗ ПРИЗМУ ОТВЕТСТВЕННОСТИ

В статье рассматриваются теоретические взгляды ученых на понятие вины и проблемные аспекты определения вины юридического лица. Выявлены основные теоретические и практические коллизии в системе права и теории ответственности.

Ключевые слова: вина, ответственность, юридическое лицо, проблемные аспекты.

ARSHAK HARUTYUNYAN

Candidate of legal Sciences, teaching assistant of the Chair of Political Science and Law, Armenian state University of economics(ASUE)

KAREN KONDZHAKULYAN

PhD, Assistant Professor of the Department for public law and criminal-law disciplines of the PRUE Assistant Professor of the Department for of state and legal disciplines of Institute of public administration and civil service (IPAM)

LEGAL ENTITY AND GUILT: THE RATIO OF PRACTICE AND THEORY THROUGH THE PRISM OF RESPONSIBILITY

The article discusses the theoretical views of scientists on the concept of guilt and the problematic aspects of determining the guilt of a legal entity. There are revealed main theoretical and practical collisions in the system of law and theories of responsibility.

Keywords: Guilt, responsibility, legal entity, problematic aspects.

* * *

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՊԵՏԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԵՐԻՑ

Տեսական վերլուծության արդյունքով, միավորելով բոլոր չորս միջանկյալ եզրակացությունները՝ որպես ազգային անվտանգության հատկանիշներ, կատանանք Հայաստանի պայմաններին տեսականորեն հարմարեցված «ազգային անվտանգություն» հասկացության հետևյալ սահմանումը. ազգային անվտանգությունն անհատի, հասարակության (ազգի), պետության, սփյուռքահայության կենսականորեն կարևոր շահերի, ներառյալ՝ սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությունն է իրական արտաքին ու ներքին, քաղաքական, իրավական, ռազմական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, տեղեկատվական և այլ բնույթի սպառնալիքներից՝ հասարակական ընդհանուր համակարգի բնականոն գործունեության, կայուն զարգացման ապահովման համար: Վերոգրյալ բնորոշման հիմքում ընկած են նաև ազգային անվտանգության որոշ հիմնական հասկացությունները:

Բանալի բառեր. ազգային անվտանգություն, օբյեկտ, ազգ, սփյուռքահայություն, կայուն զարգացում, սահմանադրական կարգեր, կենսականորեն կարևոր շահ, սպառնալիք, վտանգ:

АНДРАНИК ГЕВОРГЯН

Аспирант Института философии, социологии и права НАН РА

ПЕРЕОСМЫСЛЕНИЕ НЕКОТОРЫХ ОСНОВНЫХ ПОНЯТИЙ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ С ПОЗИЦИИ ГОСУДАРСТВОВЕДЕНИЯ И АРМЯНСКИХ РЕАЛИЙ

На основе теоретического анализа в статье раскрывается понятие национальной безопасности, которое имеет государственно-правовые основы и соответствует реалиям Армении: национальная безопасность - это защита жизненно важных интересов личности, общества (нации), государства, включая основы конституционного строя и армянской диаспоры, от реально внешних и внутренних, политических, правовых, военных, экономических, социальных, экологических, информационных и иных угроз, для функционирования общей общественной системы и для обеспечения устойчивого развития. На основе этого понятия сталкиваются также некоторые основные понятия национальной безопасности.

Ключевые слова: национальная безопасность, объект, нация, диаспора, устойчивое развитие, конституционный строй, жизненно важный интерес, угроза, опасность.

ANDRANIK GEVORGYAN

Ph.D. student at the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

RECONSIDERATION OF MAIN DEFINITIONS OF NATIONAL SECURITY THEORY FROM THE POSITION OF STATE SCIENCE AND ARMENIAN REALITIES

Through the theoretical analysis in the article the author gives definition of national security based on state-legal grounds and also armenian national features. Thus, the national security is the protection of individual, society(nation), state, Armenian diaspora and constitutional order basics from internal and external, political, legal, military, economic, social, ecological, informational threats. The author states that the aim of such protection is normal operation and stable development of general public system. Based on above mentioned definition we push several main definitons of national security.

Keywords: national security, object, nation, diaspora, stable development, constitutional order, vital interest, threat, danger.

* * *

ԱՐՄԵՆ ԿԱՐԵՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
իրավագիտության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դասախոս

ԱՆՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
իրավագիտության ամբիոնի մագիստրոս

ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքը նվիրված է խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացման կարգի առանձնահատկություններին: Աշխատանքում հանգամանորեն ուսումնասիրվել է խոշոր գործարք կնքելու մասին որոշման կայացման կարգը, անդրադարձ է կատարվել որոշման կայացման հարցում տնտեսական ընկերությունների կառավարման մարմինների փոխհարաբերություններին, վեր են հանվել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները, ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը, և խոշոր գործարքի ինստիտուտի կատարելագործման նպատակով առաջարկվել են հնարավոր իրավական լուծումներ:

Բանալի բառեր. խոշոր գործարք, բաժնետիրական ընկերություն, տնտեսական ընկերություն, կառավարման մարմին, էական պայման, ակտիվների հաշվեկշռային արժեք:

АРМЕН КАРЕЯН

АГПУ имени Хачатура Абовяна,
кафедры закона и его методики
преподавания, лектор

АНУШ МОВСИСЯН

Национальная академия наук,
Международный научно-образовательный центр,
юридический факультет, магистр

ПОРЯДОК И ОСОБЕННОСТИ ПРИНЯТИЯ РЕШЕНИЯ О ЗАКЛЮЧЕНИИ КРУПНОЙ СДЕЛКИ

Работа посвящена особенностям порядка принятия решения о заключении крупной сделки. Эта работа была тщательно изучена в процессе принятия решения о заключении крупной сделки, затронув взаимоотношения между руководящими органами экономических компаний, поднятые в этой области вопросы, изучался международный опыт и предлагались возможные юридические решения для улучшения института крупной сделки.

Ключевые слова: крупная сделка, акционерное общество, хозяйственная компания, руководящий орган, существенное условие, балансовая стоимость активов.

ARMEN KAREYAN

After Khachatur Abovyan ASPU, law and his chair teaching methods, Lecturer

ANUSH MOYSISYAN

National Academy of Sciences
International Scientific-Educational Center
Faculty of Law, Master

ORDER AND FEATURES OF DECISION-MAKING ABOUT THE CONCLUSION OF A MAJOR TRANSACTION

The article is devoted to the specifics of the procedure for concluding of decision of a major transaction. This article thoroughly investigates the process of making a decision to conclude a major transaction, touches on the relationships between the governing bodies of commercial organisations raised during making such decision, studies international experience and proposes suggests possible legal solutions to improve the institution of a major transaction.

Keywords: major transaction, joint-stock company, commercial organisations, governing body, essential condition, book value of assets.

* * *

ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, հայցորդ

ՊՐԵՏՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԵԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Սույն գիտական հոդվածում ներկայացվում է պրետորների արտոնությունների շարքը Հին Հռոմում: Դիտարկվում է պրետորների իրավաստեղծ գործունեությունը և Հռոմի մասնավոր իրավունքի վրա դրա ազդեցությունը: Նկարագրվում է Հռոմի մասնավոր իրավունքից պայմանականորեն առանձնացող պրետորական իրավունքի համակարգը, որը ներկայումս համարվում է ժամանակակից նախադեպային իրավունքի սկզբնաղբյուրը:

Միաժամանակ՝ ուսումնասիրվում է Հռոմի մասնավոր իրավունքի և համազգային իրավունքի միաձուլման ընթացքը: Անդրադարձ է կատարվում նաև սովորական (ընդհանուր) իրավունքին:

Նկարագրվում են պրետորների էղիկտներում բովանդակվող իրավունքի նորմերը, դրանց դերը և վեճերի լուծման համար նշանակությունը:

Բանալի բառեր. Հռոմի մասնավոր իրավունք, պրետորներ, էղիկտներ, պրետորի արտոնություններ, համազգային իրավունք, ընդհանուր իրավունք:

АННА АКОБЯН

НАН РА, институт философии, социологии и права, соискатель

ВЛИЯНИЕ ПРЕТОРСКОГО ПРАВА НА РАЗВИТИЕ РИМСКОГО ЧАСТНОГО ПРАВА

В данной научной статье представлен ряд привилегий преторов в Древнем Риме. Рассматривается правотворческая деятельность преторов и ее влияние на римское частное право. Описывается система преторского права, условно отделенная от римского частного права, которая в настоящее время считается первоисточником современного прецедентного права.

Одновременно изучается процесс слияния римского частного права и общенационального права. Также затронута обычное (общее) право.

Описаны правовые нормы, содержащиеся в преторских эдиктах, их роль и значение при решении судебных споров.

Ключевые слова: римское частное право, преторы, эдикты, привилегии претора, общенациональное право, общее право.

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 109 2019

ANNA HAKOBYAN

NAS RA, Institute of Philosophy, Sociology and Law,
applicant

THE IMPACT OF THE PRAETORIAN LAW ON THE DEVELOPMENT OF ROMAN PRIVATE LAW

This scientific article presents the series of praetors' privileges in ancient Rome. The law-making activity of the praetors and its influence on the private law of Rome are observed. There is described a praetorian law system, which is conditionally separated from Rome's private law and is currently considered a provenance of the modern case law.

At the same time, the process of merging Rome's private law and international law has been examined. Reference is also made to the ordinary (common) law.

The legal norms contained in the praetors' edicts, the role and the significance for dispute solution of latters has been described.

Keywords: Roman private law, praetors, edicts, praetor's privileges, international law, common law.

ՀՀ ԳՍՏԱՆՏԱՅՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԴԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: